



ԱՐԱՄԱՅԻՍ
(ՄԻՍԱԿ ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ)

ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱԴՐԸ

(ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(26 ապրիլի — 26 հուլիսի 1919 թ.)

Գրքը տպագրվում է բառեզործական նպատակով: Ստացված շահույթը կհատկացվի Արցախի ավերված քաղաքների և գյուղերի վերականգնմանը:

Գրքի տպագրության ծախսերը հատուցել է ՀՀ առևտրի նախարարության «Հայկոպտառ» մեծածախ առևտրական բազան: Տնօրեն՝ Ս. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ձեռագրի տարբերակները համեմատել, խմբագրել, առաջաբանը գրել, ծանոթագրել ու տպագրության են պատրաստել պատմ. գիտ. քեկեմոն Հ. Բ. ԱՐՐԱ-ՀԱՄՅԱՆԸ Լ Բ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան)

Ա 880 Ղարաբաղի տաղնապը: (Պատմության համար): Օրագրություն (26 ապրիլի — 26 հուլիսի 1919 թ.):— Եր.: Հայաստան, 1993, 118 էջ:

Օրագրությունը բնօրրոգողն է ներկայացնում Արցախի ազգային-ազատագրական պայքարի ծանր ու մղձավանջային ժամանակներից մեկի՝ 1919 թ. ապրիլ — հուլիս ամիսների պատմությունը: Պատմական Հայաստանի քնորրաններից մեկի՝ Արցախի հայությունը կտրված ու շրջափակված լինելով բոլոր կողմերից, մեն-մենակ մնալով մուսավաթական Ադրբեջանի զորքերի և անգլիական իմպերիալիստների դիվանագիտական մեքենայությունների դեմ, ստիպված էր կենսացմահու պայքարի մեջ մտնել իր անկախությունը, ազգային արժանապատվությունը պահելու, մայր Հայաստանի կազմում մնալու համար: Այդ ամենը բարեխղճությամբ իր օրագրում շարադրում է դեպքերի ու իրադարձությունների ակնհաստեսը՝ Արամայիսը:

0508020918
2 հայտարարված
761 (01) - 98

ԱՌՍՁԱԲԱՆ

Գրող ու հրատարակախոս, քաղաքական աննկուն գործիչ Արամայիսը՝ Միսակ Գաբրիելի Տեր-Դանիելյանը, իր ուրույն տեղն ունի XIX դարի վերջի և XX դարի շուրջ կեսդարյա հայ գրական-մշակութային, հասարակական-քաղաքական կյանքում: Նա հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին նվիրված մարտիկ էր:

Արամայիսի հասարակական-քաղաքական ու գրական հայացքները ձևավորվել են մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, մանավանդ Արևմտյան Հայաստանում, գնալով լայն ծավալ էր ստանում:

Միսակ Տեր-Դանիելյանը ունեցել է շուրջ քսան ծածկանուն՝ Արամայիս, Մահիկ, Մատադոր, Արամ, Կարո, Գյուղացի, Մանյան, Գնտունի և այլն: Նրա ստեղծագործությունները տպագրվել են «Նոր դար», «Մշակ», «Աղբյուր», «Տարագ», «Մուրճ», «Գործ», «Նոր խոսք», «Առողջապահիկ թերթ», «Խաթաբալա», «Բաքվի ձայն», «Արև», «Արեգ», «Դրոշակ», «Հատաչ», «Հորիզոն», «Այիք», «Կովկասյան ուսանող», «Խարիսխ», «Փայլակ», «Ժայռ», «Ապստամ», «Կոմունիստ» և այլ պարբերականներում ու հանդեսներում: Առանձնապես գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում նրա «Փշոտ ճանապարհին», «Գաղափարի ճանապարհին», «Ազատության արշալույսին», «Զարհուրելի ոճիրը» և տպագիր ու անտիպ այլ ստեղծագործություններ: Նրա «Զարհուրելի ոճիրը» փաստագրական վեպը, որ լույս է տեսել առաջին աշխարհամարտի տարիներին, թարգմանվել ու հրատարակվել է ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով:

Արամայիսն ունեցել է ծանր ու ողբերգական ճակատագիր: Նա մեծ հայրենասեր էր, հայ ժողովրդի ցավերով տառապող գործիչ: Կարողալով նրա տպագիր և անտիպ գոր-

ծերը, զարմանալ կարելի է այդ գործչի անասանման աշխատասիրության, քելուն գրչի, հարազատ ժողովրդի հոգսերին ու ցավերին այդքան մոտ լինելու, պաշարի ծանրություններն իր վրա վերցնելու պատրաստակամության, կրած տառապանքների և բնավորության այլ հատկանիշների վրա:

Արամայիսը ծնվել է 1874 թ. հուլիսի 17-ին Արցախի Փիրջամալ գյուղում, քահանայի ընտանիքում: Մանկուց զրկվելով հորից, դաստիարակվել է ավագ եղբոր՝ Դանիելի խնամքի ներքո, որը հայրենի գյուղի ծխական դպրոցի ուսուցիչ էր: 1885-րն ընդունվում է Շուշիի թեմական դպրոցը: Ուսումնասիրության տարիներին հրապուրվում է հայ գրողների, առանձնապես Ռաֆֆու հայրենասիրական երկերով: 1889 թվականից տպագրվում են նրա բանաստեղծությունները, պոեմները, պատմվածքները, վեպերն ու վիպակները, ակնարկները, հուշագրությունները, հոդվածները:

1891-ին մահանում է Արամայիսի ավագ եղբայրը, որն ընտանիքի միակ կերակրողն էր: 17-ամյա Արամայիսը ստիպված թողնում է ուսումը և հանապազօրյա հաց վաստակելու ու բազմանդամ ընտանիքի խնամքը հոգալու համար մեկնում Բաքու: Սկզբում աշխատում է Բալախանիի նավթահանքերում որպես սևագործ բանվոր, ապա տեղափոխվում գրասենյակային աշխատանքի: 1893—96 թթ., որոշ ընդհատումներով, նա աշխատում է նաև Աշխաբադում, իր ազգական Միրզա Դանիելյանի գրասենյակում:

Պետերբուրգի համալսարանի ուսանող, հնչակ կուսակցության անդամ Մարտիրոս Սարոխանյանը (Մարտիկ) 90-ական թվականների կեսերին Բաքվում ստեղծում է մի ջոկատ՝ Արաքսի մյուս ափն անցնելու և արևմտահայության ազգային-ազատագրական պայքարին սատար կանգնելու համար: Ջոկատին, որի անդամները հիմնականում արցախցիներ էին, անդամագրվում է նաև Արամայիսը: Ջոկատը հերոսաբար մարտնչում է Արաքսի հովտում, Վանում, Արտոսի բարձունքներում, Շատախում, Մոկան լեռներում և այլուր:

Արամայիսը Բաքու է վերադառնում ոտքից վիրավորված: Ստիպված է լինում ապաքինվել, որի ընթացքում զբաղվում է ինքնակրթությամբ: Միտինգներում, ժողովներում, զանա-

զան հանդիպումներում ու հավաքություններում ներկայացնում է թուրքական իշխանությունների գազանային վարվելակերպը հայ խաղաղ բնակչության նկատմամբ:

Ցարական ինքնակալության կողմից 1905—1906 թթ. Անդրկովկասում հրահրված ազգամիջյան ընդհարումների օրերին Արամայիսն տեսնում ենք հայրենի Արցախում՝ իր հայրենակիցների ինքնապաշտպանության գործի գլուխ անցած՝: 1907 թ. Թիֆլիսում լույս է տեսնում «Մի քանի գլուխ հայ-թուրքական ընդհարումներից» նրա հուշագիրքը, որտեղ նկարագրվում է այդ պայքարը:

Հետագա տարիները Արամայիսի համար ստեղծագործական քեղմնավոր շրջան հանդիսացան: Նա հաճախակի էր հանդիպում Լեոյի, Ստեփան Շահումյանի, Կնուկյանց եղբայրների և մշակութային, հասարակական ու քաղաքական այլ գործիչների հետ: 1813 թ. Արամայիսն անդամագրվում է Հայ գրողների կովկասյան ընկերությանը, իսկ 1920-ին՝ Հայաստանի գրչի աշխատողների միությանը:

Առաջին աշխարհամարտը, որ կործանարար էր հատկապես հայ ժողովրդի համար, չափազանց ծանր է անդրադառնում Արամայիսի վրա: Բաքվում, Արցախում և Չանգեզուրում, ուր այդ տարիներին նա հաճախ էր շրջագայում, հանդես էր գալիս ժողովրդի առջև, հավաքներում և ինքնապաշտպանության նախապատրաստման կոչ անում՝ հայրենասիրության կայծ վառելով հայության սրտերում:

Սկսած 1917 թվականից, երբ Հայոց ազգային խորհուրդներ են ստեղծվում Բաքվում, Թիֆլիսում, Շուշիում և այլուր, Արամայիսը, ընդգրկված լինելով Բաքվի Հայոց Ազգային խորհրդի կազմում, ակտիվորեն ներգրավվում է արցախահայության ազգային-ազատագրական պայքարի մեջ, հրապարակայնորեն մերկայացնում Արցախը Ադրբեջանին բռնակցելու թուրք-թաթարական զավթողական պլանները:

Քաղաքացիական պատերազմի տարիներին Արամայիսը լինում է և Հյուսիսային Կովկասում, որտեղ ծավալում է քաղաքական աշխատանք: Նա 1920 թ. գարնանը վերադառնում է Բաքու, սակայն մի խումբ հայ քաղաքական գործիչների հետ ձերբակալվում և նետվում է Բայիդուկի բանտը: Բանտային դաժան ռեժիմն ու նվաստացումները չեն ընկճում Արա-

մայիսին: Պակասը լրացնում է թուրք խուժանը, որը հարվում հրդեհում է նրա բնակարանը, ոչնչացնում ողջ գրադարանն ու ձեռագրերը: Մի կերպ ազատվելով բանտից, նա տեղափոխվում է Սուխում և տեղի հայկական դպրոցում, մինչև 1923 թվականը, աշխատում իբրև գրականության ու պատմության ուսուցիչ:

1924—36 թթ. Արամայիսին կրկին տեսնում ենք հարվում որպես «Կոմունիստ» թերթի թարգմանիչ: Այդ տարիներին նույն թերթի էջերում տպագրվում են նրա երկու հարյուրի հասնող հոդվածները, ֆելիետոնները, պատմվածքները, «Փոթորկոտ տարին» դրաման և այլն: 1936-ին հարվում հրատարակության է հանձնվում Արամայիսի «Խուլիզանը» բարոյաբարդաբանական վիպակը: Սակայն որոշ ժամանակ անց տպարանում ցրում են վիպակի շարվածքը, հեղինակին դառնակցական հորջորջում, իսկ գրքի խմբագիր Եղիա Չուրբրին՝ «ժողովրդի թշնամի» և Աղասի Խանջյանի «դաշնակից»:

Անցնելով կենսաթոշակի, Արամայիսը շարունակում է աշխատել «Վարդոտ գյուղի հովիտը» գրքի վրա: 40-ական թվականների երկրորդ կեսին հրատարակվում են Արամայիսի «Գանձասար», «Մետրոպոլիտ Բաղդասար», «Արխիմեոդրիտ Ստեփան» և ուրույն հետաքրքրություններ կայացնող պատմական այլ հոդվածներ:

1949 թվականը հայ ժողովրդի համար ողբերգական եղավ. պայթեց սուալին-բաղիրովյան ժամանակաշրջանի դաժանությունների նոր ալիքը: Հունիսի 13-ի և լույս 14-ի գիշերը բազմահազար հայ ընտանիքների հետ Աթթայի երկրամաս արքայապետիցին նաև 77-ամյա Արամայիսը, նրա տղան, հարսը և երկու թոռնիկները: Արամայիսը, ծանր տանելով արքայի հետ կապված նկատագրումներն ու նեղությունները, իր մահկանացուն կնքեց 1954 թ. հունիսի 5-ին Աթթայի երկրամասի Պարֆինովսկի շրջանի Տուպչիխա ավանում, 80 տարեկան հասակում: 14 տարի հետո, 1970 թ. սեպտեմբերի 4-ին, Խորհրդային Ադրբեջանի գերագույն դատարանը վերանայում է Միսակ Տեր-Դանիելյանի գործը և նրան արդարացնում՝ «հանցանշանների բացակայության և մեղադրանքը չհաստատվելու» հիմնավորումով:

Արամայիսի ստեղծագործությունների մեջ ուրույն արժեք ունի ստորև հրատարակվող «Ղարաբաղի տազնապը» նոթեր-օրագիրը, որը խիստ այժմեական է, ասես արցախյան վերջին հինգ տարիների իրադարձությունների նկարագրությունն է՝ գրի առնված 74 տարի առաջ:

1919 թ. ապրիլին, հաքվի Հայոց Ազգային խորհրդի հանձնարարությամբ, Արամայիսը մեկնում է Արցախ՝ ներգրավվելու արցախահայության ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման գործում: Մինչև հուլիսի սկիզբը նա մնում է այնտեղ և տանում կազմակերպական բավականին աշխատանք: 1919 թ. հունիսի վերջին հրավիրված արցախահայության վեցերորդ համագումարը որոշում է Արամայիսի գլխավորությամբ մի հանձնաժողով ուղարկել հաքու՝ Արցախի հարցի խաղաղ կարգավորման համար բանակցություններ վարելու մուսավաթական Ադրբեջանի կառավարության հետ: Բանակցություններն ավարտելուց հետո, նույն թվականի հուլիսի վերջին, Արամայիսը մեկնում է Երևան և արդյունքների մասին անձամբ զեկուցում Հայաստանի կառավարությանն ու ՀՀ Դաշնակցության բյուրոյին:

Արամայիսը այդ ժամանակաշրջանի համար պահել է օրագիր, ուր բարեխղճորեն շարադրել է 1919 թ. ապրիլ-հուլիս ամիսներին Արցախում տեղի ունեցած իրադարձությունները: Նույն թվականի հոկտեմբերին նա իր օրագրի զգալի մասը ուղարկում է Լեռին՝ «Ղարաբաղի տրագեդիան (համառոտ նյութեր պատմության համար)» վերնագրով: Օրագրի մի տարբերակը հայտնաբերեցինք Հայաստանի գիտությունների ակադեմիան ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվում՝ Լեռնի ֆոնդում, երբ ուսումնասիրում էինք անվանի պատմաբանի արխիվային փաստաթղթերը: Սակայն այլ արխիվներում կատարված նոր որոնումները մեզ համոզեցին, որ Լեռնին ուղարկված օրագրի այդ տարբերակը Արամայիսի ձեռագիրը չէ: Բացի այդ, արխիվային մեկ այլ փաստաթղթից հայտնի դարձավ, որ տակավին 1934 թ. Արամայիսը իր օրագիրը Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային (այժմ՝ ազգային) գրադարանի տնօրեն Ա. Մարտիկյանի և գրականագետ Խ. Մարգարյանի միջոցով հաքվից ուղարկել է Երևան: Հեղինակի ցանկությամբ ծրարը, որի մեջ գտնվում

էր ձեռագիրը, պետք է բացվեր տասը տարի հետո: Մեկ այլ փաստաթղթից էլ հայտնի դարձավ, որ 1937 թ. հոկտեմբերի 27-ին կուսպատիճատիտուտ է ուղարկվել «Լեռնային Ղարաբաղի դաշնակցական Ազգային խորհրդի անդամ Տեր-Դանիելյան Միսակի օրագիրը»: Այս փաստը մեզ հուշեց, որ օրագիրը պետք է որոնել Հայաստանի կոմկուսի արխիվում: Այստեղ կատարած որոնումները պասկվեցին հաջողությամբ, քանզի այդ գործում մեզ օգնեց այդ արխիվի ֆոնդերի քաջ գիտակ, պատմական գիտությունների թեկնածու Ամատունի Վիրաբյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Ստալինյան բռնապետության ժամանակաշրջանի ղեկավարներից մեկի ձեռքով օրագրի տիտղոսաթերթի վրա գրված է՝ «Դաշնակ հեղինակը քարոզում է Ղարաբաղի անկախությունը Ադրբեջանից և շուրհիստական թույնով հայհոյում է Ադրբեջանի աշխատավորությանը»:

Ընթերցողն, ինչ խոսք, կարդալով օրագիրը, կհամոզվի, որ Արամայիսը ոչ թե հայհոյում է Ադրբեջանի աշխատավորներին, այլ մերկացնում է մուսավաթական պարագլուխներին և Բաքու մտած անգլիական դաշնակիցներին, որոնք ամեն կերպ ձգտում էին ընկճել ազատ, անկախ և մաքր Հայաստանի կազմում ապրելու արցախահայության ձգտումները և Արցախը բռնակցել Ադրբեջանին:

Ինչպես հայտնի է, անգլիական իմպերիալիստները, Եռյակ դաշինքի պարտությունից հետո ուղեղով Անդրկովկաս, այս երկրամասի և Բաքվի նավթի հարցում ունեին հեռագնա իրենց ստրատեգիական պլանները և, ահա թե ինչու, հակված էին սիրաշահելու մուսավաթական Ադրբեջանի կառավարող շրջաններին և ընդատաշ գնալու նրանց զավթողական ցանկություններին:

Արցախի հայությունը, կտրված ու շրջափակված լինելով բոլոր կողմերից, մեծ-մեծակ մնալով մուսավաթական Ադրբեջանի գործերի և անգլիական իմպերիալիստների դիվանագիտական մեքենայությունների դեմ, ստիպված էր կենսամահու պայքարի մեջ մտնել մայր Հայաստանի կազմում մնալու համար: Արամայիսի այս հուշագրությունը այդ դեպքերի՝ իր տեսածի ու լսածի հավաստի վկայություններ են:

Ես մտադիր էի Ղարաբաղի վերջին ժամանակաշրջանի պատմությունը գրել և այդ ուղղութիւնում էլ աշխատում էի, բայց 1919 թվի օգոստոսի 17-ին Քիֆլիսում պարզվեց, որ Ղարաբաղի Հայրենակցական միութեան լիազորները հավաքում են բոլոր նյութերը մի ամբողջական պատմություն տալու համար: Թեև համոզված էի, որ այդ լավ նախաձեռնությունը անավարտ է մնալու, ինչպես և դրա նման շատ-շատերը, այնուամենայնիվ, որոշեցի շխանգարել, նրանց հանգիստ թողնել, սակայն գրի առնել իմ հիշողություններն օրագրական կարգով, մտածելով, որ այդ ևս կարող է նյութ ծառայել Ղարաբաղի ողբերգությունը պարզաբանելու խընդրում:

1919 թ. ապրիլի 26 (նոր տոմարով)

Ղարաբաղի Հայրենակցական միութեան Բաքվի բաժնի կողմից և դաշնակցութեան հրահանգով այսօր հասել եմ Եվլախ կայարան, գնում եմ Շուշի՝ Ազգային խորհրդի և այլ գործերի մասնակցելու: Ճանապարհը մինչև Շուշի վտանգավոր է համարվում և այդ պատճառով ես և մի ուրիշ հայ երիտասարդ աշխատեցինք անգլիացիների ավտոմոբիլով գնալ, որը և հաջողվեց: Առավոտյան ժամը 7-ին նստելով հնդկ վարորդի կողքին, ճանապարհ ընկա դեպի Շուշի:

Բարդան անցնելով, այն ավտոմոբիլը, որի մեջ ես էի նստած, կանգ առավ Քարթառ գետի ափին, որովհետև գետը վարարած էր և սպասեց մյուսի գալուն, որպեսզի գոմեշի սալից կապեն ու անցկացնեն մյուս ափը: Վարորդը հրացանը թողնելով ինձ մոտ և նշաններով ցույց տալով, որ շթողնեմ ոչ ոքի հրացանին ձեռք տալ, մի կողմ հեռացավ: Այդ միջոցին մի խմբակ (10—12 հոգուց բաղկացած նոր զորակոչի գնացող թուրք ասկյարներ) մոտեցավ ավտոմոբիլին: Ասկյարներից մեկը ձեռքը մեկնեց հնդկի հրացանին, ես ձեռ-

քըս դրեցի վրան, ասելով՝ «Հնդիկը պատվիրել է ոչ ոքի շթող-
նել հրացանը վերցնելու»: Նորակոչ ասկյարը, ատելությամբ
լի հայացքն ինձ վրա հասելով, հրացանը դուրս շանթեց ու
բղավեց վայրենուն հատուկ ձայնով:

— Անհավատ հայ... այս բուպեիս արյունդ կթափեմ...
բատմաստք*. օյինսըզ...

Թուրքին հատուկ բնավորությունն էր արտահայտվում
այդտեղ. պետք է հայհոյել, ստորացնել հային, որովհետև
այդ բուպեին հայն անպաշտպան է, թույլ, ինքը՝ ուժեղ և շըր-
ջապատված յուրայիններով:

Միջամտեց մի ուրիշ թուրք:

— Դուք պատգամավո՞ր եք, — հարցրեց նա ուսերեն:

Այդ օրերին Շուշիում V համագումարն² էր տեղի
ունենում և երևի թուրքը ենթադրում էր, որ թերևս նա էլ այդ
համագումարին եմ գնում:

— Ո՛չ, — պատասխանեցի նա:

— Ասացե՛ք, խնդրեմ, ի՞նչ է ուզում Դաշնակցությունը
Ղարաբաղից, — շարունակեց թուրքը դարձյալ ուսերեն, —
ինչո՞ւ է նա Ադրբեյջանի անբաժան մասը կազմող Ղարաբաղն
անջատել ցանկանում: Չէ՞ որ այդ դեպքում ոչ մի հայ չենք
թողնի ամբողջ Ղարաբաղում:

— Չգիտեմ, նա դաշնակցական չեմ, բայց...

— Հապա ի՞նչ կուսակցության եք պատկանում, — ընդ-
հատեց նա:

— Ոչ մի կուսակցության... Ես առևտրական մարդ եմ:

— Ավելի լավ. հայ առևտրականներն ավելի խելոք են
մտածում, և դուք անվերջ պետք է կովեք դաշնակցության
դեմ, նրան վերջապես հեռացնելու ասպարեզից, ներկա դեպ-
քում՝ Ղարաբաղից: Ղարաբաղում եթե արյունահեղություն լի-
նի, պատճառն այդ կուսակցությունն է:

Եվ ինչո՞ւ ոչ մուսավաթը կամ Ադրբեյջանը մեծից մինչև
փոքրը, այդ մասին հարցնելն ավելորդ էր:

Տեղ հասավ և երկրորդ ավտոմոբիլը. այնտեղ նստած
հայն ասաց, որ Բարդաշի տակ թուրքերն իրենց վրա հրա-
ցան են քաշել և իր մոտ նստած անգլիացին պատմել է, որ

այդ գիշերը նույն շրջանում 9 տարեկան մի հայ աղջնակի են
բռնաբարել:

Գոմեշներն ավտոմոբիլներն անցկացրին մյուս ափը: Ժա-
մը 2-ին հասանք Աղդամ, որտեղ պատահեցինք թուրքերի
համար աշխատող հայ որմնադիրներին:

Գիշերը պետք է մնայինք Աղդամում, այդպես էր կառա-
պանի կամքը: Ուստի իջևանեցինք մի հայի պանդոկում: Ծա-
նոթ հայեր պատահեցին այդտեղ: Նրանցից մեկը տեսել էր
ինձ, մյուսներին էլ իմաց արել... ու մեկ-մեկ հավաքվում
էին մոտ՝ տեղեկություններ իմանալու դրսի աշխարհից:
Իմացածս նրանց հաղորդելով՝ նա էլ տեղեկացա, որ դրու-
թյունն անհանգիստ է, կոտորածը անխուսափելի, որովհետև
թուրքերը շարունակ հայհոյում են հայերին և սպառնում, թե
կկոտորեն բոլորին, եթե Ադրբեյջանը չընդունեն: Իմացա, որ
V համագումարը Շուշիում դեռ շարունակվում է, և լուր կա,
որ համագումարը մերժել է Ադրբեյջանն ընդունելը, որի պատ-
ճառով թրքությունը շափազանց զրգոված է: Ցանկանալով օր
առաջ հասնել Շուշի, կանչեցի նոր վարձած կառապանին
(ավտոմոբիլը մնալու էր Աղդամում) և խնդրեցի այդ օրը
ճանապարհվել Շուշի: Նա մերժեց, ասելով, թե գիշերով ճա-
նապարհ գնալը վտանգավոր է, առավոտյան վաղ կշարժվեն:

Ապրիլի 27

Լույսը նոր բացված՝ Աղդամ իջնող հայ գյուղացիների
տուտը բացվեց: Նրանք գալիս էին անվերջ շարաններով: Կա-
ին և մեծ թվով կանայք՝ ոտարորիկ, ցնցոտիներով: Ով էր
տեսել, որ հայ կինը Աղդամ գար գնումներ անելու, բայց
այժմ սովն ստիպում էր, և նրանք եկել էին որը քսակով, որը
խուրջինով, կամ մի քանի հոգի՝ մի էջ վարձած: Շուտով
պարզվեց, որ թուրքերը տնտեսական բոլկոտ են հայտարա-
րել և հայերին ոչինչ չեն տալիս. ով կարող էր, ծածուկ մի
իշ բան էր առնում ու շտապում Աղդամը թողնել, որովհետև
Թնուրտը լարված էր. հավանական է համագումարը պինդ
որ կանգնած իր տեսակետին: Աղդամում շուտով մի բան էլ
պարզվեց. այս կամ այն թուրքը խլում էր հայի ձեռքից նրա
շըր, ձին կամ եզը, պնդելով, որ իրենն է եղել ու հայը ժամա-

* Պատահել է, անհավատ, խաբերա:

Վարչաճյուղերից բխող բոլոր հրամաններն ու նախաձեռնությունները պետք է կատարվեն առանց հապաղումների. անգլիական հրամանատարությունը լիակատար պաշտպանություն պետք է ցույց տա բոլոր օրինական նախաձեռնություններին:

Բաքվի անգլիական ուժերի հրամանատար՝ գնդապետ Գ. Շատելվորտ: 3 ապրիլի 1919 թ., Բաքու:

«Դաշնակից» Անգլիայի ներկայացուցչի այս հայտարարությունը ժամանակին արժանավոր պատասխան էր ստացել հայ մամուլի ու բոլոր օրգանների կողմից, բայց անգլիական Բաքվի միսիան ձեռք չէր քաշում և այժմ V համագումարը վերջին անգամ պետք է պատասխաներ հատուկ այդ նպատակով Շուշի եկած Շատելվորտին, որը ներկա դեպքում ավելի ադրբեջանական մի հզոր ազնետ էր, քան մեր «դաշնակից» Անգլիայի ներկայացուցիչ:

Դեռ ապրիլի 23-ին V համագումարը տվել էր իր պատասխանը, որը փակցված էր Շուշվա գլխավոր փողոցների պատերին: Ահա այն.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Գ. ՇԱՏԵԼՎՈՐՏԻՆ

Կատարելապես դեմ չլինելով մեր հարևան Թուրք ժողովրդի ինքնորոշմանը և ելնելով այն բանից, որ բոլոր տարածքային վիճելի հարցերը պետք է իրենց վերջնական լուծումը ստանան խաղաղարար կոնֆերանսում, Ղարաբաղի հայությունը ինքնորոշման նույնպիսի իրավունք վերապահում է և իրեն:

Ղարաբաղի հայության վրա Ադրբեջանի գեներալ-նահանգապետության իշխանությունը տարածելու նկրտումների առթիվ Ղարաբաղի հայության V համագումարը անհրաժեշտ է համարում հայտնել, որ Ադրբեջանը միշտ աջակից և գործակից է եղել Տաճկաստանի կողմից ընդհանրապես հայերի և մասնավորապես Ղարաբաղի հայության դեմ ուղղված գազանություններին, որպիսին մնում է և այժմ:

Ադրբեջանը, ինչպես միշտ, այնպես էլ այժմ, կողմնակից է տաճկական կողմնորոշմանը:

Տաճիկներին Անդրկովկաս է հրավիրել Ադրբեջանը: Նա է ամեն կերպ նպաստել պատերազմական ճակատի թիկունքում կատարված ստոր դավաճանությունը, որի հետևանքով կազմալուծվել է Անդրկովկասը և որը հնարավորություն է տվել տաճիկներին... մուտքը մեր երկրամասի խորքերը: Այդ «պետությունը» դեռևս չի դադարել երազել տաճիկների այստեղ վերադառնալու մասին և շարունակում է սխտեմատիկաբար հալածել հայերին:

Տնտեսական այն բոյկոտը, որ կյանքի մեջ է մտցված տաճկական փաշաների այստեղ գալուց ի վեր, Ադրբեջանի կառավարությունը հայերին ճնշելու համար դարձրել է պետական սխտեմ:

Ավազակությունը, թալանը, մարդասպանությունը, ճանապարհների ատանձին հայերի «որսալը» համարվում են նորմալ միջոցներ Ադրբեջանի նպատակների իրականացման համար:

Այդ բոլոր բռնությունները կատարվում են այն ժամանակ, երբ Ղարաբաղի հայությունը դեռևս չի ենթարկված այդ կառավարությանը, երբ դեռ մեր կողքին կանգնած են հզոր Անգլիայի ներկայացուցիչները, որոնք կոչված են պաշտպանելու մեզ:

Մենք համոզված ենք, որ արդի Ադրբեջանը իր մեծ եղբոր՝ Տաճկաստանի օրինակին հետևելով, ձգտում է բնաջնջել հայերին որպես միակ կուլտուրական և դեպի Եվրոպան և ոչ թե դեպի Արևելք ձգտող ժողովրդի, մանավանդ Ղարաբաղի հայերին, որոնք մինչև հիմա պաշտպանել են իրենց ազատությունը և դեռևս չեն ենթարկվել ավերածություն ու բարբարոսությունների:

Բացի դրանից, համագումարը գտնում է, որ Ղարաբաղի հայության քաղաքական, պատմական, կուլտուր-իրավական և մանավանդ տնտեսական պայմանները չեն կարող ոչ մի դեպքում հիմք ծառայել հայ ժողովրդի շլինքին փաթաթելու Ադրբեջանի թեկուզ ժամանակավոր իշխանության վարչական ձևը:

Այդ ամենի հիման վրա Ղարաբաղի հայության V համագումարը անհնարին է համարում ընդունել Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ իշխանության վարչական ձև:

Ինչ վերաբերում է ճանապարհների հաղորդակցութեան վերականգնմանը, համագումարի տեսակետով դա ոչ մի առնչություն չունի Ադրբեջանի գեներալ-նահանգապետութեան իշխանութիւնը ճանաչելու հետ, որովհետեւ Անդրկովկասի հաղորդակցութեան բոլոր ճանապարհների ազատ երթևեկութեան ապահովումը կենսական անհրաժեշտութիւն է Անդրկովկասի համար, որը իրենից մի տնտեսական ամբողջութիւն է ներկայացնում:

Մենք համոզված ենք, որ տնտեսական նորմալ կենցաղի համար Անգլիայի կողմից Անդրկովկասում հաստատվող խաղաղութիւնը մեր երկրամասում կստեղծի այդ անհրաժեշտ պայմանները:

Քոչի հարցը բարեհաշող լուծում է ստացել Հայկական Ղարաբաղի սահմաններում դեռ այն ժամանակ, երբ Ղարաբաղը պաշարված էր տաճկա-ադրբեջանական հրոսակախմբերով՝ Բաքվի դեմ սկսած վերջիններիս արշավանքի օրերին:

Այդ հարցը ներկայումս չէր ունենա այն սրութիւնը, եթե Ղարաբաղի հայութեանը բռնի կերպով շտրպելին ճանաչել Ադրբեջանի իշխանութիւնը:

Ընդամին, ներկայացնելով համագումարի պատգամավորների միաձայն ընդունած և բոլորի կողմից ստորագրված մերժում-բանաձևը Ադրբեջանի գեներալ-նահանգապետութեան ժամանակավոր իշխանութիւնը ճանաչելու մասին, Ղարաբաղի V համագումարը հայտնում է, որ նա իր որոշումը հիմնել է իրեն ընտրող ժողովրդի անհողողող ու հաստատուն կամքի վրա, որում անգլիական հրամանատարութիւնը եթե կամենա, կարող է համոզվել համաժողովրդական հանրաքվեի (ոսֆերենդում) միջոցով:

Միանգամայն պարզ գիտակցելով, որ նման կարևոր քաղաքական հարցերի լուծման ժամանակ շարժական մեծ նշանակութիւն և ուժ ունեն կուլտուր-տնտեսական գործոնները, V համագումարը խորապես համոզված է, որ Մեծ Բրիտանիան, հանձին իր կովկասյան հրամանատարութեան, բռնի կերպով չի ստիպի ընդունել Ադրբեջանի խանական լուծը, որը աներևակայելի տանջանքներով ու զոհերի գնով հայութիւնը դնել է շարտել դեռ հարյուր տարի առաջ:

Ղարաբաղի հայութեան V համագումարը երկրորդ անգամ լսելով գեն. Շատելվորտի հրամայական պահանջը՝ ընդունել Ադրբեջանի իշխանութիւնը, և քննելով այն շարժառիթները, որոնցով պայմանավորված է այդ պահանջը, այնուամենայնիվ, միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Ղարաբաղի ամբողջ հայութեան անհողողող կամքով, որին դավաճանել ոչ մի դեպքում չեն ուզում և չեն կարող համագումարի անդամները, և որոնք ոչ մի պատասխանատվութիւն չեն կարող վերցնել իրենց վրա Ադրբեջանի իշխանութեան բռնի հաստատման հետևանքով գալիք արյունոտ փորձութիւնների համար:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲՈՒՐ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՋԱՅՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՋԵՎԸ

Ղարաբաղի հայութեան V համագումարը 1919 թ. ապրիլի 23-ին իր անպաշտոն նիստում լսելով անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչ գեներալ Շատելվորտի Ղարաբաղի ժամանակավոր իշխանութեան վարչական ծրագիրը և այն քննելով նույն համագումարի ապրիլի 24-ի պաշտոնական նիստում, որ ոչ է ց.

1. Միանգամայն կողմնակից և ծարավի է կարգի ու խաղաղութեան վերահաստատմանը Ղարաբաղում:

2. Բոլոր ցանկութեամբ և անկեղծութեամբ ընդառաջ գնալով անգլիական հրամանատարութեան առաջարկին՝ խաղաղ բարեկամական հարաբերութիւն պահպանել հարևան թուրք ժողովրդի հետ, որը միշտ էլ իրագործել է Ղարաբաղի հայութիւնը:

3. Ի նկատի ունենալով, որ Ղարաբաղի վերաբերյալ տարածքային սահմանային հարցերը պետք է վերջնական լուծում ստանան խաղաղարար կոնֆերանսում, ինչպես ինքը գեներալ Շատելվորտը հայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայութեան հինգերորդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում համագումարին պատգամավորներ ուղարկած Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկութեանը և կենսական շահերին, ինչպիսի համախոսականներ և Ղարաբաղի տաղանայր

գրավոր հրամայական մանդատներ տվել է նա իր ընտրած պատգամավորներին:

Համագումարը անընդունելի է համարում Ադրբեջանի հետ անշուքյուն ունեցող որևէ վարչական ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կյանքի մեջ համարում է անխուսափելի պատճառ՝ ստեղծելու ազգամիջյան լուրջ խռովություններ ու արյունահեղություններ, որի պատասխանատվությունը իր վրա վերցնել ոչ մի դեպքում չի կարող Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը:

Ստորագրել են դիվանի ամբողջ կազմն ու 48 պատգամավորներ:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ V

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

24 ապրիլի 1919 թ., Շուշի

Այս պատասխանը զայրացնում է գեներալ Շատելվորտին, որ ներկա էր եղել համագումարին, ուր եկել էր և գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը: Շատելվորտն ասել էր. «Ի նկատի ունեցե՞ք, որ ձեր ճանապարհները կարող են փակել, այն ժամանակ դուք որտեղի՞ց մթերք կստանաք, ինչպե՞ս կպահպանեք հազորակցություն արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսական բոլորտ հայտարարել, կարո՞ղ եք առանց հացի ապրել: Եվ եթե հուզված, զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել»:

Շատելվորտը այդ հարցերը տալով, կարծես թե, միևնույն ժամանակ սովորեցնում էր Ադրբեջանին, թե ինչ պետք է անել Ղարաբաղը հպատակեցնելու համար: Թեև այդ հարցերից բնականաբար բխում էր պատասխանը՝ թե երբ, իբր, այդ բոլորը պետք է կատարվի անգլիական հրամանատարության ներկայությամբ, այդ դեպքում էլ ինչ անհրաժեշտ է ձեր ներկայությունը:

Համագումարից հարց են տալիս. «Եթե մերժենք հպատակությունը, ինչպես որ մերժել ենք, այն ժամանակ կոտորածներ կլինեն»: Շատելվորտը պատասխանում է, թե կոտորածներ ոչ մի դեպքում թույլ չեն տրվի, սակայն, միևնույն է, Ղարաբաղը պետք է ենթարկվի Ադրբեջանին:

Շատելվորտի այս պատասխանն էլ իր մեջ չափազանց վտանգավոր միտք էր պարունակում. լսողն, անշուշտ, պետք

է իրեն հաշիվ տար, թե՛ եթե կոտորածներ չեն կարող տեղի ունենալ, էլ ինչու՞ ենթարկվեն Ադրբեջանին, որ անունն անգամ լսել չեն ուզում:

Շատելվորտը հայտարարելով, որ Ղարաբաղում ոչ մի Ազգային խորհուրդ ընդունել չի կարող, թողնում է ու հեռանում Սուլթանովի հետ տեսակցելուց հետո: Նրանց «ասած-խոսածը» մնում է գաղտնիք: Իսկ այդ գաղտնիքի փոխարեն՝ մյուս կողմից պարզ նկատվում է, որ համագումարի որոշումը գրգռել է թուրք բեկերին, իսկ նրանց միջոցով էլ՝ թուրքական զանգվածներին:

Ապրիլի 28

Համագումարը պատրաստվում էր ցրվելու, երբ կեսօրից հետո Բաքվից Շուշի եկավ Հայաստանի Հանրապետության Վերվորական ներկայացուցիչ Միշա Արզումանյանը՝ անգլիական միսիային կից լինելու: Շուշուց Շատելվորտի հեռագրական պահանջով Արզումանյանը պետք է Բաքվում մնար այնքան, մինչև որ Շատելվորտը իր «սրբազան» միսիան վերջացնելով՝ վերադառնար Բաքու: Այժմ նա վերադարձել էր և Արզումանյանին երևի թույլ տվել Շուշի գնալ:

Արզումանյանն ինձ ասաց, որ իրեն պարզապես հայտնի է, որ իր ներկայացուցիչ նշանակելու դեմ Սուլթանովն Ադրբեջանի կառավարության միջոցով բողոքել է ու խնդրել, որ այդ հայտնի դաշնակցականին մերժեն ու նշանակեն ուրիշի: Երևի հենց այդ էր եղել պատճառը, որ Արզումանյանին Շատելվորտը չէր թողել ժամանակին Շուշի հասնել, զգուշանալով, որ նա կարող էր այս կամ այն ձևով ազդել համագումարի տրամադրության վրա, հակառակ գեներալի ու Սուլթանովի ցանկության:

Արզումանյանը գալիս է համագումարի վերջին՝ անպաշտոն նիստին և խոսում իր գալու նպատակների մասին, հայտնում, որ իր միսիան քաղաքական չէ, այլ այս կամ այն կերպ պետք է աշխատի անգլիական միսիայի միջոցով սոված հարկի դրույթները մեղմացնել ու ավազակություններին վերջ տալ: Իսկ համագումարի որոշումների համար նկատում է, թե՛ նա չեմ ասում, որ լավ եք արել, երբ չեք ընդունել Ադրբեջանի իշխանությունը և չեմ էլ ասում, թե վատ եք արել, որ

չեք ընդունել. այդ ձեր կամքն է, միայն պետք է ասեմ, որ ժողովրդի ազատ, առանց ճնշման տակ կատարած ակտը սուրբ է, դա ժողովրդի կամքն է, որ արտահայտվել է և սըրբությամբ էլ պետք է պահպանել մինչև վերջ»:

Ապրիլի 29

Քեկ Շատելվորտը հայտարարել էր, որ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի⁸ գոյությունն այլևս ընդունել չի կարող, և անգլիական միսիան ոչ մի հարաբերության մեջ չպիտի մտնի նրա հետ, և չնայելով, որ Ազգային խորհուրդը ցրված էր համարվում ու նրա անդամները առանձնապես վտանգված, այնուամենայնիվ, Ազգային խորհուրդը շարունակում էր անլիգալ կերպով իր գործը վարել, թեև, իհարկե, ոչ բեղմնավոր կերպով, որովհետև միսիային ծանոթացնել շատ նոգործերի, հնարավոր չէր:

Խորհրդի անդամներն էին. Եղիշե Իշխանյան՝ դաշնակց[ական], Աշոտ Մելիք-Հովսեփյան, Տիգրան Տեր-Գրիգորյան՝ սոց.-դեմոկրատներ, Հրանտ Բահաթրյան, Գրիգորեկ Մինասրեկյան՝ ժողովրդական կուսակցության պատկանողներ, Ասլան Շահնազարյան՝ անկուսակցական, և ես, որ Բաքվից եկել էի Ղարաբաղի հայրենակցական միությունների կողմից:

Այդ 2-3 օրը գործերին փոքր-ինչ ծանոթանալով, ամենից առաջ նկատեցի, որ Ազգային խորհրդում բոլոր խնդիրների վերաբերյալ կատարյալ համերաշխություն է տիրում, լինելով գերագույն մարմին համագումարի կամակատար խորհուրդը այն տեսակետին է, որ Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է, որ ձգձգողական քաղաքականությունը պետք է շարունակել, մինչև որ արտաքին աշխարհում Ղարաբաղի խնդիրը դրական լուծում ստանա, թեև բոլորն էլ գաղտնի կերպով խոստովանում են, որ Ղարաբաղի դրությունը շատ է փափուկ, քանի որ Հայաստանը միայն պլատոնական ցանկություններ է հայտնում:

Մի ուրիշ բան էլ էր նկատվում, որ Ազգային խորհուրդի ամբողջ ուժերով աշխատում էր, որ հայ-թուրքական ընդհարումները չլինեն: Հայ-թուրքական հարաբերություններն այդ միջոցներում արտաքուստ իբրև թե լավ էին, բայց ներքուստ

շատ վատ էին ու կասկածելի: Թուրքերը խուսափում էին հայկական գյուղերը գալուց, հայերն էլ՝ նրանց, և թուրք ավազակները շարունակ հայերի հետևից «որսորդություն» էին անում: Բացի այդ, Աղզամում կամ քաղաքի թուրքական մասում բռնում էին այս կամ այն հայի ձին կամ եզը, սուտ վկաներով հաստատում, որ ապրանքն իրենցն է ու քշում-տանում: Հայի բողոքն անգլիական միսիայում կամ Ադրբեջանի իշխանությունում մնում էր անհետևանք:

Միշտ այսօր պաշտոնական տեսակցություն է ունենում անգլիական միսիայի ներկայացուցչի հետ: Այնտեղ կտրուկ կերպով հայտնում են, որ Հայաստանի կառավարությունն ընդունել է Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա, ուստի և Արզումանյանը պետք է նպաստի, որ այդ իշխանությունը տարածվի Ղարաբաղում առանց ցավերի: Միշտ իր զարմանքն է հայտնում այդ առթիվ ու պատասխանում, թե ինքը նոր է վերադարձել և իր կառավարությունը, ընդհակառակը, Ղարաբաղն իր անբաժան մասն է համարում: Երբ միսիան պնդում է, Միշտն ասում է, որ ինքը միայն մի բան կարող է անել՝ հեռագրել իր կառավարությանն ու նրա պատասխանն իմանալ: Միսիան համաձայնում է և այդ բովանդակությամբ մի հեռագիր է ուղարկվում Երևան:

Միսիայի պահանջը և կտրուկ հայտարարելը, թե Ղարաբաղը պետք է ենթարկվի Ադրբեջանին, քանի որ Հայաստանն էլ ընդունել է այդ, չափազանց ճնշող ազդեցություն թողեց մեզ վրա, մանավանդ «դաշնակից» Անգլիայի այդ ավելի քան ուշադիր վերաբերմունքը դեպի Ադրբեջանը:

Ապրիլի 30

Այսօր առավոտյան Դիզակի շրջանի հրամանատարի օգնականից ստացվեց մի շտապ հաղորդագրություն, թե թուրքերը մեծ ուժերով հարձակվել են Դուլանլար հայկական գյուղի վրա և երրորդ օրն է, որ կռիվը շարունակվում է:

Այդ հարձակումը պատասխան էր համագումարի որոշման, թե Ադրբեջանը ճանաչել չեն ուզում, և նախանշան, որ հարձակումներն այսուհետև սիստեմատիկ են դառնալու՝ անպաշտպան, ամեն կողմից կտրված Ղարաբաղի համառությունը կոտրելու համար:

Պետք է սակ, որ անգլիացիները Ղարաբաղ մտնելով, փաստորեն տեսել են, որ հայկական մասերում գործում են ու գոյութուն ունեն հրամանատարություններ՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն և Զիվանշիր. այդ հրամանատարություններն էլ ընդունում էր միսիան, թեև մյուս կողմից էլ նպաստում էր, որ Սուլթանովը հետզհետե խորանա Հայկական Ղարաբաղի սրտում:

Որովհետև Ազգային խորհուրդը, իբրև չճանաչված մարմին, դիմել չէր կարող, ուստի հրամանատարի օգնականի հաղորդագրության մի օրինակը, որ հասցեագրված էր միսիային, անմիջապես ուղարկվեց այնտեղ, իսկ Միշան էլ գնում է պարզելու, թե ինչ են մտադիր անելու անգլիացիները, առաջն առնելու են այդ դավերի, թե՞ չէ: Միևնույն ժամանակ Ազգային խորհուրդը կարգադրում է, որ հարկավոր է օգնությունը հասցվի շտաբից (Դոնավարզ գյուղում)⁹:

Միշան երեկոյան գալիս է ու հայտնում, որ միսիան որոշել է վաղն Ընթ մարդ ուղարկել Սոկրատ բեկի հետ դեպքերի վայրը՝ տեղնուտեղը ստուգելու, թե ինչ է կատարվում Դոնանլարի շուրջը:

Նույն գիշեր Դիզակի շրջանի հրամանատար Արտեմ Լալայանին կարգադրվեց, որ նա իսկույն անցնի Դիզակ և անձամբ ղեկավարի ինքնապաշտպանությունը: Լալայանն անմիջապես ճանապարհվեց իր թիկնապահներով:

Մայիսի 1

Անգլիական միսիայի կարգադրությամբ միսիայի թարգման ոուս օֆիցեր Մասլեննիկովը Սոկրատ բեկ Շահնազարյանի, որ դեռ Վարանդայի հրամանատար էր համարվում, ընկերակցությամբ ու նրա մի քանի զինվորների ուղեկցությամբ ճանապարհվում է դեպի Դոնանլար: Առաջին անգամ էր, որ անգլիական միսիան մի դրական քայլ էր անում՝ ստեղծված դրությունը պարզելու:

Նույն այդ օրն էլ Միշան անգլիական միսիայի ներկայացուցչի հետ ավտոմոբիլով ճանապարհվում է Գորիս՝ քոչի խնդիրը հարթելու: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Զանգեզուրը բացարձակապես մերժել էր քոչը բաց

թողնել իր սահմաններից ներս, և այդ հանգամանքը զայրացրել էր մեր «դաշնակից» անգլիացիներին: Նրանք չէին կարողանում հանդուրժել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը համառորեն պնդում են Հայաստանին պատկանելու ցանկություն վրա:

Գտնելով, որ քոչի խնդիրը կարող է բարդություններ առաջացնել, իսկ Ղարաբաղը բավականաչափ ուժ չունի թշնամուն դիմադրելու, ցանկանում էինք հաշտությամբ լուծել քոչի հարցը Զանգեզուրում, մանավանդ որ Հայաստանը կատարելապես լուռ էր Ղարաբաղի պահանջների դիմաց:

Մայիսի 2

Կեսօրին Դիզակի հրամանատար Լալայանից տեղեկություն ստացվեց, որ Դոնանլարի վրա կատարվող հարձակումները վերջնականապես հետ են մղված:

Երեկոյան դեմ էլ վերադարձավ Մասլեննիկովը Սոկրատ բեկի հետ, և այժմ միայն պարզվեց նրանց հետ գալու պատճառը: Երբ Սոկրատը Մասլեննիկովի հետ մոտենում է Դիզակի սահմաններին, այդտեղ նրանց ճանապարհը փակում է Արտեմ Լալայանը 30 ձիավորներով ու կարմիր դրոշակով և հայտնում, որ Սոկրատ բեկին չի կարող թույլ տալ անցնել Դիզակի սահմանները, որ հրամանատարն այնտեղ ինքն է և որ միայն Մասլեննիկովը կարող է [հրամայել] իր տրամադրության տակ [գտնվող] 30 ձիավորներին՝ իրեն հանձնարարված գործը վերջացնելու համար:

Մասլեննիկովը հրաժարվում է առաջարկված ծառայությունից, հայտնելով, որ ինքն առանց Սոկրատ բեկի առաջ չի գնա. անգլիական ներկայացուցիչը սովոր չէր կարմիր դրոշակի տակ շարժվելու:

Մայիսի 4

Միշան վերադարձավ Գորիսից: Նրա հայտնած տեղեկությունները ճշտող էին: Գորիսի անգլիական միսիայի գլխավոր Տաուզենդի բռնած դիրքը զարմացնել միայն կարող էր. նա և Շուշուց գնացած անգլիական միսիայի ներկայացուցիչները Միշային համարյա «պատվավոր» բանտարկության մեջ են

պահել. թույլ չեն տվել, որ նա տեսակցի Ազգային խորհրդի կամ Հայաստանի ներկայացուցիչ Արսեն Շահմազյանի հետ¹⁰, որպեսզի կարողանար նրանց հետ խոսել քոչի մասին: Անգլիացիները դիմել են [Ջանգեզուրի] Ազգային խորհրդին ու պահանջել, որ քոչը բաց թողնեն, բայց Ազգային խորհուրդը բացեիբաց մերժել է, հենվելով համազումարի¹¹ կամֆի վրա: Այդ մերժումը վատ է ազդել «գաշնակիցների» վրա, որոնք նորից պնդել են ու նորից պատասխան ստացել, թե քոչը բաց թողնել, նշանակում է Ջանգեզուրի թիկունքն անց կացնել զինված թշնամի տարր, որը հարմար ընդհանրապես Ջանգեզուրը կարող է մեծապես վտանգել. ո՛չ քոչը բաց կթողնեն, ո՛չ էլ Ադրբեջանի մասին լսել անգամ կուզեն, իսկ եթե Ջանգեզուրի ազատության դեմ ոտնձգություններ լինեն, նրանք կկոպեն, որ կողմից էլ լինի ոտնձգությունը:

Այդ պատասխանից հետո անգլիացիները պահանջում են Շահմազյանին, որպեսզի նրան տանեն Շուշի, այնտեղից «ապահով» ուղարկեն Եվլախ-Երևան: Դրան էլ պատասխանում են, թե Շահմազյանը Հայաստանի ներկայացուցիչն է, այժմ Գորիսում չի գտնվում, և եթե նա Երևան գնալու լինի, ապա Ջանգեզուրից Երևան անցնելն ավելի ապահով է ու դյուրին, քան Շուշի-Եվլախից՝ Երևան:

Միշտին Գորիս ճանապարհելիս պատվիրել էինք, որ Հայաստանից Ղարաբաղի համար ուղարկված և ամիսների ընթացքում այնտեղ պահված մեր մեկ միլիոն երկու հարյուր հազար ուրբիլի բերի, քանի որ նստած ենք առանց փողի՝ մինչդեռ Սուլթանովը Ղարաբաղ է մտել 25 միլիոն ուրբիլով, նրա համար բաց է արված անասման վարկ Ադրբեջանի գանձարանում, այն դեպքում, երբ Ղարաբաղը նվաճելու համար զանազան նշանավոր կետերում զինական բռունցքներ է պատրաստում: Բավական չէ, որ մեզ օգնելու աղաղակները չեն հասնում Հայաստանի կառավարության ականջին, դեռ մեր փողերն էլ Ջանգեզուրում ընկած՝ չեն ուղարկում, չնայելով դիմումներին: Իսկ փողի որպիսի՝ սոսկալի կարիք կա: Այդ բոլորից հետո Միշան եկավ հայտնեց, թե՝ «փողը չտվեցին, ասելով, որ թուղթ չենք տվել», մինչդեռ մեր լիազոր Մ. Ծալանը, մինչև իմ Շուշի գնալը, դեռ Գորիսում՝ իր հետ վերցրել էր համապատասխան թղթերը...

Օրըստօրե դրուժունը ծանրանում է. ալան-թալանը շարունակում չունի, հայերը շունչ քաշել չեն կարողանում: Բողոքագրերով, գանգատներով ծանրաբեռնվել է Ազգային խորհրդի գրասեղանը: Ծարտարի շրջանից հայտնում են, որ թուրքերը գիշերները ծայրագյուղերի այգիներից հանում են նորատունկ ծառերն ու շրջած դիրքով տնկում: Որովհետև Ազգային խորհուրդն անմիջապես հարաբերություն մեջ մտնել չէր կարող անգլիական միսիայի հետ, գանգատները Միշան է ներկայացնում այնտեղ կամ հենց ժողովրդական ներկայացուցիչները, բայց ոչ մի հետևանք, կամ պատասխանում են թե՝ «դիմեցե՛ք գեներալ-գուբերնատոր Սուլթանովին», կամ ասում են, թե «Սուլթանովին կգրենք այդ մասին» ու միշտ, գրավոր կամ բերանացի ավելացնում՝ «Յուրաքանչյուր ակտիվ քայլ, ուղղված Ադրբեջանի դեմ, կհամարվի ուղղված անգլիական Մեծ Բրիտանիայի կառավարության դեմ...»: Այսպիսի պայմաններում ի՞նչ անել, մենք էլ չգիտեինք: Մի բան միայն պարզ էր, որ Հայաստանի կառավարությունը վերջապես պետք է իր ձեռքն առներ Ղարաբաղի դատը և ուժեղ կերպով, դիվանագիտական ճանապարհներով կամ այլ կերպ լուծեր այդ ծանր խնդիրը:

Այսօր մի քանի նորություններ եղան Շուշիում: Առաջինն այն էր, որ փաստ դարձան մի քանի օր շարունակ պատվող այն լուրերը, թե Շուշի է գալիս ամերիկական միսիա՝ հայերին օգնություն հասցնելու մեծ ծրագրով: Դրոշակներով ու բարեմաղթություններով դիմավորեցին բարեգործ հյուրերին, նրանց ասածներից երևում էր, որ իսկապես շատ բան ունեն կատարելու Ղարաբաղում:

Երկրորդն այն էր, որ լուր տարածվեց, թե Սուլթանովը կարգադրել է, որ գանձարանը հայկական մասից տեղափոխեն թուրքական մասը: Այդ լուրը մեծ հուզում էր առաջացրել հայերի մեջ, որովհետև՝ ա) գրեթե բոլոր ծառայողները հայեր էին. բ) բոլոր արժեքավոր թղթերի 95%-ը (600 000 ուրբիլ) պատկանում էր հայերին, ինչպես և 3 000 000 ուրբիլի խնայողական դրամարկղի գումարը. գ) ինվենտարը հայերի ծախքով էր ձեռք բերված և դ) եթե գանձարանը տեղա-

փոխվեր թուրքական մասը, հայերից ո՞վ պետք է հանդգներ այնտեղ գնալու:

Երրորդն այն էր, որ Զանգեզուրի մերժմանն իբրև հետեւանք, Սուլթանովը անգլիական միսիայի հետ խորհրդակցելով, որոշել է տափաստանի բոլոր քոչը տեղավորել Ղարաբաղի սահմաններում, այսինքն՝ Ղարաբաղը ենթարկել «մորեխի» ավերածության, որովհետև անասունները մորեխի պես Ղարաբաղի հայության արտն ու խոտը պետք է ոչնչացնեն, իսկ ավազակաբարո տարրը զինված քոչվորներին միացած՝ Ղարաբաղի հայությանը պետք է մորթեր:

Իսկ չորրորդն էլ այն էր, որ իրիկնադեմին մոտ 15 զինված ասկյարներ, ձեռքի ումբերը գոտիները խրած՝ եկան հայկական մաս ու զանձարանի ներսն ու դուրսը զբաղեցրին: Արտեմ Լալայանը, որ իր թիկնապահներով, առանց թույլտվություն ստանալու, Շուշի էր եկել, մի քանի զինվորների ու տեղական զինված մի խմբի հետ մտավ Ազգային խորհրդի շենքը, պահանջելով, որ թույլ տրվի այդ ասկյարներին զինաթափ անել ու գրավել զանձարանը: Ազգային խորհուրդը արտակարգ նիստ գումարելով, քննության առավ այդ խնդիրը: Բայց ինչ քննություն, քանի որ դեռ սկզբից էլ այդպիսի բան ի նկատի էինք ունեցել ու գտել, որ նույնիսկ եթե զանձարանը տեղափոխեն թուրքական մասը, դարձյալ լուռ պետք է մնանք, մինչև որ շունենանք այն, ինչին հենված կարող լինեինք մեր իրավունքը պաշտպանել: 15 հոգուն զինաթափ անելը շատ հեշտ էր: Իսկ հետևանքը... Կարո՞ղ էինք 70 հոգով և պահեստում ունեցած փամփուշտի ողորմելի պաշարով դուրս գալ Սուլթանովի գնդացիների, թնդանոթների, զորքերի ու զինված ամբոխի դեմ և Շուշին պաշտպանել... Իսկ Շուշիում մեր ձեռքի տակ միայն 70 զինված երիտասարդներ ունեինք, պահեստում էլ՝ ... 400 փամփուշտ: Հարկավոր էր պասսիվ դիմադրություն և ձգձգողական քաղաքականություն: Այդ նպատակով էլ զինվորներին հանգստացրինք և Արզումանյանի հետ խորհրդակցելով, վերջինիս ուղարկեցինք անգլիական միսիա, որ հասկացնի այնտեղ, թե այսպես շարունակել չի կարելի, ժողովուրդը շփազանց գրգռված է, կարող են էքսցեսներ պատահել, եթե զանձարանի պահակները շվերցվեն: Միշային պատասխանում են, որ այդ հարցով իրենք խոսել

են Սուլթանովի հետ և Սուլթանովը պատասխանել է, թե՛ «զանձարանում պահվում են Ադրբեջանի կառավարության մեծաքանակ գումարները, և այդ գումարների պահպանումը միայն իրենց ասկյարներին կարող են վստահել...»: Այդպիսով էլ խնդիրը փակվել է, ցույց տալով մեր անկարողությունն ու անելանելի դրությունը:

Մայիսի 6

Անակնկալ... Սուլթանովը դիմել է անգլիական միսիային, թե հայկական մասում անարխիային (") վերջ տալու համար կարևոր է համարում այնտեղ Ադրբեջանի ասկյարներից շրջիկ պահակներ դնել: Միսիայում հասկացրել են, որ այդպիսի փորձերն առանց այլևայլության արյունահեղությամբ կվերջանան, թե միսիան էլ կվկայի, որ հայկական մասում անարխիստ չկա, և Սուլթանովը լավ կանի, որ ամենից առաջ վերջ տա ոչ միայն Շուշվա թուրքական մասի, այլև իր նահանգապետության ամբողջ սահմաններում տիրող անարխիային:

Պահակներ դնելու փորձը շարվեց, և շիմացանք, անգլիական միսիան էր խորհուրդ տվել, որ այդպիսի բան շարվի, թե՛ Սուլթանովն էր [դա] վաղաժամ համարել:

Մայիսի 7

Տնտեսական բոյկոտը թեև ոչ ամբողջ թափով, բայց և այնպես զգալի կերպով առաջ է գնում՝ հայերին դնելով նեղ դրուժյան մեջ: Ղարաբաղի հայությունը պատերազմի¹² բռնոր արհավիրքները տանելուց հետո վերջում էլ ենթարկվել էր տաճկա-ադրբեջանական ներխուժմանը, բայց սոված, խոտ առածելով, կարողացել էր իր քաղաքական ազատությունը պաշտպանել այնքան, մինչև որ անգլիացիները եկել էին¹³ ու խանդավառությամբ ընդունվել հայերի կողմից, որովհետև ընդհանուր համոզմունքն այնպես էր, որ անգլիացիների մուտքով կվերջանան հայկական տառապանքները: Սակայն այժմ հակառակն էր ստացվում. թշնամի Ադրբեջանը կուշտ էր, լավ զինված ու առանձին հոգատարություն առարկա անգլիացիների կողմից, իսկ դաշնակից հայերը դարձյալ սոված, անզեն ու ենթակա Ադրբեջանի ու անգլիական հրամանատարության

ճնշման, այդ բոլորի հետ էլ՝ բոլկոտ, որ չափազանց նեղ դրության մեջ էր դնում հայերին:

Ազգային խորհուրդը իր այսօրվա ժողովում դառնապես բողոքեց Հայաստանի կառավարութան դեմ: «Ի՞նչ է նշանակում սա,— հարցնում է խորհուրդը,— ամիսների ընթացքում Հայաստանից ոչ մի օգնություն չստացանք, ոչ մի հատիկ փամփուշտ չհասցրին ժամանակին, նույնիսկ փող էլ չեն ուղարկում բավարար չափով, որ կարողանանք այստեղ գնումներ անել: Մենք հազար ու մի ձևով կարողանում ենք տեղեկություններ ուղարկել Ձանգեզուր ու Երևան, իսկ այնտեղից մինչև այսօր կտրված ենք. ի՞նչ է կատարվում դրսում, ի՞նչ քայլեր են արվում արտաքին աշխարհում Ղարաբաղի վերաբերյալ, ոչ մի լուր չունենք, բացի այն, որ երբեմն-երբեմն միայն ապսպրում են, թե «պինդ կացե՛ք»: Առանց այդ էլ մենք պինդ ենք կանգնած, բայց մինչև ե՛րբ, կարո՞ղ ենք այսպես երկար շարունակել, երբ չկա փող, չկա ռազմամթերք»:

Ապա որոշվեց դարձյալ որևէ ձևով մեր դրության մասին տեղեկություններ ուղարկել Հայաստան, իսկ բոլկոտի վերաբերյալ՝ ժողովրդին մղել դեպի անգլիական միսիա, եթե էլ հնար չլինի որևէ մթերք ձեռք բերելու:

Իրիկնադեմին Սուլթանովի ստորագրութամբ՝ պատերին հայտարարություններ են փակցվում, որ Խանքենդում թընդանոթներից փորձնական կրակ են բաց անելու, «թող ժողովուրդը շնուզվի»: Այդ հայտարարություններն անմիջապես վերացվեցին հայերի ձեռքով:

Մայիսի 8

Միշտան Երևանից հեռագիր ստացավ, ի պատասխան իր հեռագրական հարցի, Ղարաբաղի վերաբերյալ, ստորագրված էր՝ «Գենեբալնի-քարտուղար Տեր-Հակոբյանց» և գրված էր, թե Հայաստանի կառավարությունը երբե՛ք, ո՛չ մի տեղ և ո՛չ ոքի ոչ մի խոստում չի տվել¹⁴: Դրանով հերքվում էր Շատելվորտի պնդումը, թե Հայաստանը զիջել է Ղարաբաղն Ազրբեջանին: Բայց մի՞թե Շատելվորտն այդքան նվիրված աշխատում էր Ազրբեջանի համար. և դա, արդյոք, ի՞ր քաղա-

պկանությունն էր, թե՞ անգլիական կառավարության: Հասանալ չէինք կարողանում:

Ամերիկական միսիան սկսել է իր գործունեությունը, սա-այն նա էլ է անտեսում Ազգային խորհուրդն ու չի ուզում քրծել համագումարից ընտրված երեք անձնավորություննե-ի հետ, որոնք պետք է հատկապես մասնակցեին փողի և սրբի բաշխման գործին, ուր, ինչպես ասում էին, մինչև այդ պակի զեղծումներ էին կատարվել սովամահ լինող գաղ-պկանության և ժողովրդի հաշվին:

Ամերիկական միսիան «ումբակոծվում է» «ДОНОС»-ներով՝ անստորագիր նամակներով, որտեղ ցեխտովում ու մրոտում են թե՛ Ազգային խորհուրդը, թե՛ ընտրված երեք անձ-ավորությունները և թե՛ առհասարակ բոլորը, որովհետև մենքը միմյանց դեմ որոգայթներ են լարում, որպեսզի ենք կարողանան գաղթականական կարկանդակին մոտ տեղ լավել:

Միսիան գլուխը կորցրել է և չի իմանում, թե ինչ անի: րանց հասկացրինք, որ եթե գլուխներն ուզում են գտնել, պա թող գործի հրավիրեն ամբողջ «Ղարաբաղի հայության րան V համագումարից ընտրվածներին», քանի որ ժողու-րդն իր վստահության քվեն նրանց է տվել: Բայց ամերի-ցցիները դեռ «մտածում» են... մեզ թվում է, որ այստեղ րտաքին մի ճնշում կա:

Մայիսի 9

Երեկ Խանքենդում ծիծաղելի մի դեպք է պատահել, որի նրամասնություններն այսօր մեզ հայտնեցին: Գեպը-տեյալն է:

Իրիկնադեմին Փահլուլ և Կրկժան գյուղի տավարները րից իջնում են գյուղ: Եվ որովհետև լեռնուղով իջնելուց-անք պետք է մեկ-մեկ, միմյանց հետևից շարվեին, ուստի-երեկոյան մթնշաղի մեջ ստացվում է մի երկար քարավանի-րան: Խանքենդի ասկյարներից մի քանիսն այդ պատկերը-սնելով, ինչ-որ պատճառով ենթադրում է, թե դա հայկա-ն կավալերիա է, որ գալիս է Խանքենդի վրա հարձակում-րծելու. ձայն ձայնի է ընկնում, հեռադիտակներ են բե-

¹⁴ Գաղտնի ամբաստանագրերով:

րում, հուզումը ծայրաստիճան աճում է, քնդանոթները, գրեթե դաջիրենբեր դուրս են բերում դեպի Ադդամ՝ փախցնելու-ազատելու, սակայրները միմյանց գլխով են ընկնում, իսկ ուսուցիչները դիմում են հայերին, թե՛ «ի սեր աստծո, մեզ պաշտպանեցե՛ք, որովհետև մենք մեղավոր չենք, հացի խնդիրն է մեզ ստիպել Ադրբեջանին ծառայելու»:

Այս դեպքը պարզ ցույց է տալիս, որ Ղարաբաղը, հակառակ պարագային, զենքի ուժով փառավորապես կարող ադրբեջանյան հոտը կտրել Հայկական Ղարաբաղից, անգլիական միսիայի ճնշումները չլինեին, և հրապարակապես կանգնած չլինեին մեր զինական կատարյալ մերկությունը:

Մայիսի 10

Մայրագյուղերից դարձյալ խումբ-խումբ մարդիկ են եկել Ազգային խորհուրդ ու գանգատվում են, որ թուրքական հրապարակությունը Ղարաբաղը ժամանակավորապես զիջել է սակախմբերից շունչ քաշել չեն կարողանում, որ անհատական պահանջություններն ու թալանը վերջ չունեն: Բրիտանական հրամանատարությունը լսում է այդ բոլորն ու խոստանալով այդ մասին գրել Սուլթանովին, սակայն ավելացնելով, որ յուրաքանչյուր ակտիվ քայլ հայերի կողմից պետք է համարուղղված Մեծ Բրիտանիայի դեմ:

Ըստ երևույթին որոշված էր տնտեսական բույրոտի ու շահութան ավազակությունների, ալան-թալանի միջոցով խեղդել Ղարաբաղն ու ստիպել, որ նա ընդունի Ադրբեջանի իշխանությունը:

Ավազակությունների առաջն առնելու համար հրամայված շտաբին, որ ծայրագյուղերին առանձին ուշադրություն դարձվի: Ասենք, շտաբից [եկող] գրերը ամեն օր պահանջում էին, որ Ազգային խորհուրդը թույլ տա հարցը միանգամից վճարելու՝ կամ «ղեկ կամ դեն»: Բայց Ազգային խորհուրդը չէր արձակ տեսնելով, որ հարցը «ղեկը» պետք է կտրվի, իսկ զգույշ էր ու չէր ուզում ամբողջ հայությունից միակ շտաբ հանված, չվնասված բեկորը՝ Ղարաբաղը, ենթարկվի սրտաբանության ու ավերածության: Այդ պատճառով էլ շարունակ հրահանգվում էր, որ զգույշ լինեն ու աշխատեն միայն եղբայրական մեթոդները հետ մղել, իսկ ավազակախմբերին՝ ոչնչացնել անխնա կերպով:

Շուշի եկավ գեներալ Շատելվորտը. նրա գալուց լավ ոչինչ չենք սպասում, համոզված ենք, որ խեղդելու է և ուրիշ ոչինչ: Կեսօրից հետո, ժամը 3-ին, եկավ նույնպես և իշխան Հովսեփ ԱրղուՅյանը¹⁵: Պարզվեց, որ նա եկել է իբրև Հայաստանի ներկայացուցիչ՝ Ղարաբաղի խնդրի, մանավանդ քուշի հարցը հարթելու ջանքերով: ԱրղուՅյանի ասելով, գործն այնպես էր կարգադրված, որ Եվլախում ինքն ու Շատելվորտը, երբեք է հանդիպեին միմյանց ու միասին գային Շուշի, բայց երբ միասին գալը հարմար չէր եղել Շատելվորտի համար, որովհետև, թերևս, նա մասնավոր տեսակցություններ ու խորհրդակցություններ պիտի ունենար Ադդամում ու եկել էր մենակ:

Մեր հարցին, թե ճի՞շտ է, արդյոք, որ Հայաստանի կառավարությունը Ղարաբաղը ժամանակավորապես զիջել է Ադրբեջանին, պատասխանեց, որ ամենևին այդպիսի բան չկա, որ Շատելվորտը շատ մեծ «թյուրիմացություն» մեջ է: ԱրղուՅյանի այդ պատասխանը մեզ չափազանց ուրախացրեց:

Մեր մյուս ավելի քան հրատապ հարցին, թե՛ «հապա ի՞նչ մտածում Հայաստանը Ղարաբաղը փրկելու մասին. արդյոք, ուղղամթերք, հաց չունենք, Ադրբեջանն իր քնդանոթներով ու զորաշարժերով, անգլիական միսիայի պահանջներով մեր հոգին հանեցին, որպիսի՞ քայլեր են արվում մեր խնդրությունը մեղմացնելու համար», պատասխանեց, որ ... որոշված է աշխատել: ԱրղուՅյանի այդ պատասխանը մեր սիրտը առաջացրեց, և իմ բերնից մի վատ անեծք դուրս թռավ... հայհոսում...

Ժամը 3 1/2-ին Շատելվորտը իր մոտ է կանչում ԱրղուՅյանին, որը ժամը 5-ին վերադարձավ հուզված ու զայրացած: Նրանց մեջ տեղի էր ունեցել հետևյալ խոսակցությունը:

— Վաղն առավոտյան ավտոմոբիլը պատրաստ կլինի ձեր ուրանոցի առջև, ուղիղ ժամը 7-ին պետք է թողնեք Շուշին. հեռանաք Քիֆլիս-Սրեան:

Սկզբում անակնկալի եկած Միշան հետո ուշաբերվում է ու արմատացած հարց տալիս.

— Գուք ինձ աքսորո՞ւմ եք, բայց ինչի՞ հետևանք է այդ-
արդյոք իմ վարած քաղաքականությա՞ն, թե՞ կան ուրիշ
պատճառներ:

— Որովհետև,— պատասխանում է գեներալը,— Գուք
ձեզ հետ Հայաստանից փող եք բերել Ղարաբաղում ագիտա-
ցիա անելու հակառակ Ադրբեջանի, և երկրորդ, երբ դուք գնա-
ցել եք Գորիս, այնտեղ չեք հայտարարել, որ Հայաստանի
կառավարությունը Ղարաբաղը զիջել է Ադրբեջանին:

Առաջին կետի վերաբերյալ Միշան ոչինչ չի ասում, որով-
հետև իսկապես նա իր հետ բերել էր 290 000 ռուբլի, որ մի
բյուջեի 1/2 ամսվա ծախսն էր միայն, և որի մասին կարծում
էինք, թե միայն հինգ հոգի գիտեն՝ ես, Միշան, Ծ. Իշխանյա-
նը, Միշայի քարտուղար Գագան և մի սպա, մինչդեռ բանի
դուրս եկավ, որ շատերը գիտեն... իսկ մեղադրանքի երկրորդ
կետի վերաբերյալ պատասխանում է.

— Ես Գորիսում այդպիսի հայտարարություն անել չե-
կարող, որովհետև նախ՝ այնտեղ ինձ հնարավորություն
տրվել որևէ մեկի հետ տեսնվել, և երկրորդ, ինքը հաստատ
տեղեկություն ունի, որ Հայաստանի կառավարությունը եր-
բե՞ք, ո՛չ ոքի, ո՛չ մի տեղ ոչ մի խոստում չի արել Ղարա-
բաղի վերաբերյալ:

Այդ ասելով Երևանի հեռագիրը հանում ցույց է տալի
Շատելվորտին: Շատելվորտը զայրացած բացականչում է.

— Հայաստանի կառավարությունը երկդիմի քաղաքակա-
նություն է վարում, մեղավորն այս խնդրում մահվան պատժ
կարժանանա և առհասարակ Ղարաբաղի շուրջը կատարվե-
լու գործերը, որ տարվում են հակառակ անգլիական հրամանա-
տարության ծրագրի՝ հազարավոր հայերի կյանք կարող
արժենալ:

Արզումանյանը զարմացած՝ «դաշնակցի» երեսին է նայու

— Ես կհեռագրեմ, որ արգելեն վերադարձող գաղթական
ներին մտնել Ղարս և Նախիջևան, մինչև որ այստեղ Ղար-
բաղը չընդունեն Ադրբեջանի իշխանությունը,— շարունակում
է Շատելվորտը,— Հայաստանի կառավարությունը ընդուն
է այդ, մանավանդ որ բոլորը ժամանակավոր է, մինչև
խաղաղարար կոնֆերանսն իր վճիռը կտա:

Միշան ասում է, որ Շուշի է հասել Հայաստանի ներկա-
յացուցիչ իշխան Հովսեփ ԱրղուՅյանը, թող նա հայտնի, թե
Հայաստանն ինչ տեսակետ ունի Ղարաբաղի հարցի վերա-
բերյալ:

Շատելվորտը մի վայրկյան մտածում է, ապա Միշային
և ԱրղուՅյանին երեկոյան ժամը 7-ին ճաշի հրավիրում:

Ժամը 7-ին նրանք գնում են, իսկ մենք Ազգային խորհրդի
գրասենյակում նստած անհամբեր սպասում ենք նրանց վե-
րադարձին, զանազան ենթադրություններ անում, ծրագրեր
պատրաստում, հուզվում, բորբոքվում, մինչև որ վերջապես
գիշերվա ժամը 1-ին վերադարձան Հայաստանի ներկայացու-
ցիչները, որոնց Շատելվորտը ամեն ձևով աշխատում էր նվաս-
տացնել շրջապատողների աչքում:

ԱրղուՅյանը հայտնում է, թե ինչպես եղավ իրենց տե-
սակցությունը:

Գեներալը դրականապես պնդում է, թե Հայաստանի կա-
ռավարությունը զիջել է Ղարաբաղը, իսկ ԱրղուՅյանը հայտ-
նում է, որ կես խոսքով անգամ զիջելու մասին կառավարու-
թյունը խոստում չի արել և եթե աներ, ժողովուրդը իսկույն
կտապալեր նրան:

Ինչո՞ւ էր գեներալը պնդում. մի՞թե իսկապես Հայաստա-
նի կառավարությունը մի որևէ գաղտնի խոստում արել էր,
հասկանալ չէինք կարողանում, միայն պարզ տեսնում էինք,
որ անգլիական հրամանատարությունը կպել է Ղարաբաղի
կոկորդից և էլ բաց թողնել չի ցանկանում: Ինչո՞վ կվերջանար
այս բոլորը, չգիտեինք:

Մայիսի 12

Գնալով դրությունը ավելի է ծանրանում: ԱրղուՅյանը
եկավ, բայց իր հետ փող չբերեց: Հայաստանի կառավարու-
թյան բռնած դիրքը, Ղարաբաղի հարցում, ինձ միանգամայն
ապշեցրել է. մի՞թե կարելի է մի ամբողջ երկրամաս կցել
ցանկանալ և այդպիսի մի խոշոր քաղաքական գործ գլուխ
բերել կոպեկներով: Ադրբեջանը չի խնայում միլիոնները, փո-
ղը հոսում է գետի պես, կաշառվածները վխտում են ամեն
անկյունում, իսկ մենք փող չունենք, որ օֆիցերներին հացի
3 Ղարաբաղի տագնապը 33

փող տանք: Եվ Հայաստանը հեռու կանգնած միայն կան-
չում էր.

— Պինդ կացե՛ք, մենք Ղարաբաղը շե՛նք զիջում:

Տաճիկների գալուց Ասկերանի շրջանի գյուղերը դիմադրել
են. վեց գյուղ բավականաչափ վնասվել ու զինաթափ է եղել:
Խաչենը բոլորովին զինաթափ է եղել. այդ մեծ գավառում
ժողովուրդը ընդամենը 370—400 հրացան ունի, Վարանդայի
կեսը գրեթե զենք չունի: Մի քիչ լավ են զինված Դիզակի և
Ջիվանշիրի շրջանները, իսկ, ընդհանուր առմամբ, ամեն մի
հրացանին հազիվ 50—60 փամփուշտ է ընկնում, այնպես որ,
մի լուրջ կռիվ լինելուց՝ ամենաշատը 2 ժամվա պաշար կա:
Գոնն սվիններ էլ չկային, որ ծայրահեղ դեպքում՝ սվինամար-
տի գնայինք: Մի թնդանոթ ունեինք տաճիկներից խլած, նա
էլ կեսը ճարտարում է, մյուս կեսը՝ Դիզակում¹⁶: Մի գնդացիք
էլ Ջիվանշիրի շրջանում կար առանց փամփուշտի... Այս է
ահա մեր զինական ամբողջ պաշարը: Սրանո՞վ պետք է Ղա-
րաբաղը պաշտպանենք: Մյուս կողմից էլ, ինչքան մենք թույլ
ենք ու կաշվից դուրս ենք գալիս դրուժյունը փրկելու, մեր
կողքին Ադրբեջանն է ամեն օր ուժեղանում:

Այդպես, նա արդեն կազմակերպված զորք ունի, թեև դեռ
կոպում փորձառութուն չեն ստացել, ուղղամթերքի անհաս
պաշար, Խանքենդում՝ թնդանոթներ, Շուշում՝ գնդացիներ,
Ասկերանում՝ գնդացիներ, ոտքից ցզուխ զինված թրքութուն,
և այդ բոլորին՝ ավելացրած՝ հացի առատութուն, ճանապարհ-
ների ազատութուն ու... անզլիական հրամանատարության
չափազանց բարեհաճ վերաբերմունք:

Իշխանին հարցնում ենք.

— Մենք մեր բոլոր ուժերը լարած՝ հաղթահարելով դժվա-
րությունները, մեկ-մեկ կարողանում ենք Չանգեզուր տեղե-
կություններ ուղարկել, բայց ո՛չ Չանգեզուրը, ո՛չ Հայաստա-
նը մինչև այժմ այդպիսի մի փորձ չարեց մեզ անհայտությու-
նից ազատելու: Մենք շարունակ «փամփուշտ, փամփուշտ»
էինք աղաղակում և երբ տարվա սկզբներին հնարավորութուն
կար փամփուշտ ուղարկելու, շուղարկեցին, ուղարկեցին մի
քիչ միայն այն ժամանակ, երբ ճանապարհները միանգա-
մայն փակվեցին ու Ղարաբաղի բաժինը մնաց Չանգեզուրում,
բայց գոնն ասացեք, ի՞նչ է կատարվում այժմ Հայաստանում.

ի՞նչ քայլեր են արվում այնտեղ մեզ օգնելու: Մենք մեր ուժե-
քով Ղարաբաղը պաշտպանել չենք կարող, Ղարաբաղը գուցե
միայն հերոսաբար կռվի մեկ-երկու օր և հիմնահատակ կոր-
ծանվի:

Արդուժյանը պատասխանեց.

— Մինչև այժմ կառավարութունը, ճիշտ է, ոչինչ չի
արել, բայց այսուհետև նա դրական քայլեր պետք է անի.
Չանգեզուրը կուժեղացվի, որպեսզի հարկ եղած դեպքում
այնտեղից ուժ հասցնել կարողանան: Միևնույն ժամանակ էլ
կկիրառվեն զիվանագիտական միջոցներ:

Այսպես, Ղարաբաղը թպրտում է մղձավանջային դրուժյան
մեջ, իսկ «այնտեղ» դեռ նոր մտածում են ինչ-որ քայլեր
անել, մինչդեռ հենց այսօր մեր աչքի առաջ թուրքական հե-
ծելազորի մի խմբակ կասկածելի բեռներ տարավ դեպի Զա-
բուխ, Չանգեզուրի սահմանները: Իսկ բոլկոտը հետզհետե
ուժեղանալով՝ Հայկական Ղարաբաղը սովամահ է անում:

Մայիսի 12

Որովհետև Շատելվորտն ու Արդուժյանը վաղը պետք է
գնային Չանգեզուր՝ քոչի հարցը հարթելու, Ազգային խոր-
հուրդը հարմար է գտնում, որ խորհրդի անդամներից մեկն
էլ, իբրև տեղին ու մարդկանց ծանոթ, գնար նրանց հետ Գո-
րիս, աչակցելու գործին, համոզելու Չանգեզուրցիներին, որ
քոչի մի մասը իրենք ընդունեն, որպեսզի ամբողջ քոչը Ղա-
րաբաղում չկենտրոնանա: Իսկապես մեր նպատակն էր օգտ-
վել հանգամանքից և մարդ ուղարկել Չանգեզուր, այնտեղ
խոսելու մեր դրուժյան մասին և օգնության հասնելու ծրագիր
մշակել, նույնպես և բերելու այն 1 200 000 ուրլին, որ
ուղարկվել էր Ղարաբաղի համար, բայց Չանգեզուրցիների
և ուղարկողների անփութության պատճառով մնացել էր Գո-
րիսում: Եվ որովհետև Ազգային խորհուրդն անլիզալ էր, ստիպ-
ված եղանք այդ մասին կողմնակի մարդկանց միջոցով հաս-
կացնել անզլիական միսիային: Միսիան, զարմանալի բան,
ընդունում է այդ առաջարկն ու գրավոր կերպով հայտնում
Աշոտ Մելիք-Նովսեփյանին¹⁷, որ նա պատրաստվի վաղը ճա-
նապարհվելու Արդուժյանի և մյուսների հետ:

Առավոտյան ժամը 7-ին Աշոտը, Արղուժյանը, Շատելվորտն ու մի քանի անգլիացիներ իրենց հետ վերցնելով մի զրահապատ ավտոմոբիլ՝ ճանապարհովում են դեպի Գորիս: Մենք ուրախ էինք, որ Աշոտն ու Արղուժյանը գնում են: Աշոտին թուղթ էինք տվել, փողերը բերելու համար և Իշխանին էլ պատվիրել, որ փողերը անպատճառ բերեն: Վերջապես հույս ունեինք, որ մի գումար կստանանք. և՛ ընթացիկ ծախսերը կհոգանք, և՛ այստեղից այնտեղից, թանկ-էժան՝ մի քիչ փամփուշտ ձեռք կբերենք: Իհարկե՞ ոչ հայերից:

Բայց, շանցած երկու ժամ, Աշոտը վերադարձավ Ազգային խորհուրդ: Մենք ապշած նրան նայեցինք, իսկ նա՝ մի հեզնական ժպիտ բերանին, եկավ ու փլվեց աթոռին:

— Գնացի Գորիս ու վերադարձա, — ծաղրեց նա, գլխի երկար մազերը մատներով սանրելով:

— Ինչո՞ւ չես գնացել, ի՞նչ է պատահել, — վրա տվեցինք մենք:

— Այն է պատահել, որ մեզնով խաղում են, մեզ ստորացնում են, — պատասխանեց Աշոտը և ավելացրեց, — համաձայն միսիայի թղթի, առավոտյան ժամը 7-ին Իշխան Արղուժյանը նստեց ավտոմոբիլ, ես էլ, ինչպես իրենց օֆիցերը կարգադրեց, նստեցի ցույց տրված մի ուրիշ ավտոմոբիլ: Ծանապարհվեցինք: Միսիայի մոտ առաջ ընկավ մեզ միացած Շատելվորտն իր ավտոմոբիլով և զրահապատով: Բայց հենց հասանք քաղաքի ծայրը, Շատելվորտը կարգադրեց կանգնեցնել ավտոմոբիլներն ու ինձ հայտնել, որ ես պետք է վերադառնամ, որովհետև իբր իմ նստած ավտոմոբիլը սարքին չէ: Իհարկե, դա պատրվակ էր, ու ես թարգմանի միջոցով հասկացրի, որ իմ Գորիս գնալը գործին օգնել կարող է, այդ մասին գնեերալն իր համաձայնությունն է տվել, իսկ ավտոմոբիլը՝ «փառք Աստծո, սաղ-սալամաթ է»: Շատելվորտը կտրուկ կերպով հայտնում է, որ Մելիք-Հովսեփյանը պետք է վերադառնա, որովհետև ավտոմոբիլը «կոտրած է»: Ես վերադարձա, իսկ «կոտրած» ավտոմոբիլը շարունակեց իր ճանապարհը:

Այս բոլորից հետո էլ ի՞նչ կասկած, որ մենք մենակ ենք

մեր դժբախտության մեջ, իսկ «բարեկամները» միայն ծաղուռն են մեր դժբախտությունը:

Որ անգլիական հրամանատարությունն ի դեմս Շատելվորտի որոշել էր Ղարաբաղը շրջեցնել, ոչ մի կասկած չկար: Ծանապարհները փակ, ալան-թալանը սովորական երևույթ դարձած, բոյկոտը մեզ խեղդելիս, մի՞թե Գերմանիա տապալող, Թարդանելը պատռող-անցնող Անգլիան պիտի վախենա ինչ-որ նորածնունդ Աղբբեջանից, և մի՞թե միայն մի անգամ Անգլիայի ներկայացուցչի ոտքը սպառնագին գետնին զարկելուց չէին բացվի ճանապարհները, չէր վերջանա բոյկոտը, փակուժուկները չէին մտնի բոլոր թալանչիները Սուլթանովի հետ միասին: Եվ եթե Շատելվորտն ու մյուսներն այդ չէին անում, ապա պարզապես նրանք ընկերակցում էին Սուլթանովին. դա Անգլիայի քաղաքականությունն էր: Թարմ փաստ, այսօր սաշենի և Վարանդայի ներկայացուցիչները հազարերորդ անգամ բողոքեցին միսիային տեղի ունեցող վայրենությունների դեմ: Այնտեղ պատասխանեցին.

— Դիմեցե՛ք գնեերալ-նահանգապետին, իսկ ամեն մի թայլ, ուղղված Աղբբեջանի դեմ, կդիտվի իբրև թշնամական թայլ՝ ուղղված Մեծ Բրիտանիայի դեմ:

Մեր «դաշնակիցների» սովորական պատասխանը:

Շատելվորտը վերադարձավ Գորիսից: Սուլթանովը նրա հետ տեսակցություն ունեցավ. ինչ են խոսել, մեզ հայտնի չէ, բայց գնեերալին տեսնողներն ասում են, որ շատ թթված է մեք ունեք:

Նրա հետ Գորիս գնացող անգլիացի օֆիցերներից մեկն ասել է, թե ճանապարհին, Տեղ գյուղի մոտ, հայկական մի շորաբաժին, թվով 50 հոգի, փակել է Շատելվորտի ճանապարհն ու չի թողել առաջ անցնել, մինչև որ կարողացել են ջամոզել:

Սուլթանովի հետ տեսնվելուց հետո Շատելվորտը մի թուղթ ուղարկում Միշա Արզումանյանին, պատվիրելով, որ առավոտյան ժամը 7-ին թողնի Շուշին: Ազգային խորհրդում խորհրդակցելուց հետո Միշան պատասխանում է, թե ինքը հպա-

տակվում է, միայն թե իրեն, իբրև սովորական մարդու, թողնելով մնալ մինչև երկուշաբթի՝ նոր վախճանված մոր հոգեհանգիստը կատարելու և ընտանեկան գործերը կարգավորելու: Երեկոյան ժամը 9-ին պատասխան է ստացվում, թե Շատելվորտի կարգադրությունը մնում է ուժի մեջ, և որ ավտոմոբիլային նա պետք է հեռանա: Միշան նորից գրում է, որ, թե իր կառավարությունից հրահանգ չունի, բայց և այնպես կհեռանա Շուշիից միայն մոր հոգեհանգիստը կատարելու հետո, այսինքն՝ երկուշաբթի օրը, մայիսի 19-ին:

Մայիսի 16

Ինձ շատ էր հետաքրքրում, թե ինչով պետք է վերջանա Միշայի «գործը»: Եվ որովհետև երկուսս էլ միևնույն հյուրանոցում էինք ապրում, ուստի, Միշան դեռ քնած էր, անվտյան ես վաղ արթնացա, որ տեսնեմ, թե ավտոմոբիլ գտնվում է, արդյոք, «հանցավորին» տանելու:

Իսկապես, ժամը 7-ին ավտոմոբիլը կանգնեց հյուրանոցի դռանը, այնտեղից դուրս եկավ անգլիական մի սպա ու թարթիկից և վերադառնալիս հանդիպել էր Միշանի: Ես ևս հետևեցի նրանց ու հեռանալու ներքև մտա համարը: Միշան քնած էր, նրան արթնացրին թարգմանն ասաց, որ ավտոմոբիլը եկել, պատրաստ կանգնած է: Միշան խնդրեց գնե՞րալին հաղորդել, որ ինքը ավտոմոբիլը 19-ից շուտ Շուշուց գնալ չի կարող: Ասաց ու շուտ եկե՞րալին պատր:

Սպան ու թարգմանն ավտոմոբիլ նստելով՝ հեռացան, իսկ Միշան վեր կացավ ու հագնվեց:

Ժամը 9-ին Շատելվորտից մի տոմսակ ստացվեց, որ Միշային կանչում էր իր մոտ կեսօրից հետո, ժամը 2 1/2-ին: Երբ ժամը 2-ին Միշան ուղղվեց դեպի անգլիական մի սպա, քաղաքում մի դեպք տեղի ունեցավ: Գավառից Շուշու էր եկել Գիզակի հրամանատար Արտեմ Լալայանն իր թիկնապահներով: Նա Սոկրատ բեկի հետ շունչով: Այդ թշնամի թյուրքերն անաչացել էր այն օրվանից, երբ Սոկրատը խանգարող դեր էր կատարել Անդրանիկի Շուշի մտնելուն, մինչև Լալայանը ջերմ կողմնակից էր եղել, որ Անդրանիկն արդեն պատճառ մտնի Շուշի: Այդ հողի վրա նրանց մեջ խոր ատ-

ուրբյուն կար, մանավանդ որ Մամնայի մոտ տաճիկներին հիվանդանոցի ուժերով շարժելուց հետո նրանց ձեռքերն ու շուրթերն Սոկրատը յուրացրել էր: Լալայանը պնդում էր Ագային խորհրդի առաջ, որ Սոկրատին դատեն կամ միջոցներ ձեռք առնեն նրան միանգամայն չեզոքացնելու: Ես այդ պատմությունը դեռ ծանոթ չէի, բայց երբ եկա Շուշի, իմացա, որ Սոկրատը նյութեր էի հավաքում պատմության համար), որ Սոկրատը անգլիական միսիայի հովանավորության տակ է գտնվում, գաղթականական գումարները նրա միջոցով են բաժանվում, որի շուրջը շատ մեծ դժգոհություն կար գյուղերում, ու ապրում էր միսիային մոտիկ մի բնակարանում, վարելով հորս կյանք, անգլիական սիպայներին շարունակ հյուրասիրելով, որի համար, իհարկե, հարկավոր էին գումարներ, իսկ թե ի՞նչ միջոցներից էին մսխում այդ գումարները, ինձ հայտարարել էին:

Սոկրատը իր բնակարանից բոլորովին դուրս չէր գալիս և երբն նվիրված մի խումբ հայ զինվորների պաշտպանության տակ էր գտնվում, որոնք հենց այնտեղ էլ ապրում էին:

Այժօր Սոկրատը, ինչպես էր պատահել, դուրս էր եկել Սոկրատը իրեն նետում է մոտիկ գտնվող մի տուն. աղմուկ է արձարձարանում: Լալայանի մարդիկ հեռանում են, Սոկրատն էլ գնում է իր բնակարանը, որտեղ անգլիացիները դնում են իր սիպայներից¹⁸ երկու հոգի՝ մուտքի մոտ պահպանություն նստելու:

Քաղաքում այդ մասին տարբեր լուրեր սկսեցին պտտվել, մեկը մյուսին հակասող, մենք էլ զգուշանալով, որ խրնդերը խորհրդում հարցը քննության առնել ու վերջացնել:

Մինչ երեկոյան մենք այդ խնդրով էինք զբաղված, եկավ Միշան ու պատմեց, որ ինքը եղավ Շատելվորտի մոտ, վերջինս գտնում է, որ Միշան անպատճառ պետք է հեռանա, քան էլ պնդում է, թե կհեռանա միայն իր որդիական պարականությունը հանգուցյալ մոր հիշատակին կատարելուց

հետո, իսկ եթե գեներալը ցանկանում է, թող ձերբակալի այնպես աքսորի:

Շատելվորտն ստիպված է լինում զիջել:

Մայիսի 17

Երեկվա միջադեպը լուրջ հետևանքներ է առաջացնում Սոկրատ բեկը մարդ է ուղարկում իր հայրենի Ավետարանի գյուղը, պատվիրելով, որ այնտեղից զինված մարդիկ դուրս գան Շուշվա միակ ազատ ճանապարհ Չախմախը կտրելու շթողնելու, որ Լալայանի մարդիկ այնտեղով անցնեն, ինչպես որ Գրանից կարող էր արյունահեղություն առաջանալ: Իսկույն հրաման ուղարկեցինք շտաբ, որ անմիջապես ձեռնարկեինք մի խումբ հասցնեն, Չախմախը մաքրեն ու ձերբակալեն հարյուրավորներին:

Մայիսի 18

Մղձավանջային դրուժյուն... Ծայրագյուղերում հայերի շունչ քաշել չեն կարողանում. շարունակ դիրքեր են պահում գրկվելով դաշտային աշխատանքներից: Նույն վիճակում է և սահմանամերձ թուրքական գյուղերը, որոնք հայերից վախենալով՝ դաշտ դուրս չեն գալիս: Ադրբեջանական զորքի ներքև անվերջ թույն թափելով են զբաղված: Եվ որքան հարկ է թուրքական զանգվածն իր բեկերին...

Այսօր բողոքողներ գնացին անգլիական միսիա, բայց Շատելվորտը չընդունեց, առաջարկեց դիմել Սուլթանովի Եթե ռազմամթերք ունենայինք, մենք գիտեինք, թե ում պետք էր դիմել, բայց... դատարկ ձեռքերով ի՞նչ անեինք... Անգլիական կատաղությունը խեղդում էր մեզ:

Երեկոյան Գորիսից վերադարձավ իշխան Հ. Արղուժյանը Ազգային խորհրդին տեղեկություններ հաղորդեց մեզան միանգամայն կտրված այդ գավառի մասին:

— Մենք այստեղից ճանապարհվեցինք ամսի 13-ին, ուղի ժամը 7-ին, — պատմեց Արղուժյանը, — Աշոտի հետ պատահածը ձեռք արդեն հայտնի կլինի: Նրա վերադառնալուց հետո մենք շարժվեցինք առաջ: Ճանապարհին առանձին աչքի ընկնող բան չպատահեց, բայց Տեղ գյուղի մոտ մեր առջև ել-

մի հայ սպա հիսունի շափ զինվորներով: Սպան հայտնեց, որ մեզ չի կարող թույլ տալ դեպի Զանգեզուր շարունակելու ճանապարհը: Շատելվորտն այլայլված դեմքով հարցրեց, թե՞ «գիտի՞ սպան, որ Շատելվորտի՝ անգլիական կառավարության ներկայացուցչի հետ է խոսում»: Սպան պատասխանեց, որ «այո՛, գիտի, բայց և այնպես բաց թողնել չի կարող, մինչև որ Գորիսից թույլտվություն չստացվի: Իրեն այդպես է պատվիրված»: Տեսնելով, որ գործը լուրջ ընթացք է ստանում, նա, իբրև Հայաստանի կառավարության ներկայացուցիչ, միջամտեցի, և դեռ շարունակում էի համոզել, երբ վրա հասավ Տեղի* կոմիսարն ու դրուժյունը մեղմեց, ասելով, որ իրենք լսել են ցանկալի հյուրի գալու մասին ու հրավիրում են թեյի: Իսկապես նա նրբամտությամբ էր «սարքել» թեյը՝ տպավորությունը մեղմացնելու համար: Հետևյալ օրը հասանք Գորիս: Մեզ ընդունեց լավ մարզված հայկական մի վաշտ: Գրանից հետո խոսեցինք Ազգային խորհրդի հետ: Շատելվորտի բոլոր առաջարկությունները մերժվեցին: Վերջապես, միայն Զանգեզուրն իր պայմանն առաջարկեց, թե՞՝ «բոչի մի մասը բաց կթողնի Ազգային խորհրդի ցույց տված տեղերը, առանց զենքի, այն էլ՝ նախօրոք բանակցելով քոչվորների ներկայացուցիչների հետ»: Գրանից հետո Շատելվորտը վերադարձավ, իսկ ես մնացի՝ իրերի դրուժյանն ավելի [լավ] ծանոթանալու:

— Ինչպե՞ս է Զանգեզուրի ռազմական դրուժյունը, — հարցրինք մենք:

— Բավականին լավ է, — ասաց Արղուժյանը, — ռազմամթերք ունեն, հաց կա, զորք ունեն, փող ունեն, թիկունքներին էլ՝ Հայաստանը:

— Իսկ առաջները՝ Ղարաբաղը, — ավելացրինք մենք, — իսկ մեր փողը բերե՞լ էք:

— Չէ՛, չտվեցին:

— Ինչպե՞ս... ինչո՞ւ, — թևաթափ եղած՝ հարցրինք մենք:

— Չտվեցին, ասացին, որ ես համապատասխան վկայա-

նան չեմ տարել:

— Բայց մեր լիազորն այնտեղ է, «պատշաճ» վկայախո-

* Տեղ գյուղի:

սով, իսկ «ամենապատշաճ» վկայականն այն է, որ մենք այս տեղ կոպեկի համար հոգի ենք տալիս:

— Ճիշտ է այդ, բայց չկարողացա համոզել, և որքան էլ իմ դիրքը բարձր, այնուամենայնիվ՝ նրանք ձևականը բերանած, փողը շտվեցին:

Գե՛, Ղարաբաղը թող գնա և քամի կուլ տա...

Մայիսի 19

Առավոտյան ժամը 7-ին Միշա Արզումանյանն իր քարտուղարի հետ (Գագա Տեր-Օհանյան) դուրս եկավ Շուշուց: Պարզ է, իհարկե, թե՛ նրան հեռացնելով, թուրքերը որքան կթևավորվեն և որքան կընկճվեն հայերը:

Մայիսի 20

Բոյկոտը սարի պես ծանրացել է Հայկական Ղարաբաղի վրա ու խեղդում է տնտեսապես: Ժողովուրդը մնացել է շրմա Շարունակ սպասում է ուժեղ ձեռքի միջամտության: Ուժեղ ձեռքն առայժմ անգլիական միսիան է, որ մի կողմից էլ ինքն է խեղդում:

Առհասարակ նկատելի է, և կույրն անգամ տեսնում է, որ Ղարաբաղում անգլիացիների բռնած դիրքը տանում է դեպ արյունահեղություն:

Արդությանի միջամտությունը ևս դրական ոչինչ չտվեց բոյկոտի հարցում, «այնտեղ» պատասխանեցին, թե դա Աղբյուրի քեչանի ներքին գործն է:

Մայիսի 21

Արդությանն էլ այժօր ճանապարհվեց դեպի Թիֆլիս՝ Երևան, և մենք առաջվա նման մնացինք մենակ՝ ապավինելով միայն մեր նիհար ուսերին, հույս չունենալով, թե դրսից շուրջ տով որևէ միջամտություն կլինի Ղարաբաղի դրությունը մեզ մացնելու: Արդությանն իր աչքերով տեսավ մեր ծանր կացությունը և նրան էլի շատ բաներ ասացինք, բայց դրանք շատ ավելի ասել էինք ամիսներ շարունակ: Ի՛նչ օգուտ էր ասացել, որ հիմա ստանայինք:

Մայիսի 23

Գավառներից ներկայացուցիչներ էին եկել-լցվել Ազգային կորհուրդ և խնդրում էին մի էլք գտնել:

— Այլևս այսպես շարունակել չենք կարող,— պնդում էին նրանք,— կամ վերջապես կոխվ հայտարարե՛ք, թո՛ղ կովենք, ինչ կլինի, կլինի, կամ որևէ համաձայնություն կայացրե՛ք: Ո՛չ հաց ունենք, ո՛չ հալալ ջուր: Գյուղից գյուղ անցնել չենք կարող: Մինչև ե՛րբ պետք է այսպես ձգձգվի: Ի՛նչ է անում Հայաստանը: Տարին լավ է. աստված տվել է ու մեր դաշտերը ցվել են հարստությանը, բայց եթե թույլ շտան հավաքելու, աստվածն է կլինենք: Ի սեր աստծո, մի հնար արե՛ք, որ արտերը կարողանանք հավաքել:

Եվ իսկապես, տարին զարմանալի տարի էր, եթե այդ տարի ժողովուրդը հունձը կարողանար հավաքել, երկու տարի առատորեն կկերակրեր Հայկական Ղարաբաղին: Եվ մեր հոգան այն էր, որ մի կերպ ձգձգեինք, մինչև որ «արտերը տուն գցեինք», այնուհետև գուցե արտաքին քաղաքականությունն էլ փոխվեր ի նպաստ Ղարաբաղի:

Երկար տակ-գլուխ տալուց հետո որոշեցինք գյուղացիներից մի պատվիրակություն դարձյալ ուղարկել անգլիական միսիա՝ Լևոն Քախատաճյանի առաջնորդությամբ: Վերջինս Թանձակի շրջանից էր եկել և անգլերեն էլ գիտեր:

Պատվիրակությունը վերադարձավ ու թախծոտ դեմքով հայտնեց, որ միսիայում իրենց լսեցին, հարցուփորձ արեցին, միայն վերջին պատասխանն այս էր, թե՛ «կգրենք Սուլթանովին»:

Մայիսի 24

Բոյկոտի սարսափելի ծանրությունը, անգլիացիների բռնած դիրքը, սուլթանովյան սատանայական դավադրությունները Ղարաբաղի շուրջը՝ օդը հեղձուցիչ էին դարձրել: Երեկվա միսիայի պատասխանից հետո գավառից եկածները մտան Ազգային կորհուրդ և խնդիրը կտրուկ կերպով դրեցին:

— Մենք բոլոր պատասխանատվությունը մեզնից վերցնելով,— ասացին նրանք,— հայտնում ենք, որ եթե բոյկոտը վերացվի, մենք էլ քոչը չպիտի բաց թողնենք:

Դուրս էր գալիս, որ կոխվ պետք է հայտարարեինք: Ին արտե՞րը, իսկ ուղղամթերքի պակասութիւնը... Ի՞նչ պակասութիւն, գրեթե բացակայութիւն: Հարկավոր էր դարձալ շարունակել անխժած «ձգձգողական քաղաքականութիւնը»:

Մայիսի 25

Այսօր առավոտյան լուր ստացանք, որ թուրքերը Մա կամրջի¹⁹ մոտ սպանել են մի հայի ու տարել նրա զենքերը Միկնույն ժամանակ հաղորդեցին, որ Փահլուլ գյուղի շրջակայքում վխտում են բազմաթիւ զինված թուրքեր, որոնք դարան մտած՝ թալանում են ձեռքն ընկած հային, հայտնելով որ իրենց պատվիրված է անխնա թալանել պատահող հայերին, առանց սպանելու:

Բացի այդ, դեռ վաղուց հարյուրավոր փաստերից մեկ գիտեինք, որ թուրքը հարմար տեղն ընկած ժամանակ բռնում էր հայերի ձին, եզր կամ էջը և ասում, որ «սա ի՞նչ է, ու հայը գողացել է այսինչ ժամանակ»: Ասում էր ու քշում տանում: Որովհետև այդպիսիների բողոքները միայն քամի էր տանում. պատվեր տրվեց, որ զգուշութեամբ վճարվի փոխարեն... Ակն ընդ ական...

Մայիսի 26

Ամերիկական միսիան էլ մեր բախտից է եկել: Մի կողմից էլ նա է մեզ նեղացնում: Անպատճառ ցանկանում է կորիքավորներին տրվելիք մի կտոր հացի մեջ քաղաքականութիւն մտցնել, աղբրեջանական գաղափարն առաջ տանել ինչպես ասում են՝ Շատելվորտի ազդեցութեան տակ:

Մինչև այժմ գլխավոր կառավարիչ ղոկտոր Հարման չկարողացավ ստեղծել մի մարմին, որին ժողովուրդը հավատ ընծայեր և որի միջոցով կարողանար նպաստի ու հաց բաշխումը կատարել այնպես, որ զեղծումներ չլինեն և այժմիսիս նրա համար, որ չէր ցանկանում նպաստամտ տույց կոմիտեի մեջ մտցնել համագումարի կողմից ընտրված երեք անձնավորութիւններին: Ամբաստանագրե՞րը, զրպարտութիւններն էին պատճառը, արդյոք, թե՞ մի ուրիշ հակամարտ, բայց փաստն այն էր, որ նպաստն ու հացը բաշխու-

էին նրանք, որոնց ժողովուրդը բացարձակապես չէր հավատում ու նրանց դեմ շարունակ բողոքներ կային:

Հանկարծ այսօր ամերիկական միսիան ժողովի է հրավիրում գոյութիւն ունեցող նպաստ ու հաց բաշխողների կոմիտեին (որոնց ժողովուրդը չէր հաստատում) ու հայտնում, թե կազմում է մի հայ-թուրքական խառը կոմիտե՝ հաց բաշխելու, և այդ կոմիտեի նախագահը պետք է լինի Խոսրով բեկ Սուլթանովը: Ի պատիւ վարկազուրկ հայ կոմիտեի անդամների, սրանք միաձայն մերժում են այդ ծրագիրը: Ապա Հարմանն ասում է, «եթե այդպես է, այն ժամանակ կազմենք խառը կոմիտե՝ Սուլթանովի օգնականի նախագահութեամբ»: Դարձալ միաձայն մերժում են: Այն ժամանակ Հարմանն առաջարկում է երրորդ միջոցը. կազմել խառը կոմիտե Սուլթանովի ղեկնաստան կառավարչի նախագահութեամբ:

Հայերը պատասխանում են, որ իրենք ուրախութեամբ ընդառաջ են գնում հայ-թուրքական խառը կոմիտե ընտրելու գաղափարին, սակայն ոչ մի խառը կոմիտե նրանք ընդունել չեն կարող, եթե նա լինելու է աղբրեջանական որևէ պաշտոնյայի նախագահութեամբ:

Հարմանը նեղացած հեռանում է, հասկացնելով, որ այդ գեպքում հայ կարոտյալները օգնութիւն ստանալ չպիտի կարողանան:

Դեռ Հարմանի բռնած այդ տեսակ դիրքի տպավորութեան տակ էինք, երբ լուր բերեցին, թե խաչնիցիները չկարողանալով զիմանալ սովին, աստծո անունը տվել են, ու մեծ խումբ հավաքելով՝ ճանապարհով Աղզամ, փորձելու, թե կարո՞ղ են, արդյոք, մի քիչ ալյուր, ցորեն գնել, հակառակ հայտարարված ուժեղ բոյկոտի: Նրանք հասնում են Աղզամ, բայց հենց առաջին իսկ քայլից թուրքերն սկսում են հայհոյել ամենախայտառակ կերպով. «Քյոփագ-օղլու» հայեր, ինչո՞ւ եք եկել, համ Աղբրեջանը չեք ընդունում, համ եկել եք մեզինից հա՞ց տանելու, կորե՞ք, գնացե՞ք, քանի զլխնիդ վրաննիդ է... ձեզ էդպես սովից պետք է շան պես կոտորենք... Անգլիացիները գալուց՝ պար էիք գալիս. հիմա ո՞նց է,

* Եսև որդու:

կերա՞ք... էնքան փիս եք, էնքան մուրտառ եք, որ ձեր ցանկալի անզլիացիներն էլ շեն ձեր ըստիս մտիկ անում»:

Հայերն ստիպված են լինում ջոռ ու փոշման, մի քիչ էլ վախեցած՝ վերադառնալ: Բայց Աղդամից մի վերստաշափ չհեռացած՝ Աղրբեջանի ասկյարները փակում են նրանց ճանապարհը ու ստիպում, որ մոտակա շինությունն առաջ գտնելու աղբը մաքրեն: Իսկ այստեղ այնքան աղբ կար վերջին ժամանակներս հավաքված, որ, ինչպես ես էի մի ամիս պռաջ տեսել, հարյուր մարդ մի շաբաթ հազիվ կարողանային մաքրել... Հայերն իրենց օձիքն ազատելու համար հավաքում են շորս հարյուր ուրբուց ավելի մի գումար, տալիս ասկյարներին ու ազատվում:

Մայիսի 27

Մի քանի օր առաջ մենք հաստատ տեղեկություն ունեինք, որ քոչը եկել-խմբվել է Աղդամի շուրջը, բայց թե ինչու չի բարձրանում, չգիտեինք ու զանազան ենթադրություններ էինք անում: Բայց այսօր մեր սուրհանդակը լուր բերեց, որ քոչն արդեն Ասկերանից անցել է ու բարձրանում է վերև, և հայերը միանգամայն հանգիստ են պահում իրենց, համաձայն Ազգային խորհրդի հրահանգի:

Եվ մինչ մի կողմից թե՛ զանազան ազդերով, թե՛ շտաբին և թե այլ պաշտոնյաներին տված հրահանգներով աշխատում էինք, որ թուրք խաղաղ ժողովրդին անհանգստացնող չլինի, մյուս կողմից նույն այդ թուրք «խաղաղ» ժողովուրդն իր բեկերի առաջնորդությամբ՝ սխտեմատիկ հարձակումներ էր դորժում մեր ծայրագլուղների վրա: Եվ հենց այսօր Դիզակի հրամանատարի օգնականից շտապ հաղորդագրություն ստացանք, որ Աղրբեջանի ու տաճիկ ասկյարների խմբերը, միացած գինված թուրք ժողովրդին, տաճիկ օֆիցերների հրամանատարությամբ՝ վերջին օրերս շարունակ հարձակվում են հայ գլուղների վրա, և թեև միշտ էլ հետ են մղվում, բայց էլի ձեռք չեն քաշում:

Մենք հաստատ աղբյուրից գիտեինք, որ այդ հարձակումները հրահրողը Աղրբեջանն է, իսկ ղեկավարողը՝ Քյազիմ փաշան²⁰: Այդ մասին գիտեր և անզլիական միսիան: Ինչպես

մեզ, նույնպես և անզլիացիներին տեղեկացրել էին, որ էնվերբեյը²¹ գտնվում է Սուլթանովի կալվածքում կամ Հաջիսամլըվում: Այդ մասին միսիան նույնիսկ գաղտնի հարաբերության մեջ էր դաշնակցության Շուշվա մարմնի հետ: Բայց, միևնույն ժամանակ էլ, մատների արանքով էր նայում աղրբեջանատաճկական դավադրություններին Ղարաբաղում: (Այս լուրն ստուգել չկարողացանք):

Դիզակի հաղորդագրությունը հայտնում էր. «Երրորդ օրն է, ինչ ընթանում են արյունահեղ կոիվներ փոփոխակի հաշտություններով»: Մենք մեր կողմից հարկավոր կարգադրություններ անելուց հետո հրամանատար Արտեմ Լալայանին պատվիրեցինք, որ միսիային ուղղած «доиссѣние»-ն վերցնի և անձամբ ներկայանա միսիայի ներկայացուցիչ մայր Տաուզենդին, որը Գորիսից արդեն տեղափոխվել էր Շուշի:

Պետք է ասել, որ Շատելվորտը Ձանգեզուրից վերադառնալուց հետո այնտեղից հետ էր կանչել իրենց միսիային, Ջաբուղից վերցրել սիպայներից դրած պահակը, նրանց տեղը հաստատելով Աղրբեջանի ասկյարներին, այդպիսով կարծես թե ցուցադրաբար խզելով հարաբերությունը Ձանգեզուրի հետ, իսկ Ղարաբաղը խեղդող շրթայի մեջ մի օղակ ևս ավելացնելով՝ Ջաբուղը, որ Ձանգեզուրի ու Ղարաբաղի Դարդանելն էր:

Նոր էինք ստացել Դիզակի հաղորդագրությունը, երբ մի այլ գրությամբ մեզ տեղեկացրին, թե քրդերը Բալուջայից վերև, անտառի բերնում, մի քանի հայերի են սպանել:

Քաղաքից էլ տեղեկացրին, որ Սուլթանովը վճռել է փոստն ու զանձարանն անպայման տեղափոխել թուրքական մասը: Այսպիսով, դրամայի նախանշաններն ամեն տեղերից ծայր էին առնում, և այդ բոլորը՝ անզլիական միսիայի օրհնությամբ:

Չնայելով այդքան նեղություններին, չնայելով, որ Սուլթանովն ու Շատելվորտը ոգի ի բռին ոչինչ չէին խնայում Ղարաբաղի շինքը Աղրբեջանի լծի տակ դնելու, ի պատասխան այդ անիրավությունների, բոլոր գլուղներից, բոլոր գլուղացիների ստորագրությամբ համախոսականներ եկան Ազգային խորհուրդ, թե Աղրբեջանն ընդունել իրենք չեն կարող:

Մայիսի 28

Հայայանը գնաց Տաուզենդի մոտ, անձամբ ներկայացրեց Դիզակից ստացված շտապ հաղորդագրությունն ու բողոքեց, որ թուրքերը սովորություն են դարձրել էդիլու, Հախուլու, Աղբուլաղ, Խարմանջուղ, Գուդուկի հայկական գյուղերի [վրա հարձակումներ գործելու] և եթե այդ հարձակումներին վերջ չտրվեն, ապա իրենք ևս պետք է սկսեն:

Տաուզենդն ասում է, որ անմիջապես Սուլթանովին կգրեն այդ մասին, և միսիան միևնույն ժամանակ միջոցներ ձեռք կառնի փաստը տեղնուտեղը ստուգելու:

Մայիսի 29

Այսօր նորից լուրեր էին պատվում, որ Սուլթանովը վճռել է փոստն ու գանձարանը տեղափոխել թուրքական մասը: Մենք որոշել էինք միայն բողոքելով բավականանալ և առիթ չտալ ընդհարման: Ուժ չունեինք... Իսկ Շուշին, փաստորեն, դեռ ամիսներ առաջ Ադրբեջանի ձեռքին էր: Այն օրվանից, երբ անգլիացիները մտել էին Շուշի և իրենց հետևից քաշել քաղաք մտցրել Ադրբեջանի կառավարական ապարատն ու զորքերը, այն օրվանից Շուշին մեռած էր, և մենք կռվի դեպքում որոշել էինք Շուշիում ոչ մի կռիվ չընդունել, մանավանդ որ պահեստում միայն 400 փամփուշտ ունեինք և մանավանդ որ մեր «դաշնակից» անգլիացիները մեզ գժվեցնում էին... Ճարտարի շրջանում թուրքերը մեր հոգին հանել էին, և երբ վերջապես նրանց հասկացրինք, որ այդպես շարունակել չի կարելի և նրանք չկարողացան դուրս գալ դաշտային աշխատանքների, միսիայից իսկույն մեզ վրա սպառնալից մատթափ տվեցին, թե հայերի արածներն անհանդուրժելի են և դա կարող է շատ թանկ նստել առհասարակ հայերին...

Մայիսի 30

Խաչենից եկավ Հայրենակցական միության կողմից ուղարկված ներսես Նասիրյանը: Նա զեկուցում տվեց իրենց գավառի ռազմական-տնտեսական դրության մասին: Լավ չէ... Ժողովուրդը հուսահատված է ու կարծես թե մի տեսակ խուճապի

մատնված: Ծարունակ հայհոյում է Հայաստանի կառավարությանը... Ձենք չունեն, իսկ Ադրբեջանն իր ասկյարներով ճնշում է ու ճնշում...

Դիզակից սուրհանդակը շտապ հաղորդագրություն բերեց հրամանատարի օգնականից՝ ուղղված Ազգային խորհրդին ու անգլիական միսիային, որ տաճիկ օֆիցերները, զուտ անցած Ադրբեջանի ասկյարների ու զինված բազմաթիվ թուրքերի, հարձակում են գործել Խժաբերդ գյուղի վրա. նա խընդրում էր շուտով դեղորայք ու ֆելդշեր ուղարկել՝ գյուղում տեղավորված վիրավորներին օգնելու: Իսկ կռիվը շարունակվում է:

Արտեմ Հայայանին պատվիրեցինք գնալ միսիա, ներկայացնել հաղորդագրությունը, բողոքել ու իսկույն ճանապարհվել Դիզակ: Ապա հրաման ուղարկեցինք շտաբ՝ անմիջապես զորքը շարժել դեպի Խժաբերդ, գյուղն ազատել՝ անցնելով հարձակողականի: Եվ եթե թուրքերը հետ մղելուց հետո ուրիշ կետերի վրա հարձակվեն, էլ չսպասել և «առանց դես-դենի»՝ բոլոր զորքերը գործի դնել, հարձակվել բոլոր ճակատներում՝ նախօրոք մշակած ծրագրով:

Այսպիսով, Ղարաբաղը կռվի էր դուրս գալիս, և ես համոզված էի, որ վախճանն աղետալից պետք է լինի երկու կողմերի, մանավանդ հայերի համար. Ղարաբաղը կընչվեր...

Իրիկնադեմին Դիզակի կողմից մարդիկ լուր բերեցին, որ կռիվը համառորեն շարունակվում է, որ հայերը դատարկել են Խժաբերդը: Իսկ թե թուրքերը գրավել են գյուղը կամ ոչ՝ տեղեկություն չունեին:

Երեկոյան ժամը 9-ին մեր սուրհանդակներից մեկը հայտնեց, որ մի քանի վաշտեր արդեն շարժվել են օգնության: Ժամը 12-ին Թաթոլուն ուղարկեցինք Դիզակ, պատվիրելով առանց կանգ առնելու հասնել այնտեղ, ոգևորել, ասելով, որ շուտով օգնությունը կհասնի:

Մայիսի 31

Ինչքան որ թուրքերն են ուժեղացրել իրենց հարձակումները, այնքան էլ ավազակություններն ու անհատական սպա-
Ղարաբաղի տագնապը

նություններն են համուհոտից դուրս եկել: Այլևս ոչ մի հայ չի կարող էլու, ձիով կամ եղով մի տեղ գնալ: Օր չի պատահում, որ մի քանի հայեր չգան Ազգային խորհուրդ ու զանգատվեն, որ թուրքերը խլել են էլը, ձին կամ գոմեջը: Անգլիական միսիան խուլ է ու ոչինչ լսել չի ուզում:

Ժողովրդի բանիմացներից մարդիկ են դնում անգլիական միսիա՝ քաղաքի վտանգավոր կացութեան մասին խոսելու և խնդրելու, որ արյունահեղութիւնը հեռացվի քաղաքի գլխից: Միսիայում պատասխանում են, թե՛ «Ժողովուրդը թող հանգիստ մնա, կոտորած իրենք թույլ չեն տա և կխոսեն Սուլթանովի հետ, որպեսզի նա իրեն զսպի»:

Ինչ խոսեցին, ինչ չխոսեցին Սուլթանովի հետ, մենք այլ չիմացանք, բայց ժամը 1-ին մի ուրիշ բան իմացանք. անգլիական միսիան, որ մինչև այդ Հայոց Ազգային խորհուրդը չէր ճանաչում, մենք անլեգալ էինք աշխատում, մի գրութիւն է ուղարկում մեզ և ութ հոգու հրավիրում՝ վաղը ներկայանալու միսիա «գործով»: Հրավիրվածների մեջ կային Ազգային խորհրդի անդամներից, շտաբի օֆիցերներից ու հասարակական գործիչներից, բոլորը՝ դաշնակցական, կարծես միայն մեկը ոչ դաշնակցական: Ինչի՞ համար էր այս հրավերը, ո՞վ կարող էր գուշակել, բոլորս միաձայն որոշեցինք, որ վատ բանի համար է, բայց և այնպես՝ պետք է գնալ:

Ձինաթափ արված ասկյարներից մեկի հրացանը հեղեղվեց, իսկ մյուսը, որի ձին ու հրացանը Ազգային խորհրդի սուրհանդակի մոտ էր գտնվում, հակառակ մեր պահանջի, որ բերի ու հանձնի, նստում է ձին, հրացանը ձիու գցում ու քաղաքից դուրս գալիս: Սկսում ենք կասկածել, որ աղբրեղանական փողերն այստեղ գործ են տեսնում, որպեսզի արհեստական կերպով փութացնեն Ղարաբաղի ձգնաժամը: Մի թուղթ ենք ուղարկում շտաբ՝ ու մեր դավառակապրիստավներին՝ ձերբակալելու անհնազանդին: Մյուս հրացանը քաղաքի պրիստավ Ա. Փիրումյանի միջոցով վերադարձնում ենք Սուլթանովին: Նույնից իշխանյանն ու Հրանտաճախյանն էլ մի նամակ են գրում վերջինիս, ցավ հայտնելով տեղի ունեցած դեպքի մասին ու հավաստիացնելով, որ այդ դեպքը բոլորովին չի ուզախացնում իրենց:

Այս բոլորը ցույց էր տալիս մեր խաղաղասեր տրամադրութիւնը, «պիլի շուտ» ուրիշ լեզվով խոսելու մեր անգրութիւնը... Մնում էր դիվանագիտական լեզվի ուժը:

Հենց մի ժամ առաջ (թուրքական մասում) թուրքերը խլեցին հայերից երկու ձի, մի ատրճանակ: Ժամը 3-ին տեղեկութիւն հասավ, որ Խճաբերդի մոտ թուրքերը շարդվել են ու դիակներ թողնելով՝ հետ շարդվել, որ շրջանը խաղաղ է, բայց ասկյարների մեծ զորաշարժեր են նկատվում զանազան ուղղութեամբ: Շուշի ևս բավականաչափ զորք է մտցվել գիշերով և ասացին, որ բավականին քրդեր էլ են հավաքվել, իսկ Խանքենդի մերձակայքում խրամատներ են փորում ուս օֆիցերների հսկողութեամբ:

Հոգիս 1

Ի պատասխան թուրքերի անլուր անիրավութիւնների և անվերջ թալանի, այսօր քաղաքի հայկական մասում երկու հայ բռնում ու զինաթափ են անում երկու թուրք ասկյարների և խլում մի ձի: Երկու հայերից մեկն Ազգային խորհրդի սուրհանդակներից էր:

Տեղեկութիւն ստանալուն պես կարգադրում ենք անմիջապես գտնել զինաթափ անողներին, վերցնել զենքերն ու բերել մեզ մոտ, իսկ «մեղավորներին» բանտարկել մինչև քննութիւն կատարեն, թե ի՞նչ պայմաններում է տեղի ունեցել դեպքը:

Մինչ այս մինչ այն՝ զինաթափված ասկյարները վազում են թուրքական թաղը, հարայ-հրոց բարձրացնում ու Սուլթանովին բողոքում հայերի կատարած «բռնութեան» վերաբերյալ:

Մի ժամ շանցած՝ մեր լրաբերները հասան ու հայտնեցին, որ նահանգապետի տան շուրջը մեծ շարժում կա, քաղաքի այլ-թուրքական սահմանի ամբողջ երկարութեամբ դիրքեր են պատրաստում, ասկյարները գալիս են տեղի այդ դիրքերը ու նկատարներ են դնում զանազան ուղղութեամբ:

Քաղաքի ժողովուրդն իրարանցման մեջ ընկավ: Դժգոհութեան ձայներ էին գալիս, թե մինչև ե՞րբ պետք է այս դրութիւնը շարունակվի, ինչո՞ւ որևէ համաձայնութիւն չեն կապացնում Սուլթանովի հետ... Քի՛չ են կոտորվածները, որ նույնից են ուզում հայերին կոտորել տալ և այլն:

Հումիսի 2

Առավոտը դրութունը ավելի օրհասական էր: Թուրքերը գիշերը մեծ գործ էին տեսել՝ նոր դիրքեր էին ավելացրել, Գեովհար աղայի տան մոտ գնդացիներ տեղադրել, իսկ այդ դիրքը դեռ 1906-ից²² հայտնի էր իր անառիկությամբ: Սան գիարի գլխին գնդացիներ էին դրել ու պահակներ կանգնեցրել, իսկ դեպի վեր բարձրացող քոչի ճանապարհին, հայտնաբերված անգատարանում, վխտում էին կատարելապես զինված ասկյարները, բացարձակ սպառնական տրամագրութուն դրած սևորեյով դեպի պատահած հայերը, որոնք գնում էին պանիր յուղ առնելու, թեև մի մսխալ էլ չէին տալիս. չէ՞ որ բոյկոտ էր, [մուսավաթական] կառավարության կողմից կազմակերպված բոյկոտ:

Քիչ հետո մեր հետախույզը տեղեկություն բերեց, որ ներքևի ճանապարհով մի խումբ ասկյարներ ուս օֆիցերի գլխավորությամբ գնացել ու գրավել են արևմտյան կողմի քաղաք մտնող բոլոր ճանապարհների բանալի «Ճարման» ժողովուրդը նորից դիմեց անգլիական միսիա՝ բողոքելով, որ իրենց երկաթե օղակի մեջ են առնում: Ժողովուրդը սարսափի մեջ է, գտնում է, որ եթե Անգլիային հաճելի է, թող նրան ներկայությամբ բոլորին էլ կոտորեն, վերջացնեն: Միսիայում պատասխանում են, որ Սուլթանովը «Ճարման» գրավել է քոչի ճանապարհը ապահովելու համար: Սա, իհարկե, մի ծաղր էր, մի զարմանալի սուտ, որովհետև քոչի ճանապարհը բացարձակապես ապահով էր և մայիսի 17-ից մինչև այսօր երբ քոչն սկսել էր բարձրանալ, դեռ ոչ մի դեպք, ամենամանրան դեպք անգամ չէր պատահել:

Տեսնելով, որ դրութունը չափազանց ծանրանում է քաղաքում և ամեն ժամ կարող է դժբախտություն պայթել, Անգլիային խորհուրդը եղած 70-ի շափի զինվորներին իրենց օֆիցերների միջոցով հրահանգում է աննկատելի կերպով ինչ նապաշտպանության որոշ միջոցներ ձեռք առնել: Եվ միսիայն նրա համար, որ, եթե քաղաքում սկսվի իսկական կոտորածը, կարելի լինի խուժանի և ասկյարների առաջ միառժամանակ պահել, մինչև որ քաղաքի ժողովուրդը կարողանար Քերթի գլխով անցնել դեպի Քարինտակ գյուղ:

ապա՝ վարանդա: Միևնույն ժամանակ էլ սուրհանդակ ուղարկեցինք շտաբ մի գրությամբ, թե դրութունը լուրջ է, այս ինչ, այն ինչ տեղերում թող ուժեղացնեն դիրքերն ու շղթան և Շուշվա համար էլ բաժին պատրաստեն ու սպասեն Չախմախում, սակայն քաղաք չմտնեն և երբեք ոչ մի տեղ նախահարձակ չլինեն:

Մենք չէինք ցանկանում և շտաբն էլ գտել էր, որ «Շուշի կռիվ տանելու ոչ մի հնար չունենք», որովհետև քաղաքում կռիվը դիրքային է լինելու, իսկ դիրքային կռիվում պետք է ունենալ փամփուշտի անսպառ քանակություն... Փամփուշտ, որ կտրվել էր մեզ համար և որի բացարձակ չզոյությունը խելագարեցրել էր մեզ:

Երեկ անգլիական միսիան «գործով» կանչել էր 8 հոգու: Այսօր, բացառությամբ երկուսի, մյուսները գնացին: Այնտեղ մի քանի ըոպե դեսից դենից խոսելուց հետո միսիայի ներկայացուցիչը ստորագրութուն է վերցնում, որ նրանք այսուհետև ոչ մի քաղաքական գործով չպիտի զբաղվեն և ամեն շաբաթ, երկուշաբթի օրերը պետք է գնան ու ներկայանան միսիային:

Մենք մնացել էինք ապշած: Նիկոլաևյան ժանդարմներին հատուկ գործ էր սա: Սուլթանովի վայրագությունները կարծես թե քիչ էին, մեր «գաշնակիցներն» էլ մյուս կողմից ավելի էին դառնացնում մեր դրութունը: Կեսօրից հետո գանձարանի մի մասը ավտոմոբիլով տեղափոխեցին թուրքական մասը...

Հումիսի 8

Արյունը կուտակվել է Ղարաբաղի գլխին: Ի՞նչ անենք, տեր աստված... հայերը մի կտոր հաց չունեն, ժողովուրդն աղաչում է մի հնար անել, հնարավորություն ստեղծել, որ դաշտերից կարողանան իրենց երեխաների առատ հացը տուն գցել, իսկ դրա համար հարկավոր է առնվազն ամիսուկես ձգձգել, և մենք վճռել էինք տանել ամեն տեսակ վիրավորանք, մինչև որ դաշտային աշխատանքները վերջանան, մտածելով, որ այդ ժամանակամիջոցում, անշուշտ, Հայաստանի կառավարությունն էլ կկարողանա ինչ-որ ձևով լուծել Ղարաբաղի հարցը:

Գիշերը քաղաքի հայ-թուրքական սահմանում թուրքերն էլ ավելի են խտացրել ու ամրացրել իրենց դիրքերը: Մեր դիրքապահ զինվորներից մեկը եկավ ու պատմեց, թե մի թուրք իրեն հայտնեց, որ մի ուսու օֆիցեր գիշերն առաջարկել է հանկարծակի շրջապատել դիրքերում գտնվող փոքրաթիվ հայ դիրքապահներին ու զինաթափ անել, սակայն այդ առաջարկությունը չի անցել: Աննամո՞ւս պնակալիզներ...

Ադրբեջանական զորքերը շրջապատել են ամբողջ քաղաքը, ի՞նչ է Սուլթանովի նպատակը, սատանան գիտի, բայց որ նա դիվային ծրագիր ունի մշակած, բոլորին հայտնի է: Քաղաքի ժողովուրդը շատ հուզված է ու անպաշտպան, իսկ գավառացիները՝ զայրացած:

Ասկյարներն իրենց դիրքերը բերել-հասցրել են մինչև Քերծի գլուխը և մոտեցել Բազունց հորերի գլուխ հայկական թաղին: Շատերն այնտեղից սարսափած՝ իրենց իրերով փախչում են դեպի անգլիական ու ամերիկական միսիան: Մյուս կողմից էլ ասկյարներն իջնում են Ճարմայից, մինչև Քարինտակ գյուղի մոտերքը, մի երկար շղթա կապելով: Այնտեղ, գյուղի մոտակա դիրքերից, դուրս է գալիս Արտեմ Լալայանն ու գոռում, որ թուրքերը հետ քաշվեն իրենց դիրքերը: Նրանք հնազանդվում են:

Քերծի գլուխ հանեցինք մեր փոքրաթիվ զինվորներից քսան հոգու՝ Քարինտակ տանող լեռնուղին պաշտպանելու: Այդտեղ հայ-թուրք պահակներն իրարից բաժանվում են հազիվ 60—70 քայլ տարածությամբ միայն: Դեմառգեմ կանգնած՝ հսկում են միմյանց:

Թուրք ասկյարներից խլած հրացանների ու ձիու փոխարեն Ազգային խորհուրդը որոշեց [նույնը] վերադարձնել Սուլթանովին: Այդ նպատակով անգլիական միսիա մարդ ուղարկեցինք, որ գնա այնտեղ և ասի, որ «մենք խլածը կտանք միսիային, միայն թե թուրքերն էլ հայերից խլածը բերին միսիա: Իսկ միսիան հայերին տա հայերին, թուրքերինը՝ թուրքերին»: Համաձայնեցին, և մենք ձին ու հրացանն ուղարկեցինք միսիա:

Գավառներից միանգամայն կտրվել ենք, հաղորդակցություն պահպանում ենք միայն Քարինտակ—Չախմախ գծով: Այդ գծով էլ տեղեկացանք, որ Խաչնում տրամադրություն

ընկած է և միայն փոքրաթիվ զինվորներ են, որ կազմ ու պատրաստ են դուրս գալու կովի, այն էլ... եթե փամփուշտ և օգնություն հասցվի:

Նույն տեղից հաղորդում են, որ բազմաթիվ սայլեր, բեռնավորված ռազմամթերքով՝ ճանապարհվեցին դեպի Շուշի, որ Ազգամից նոր զորքեր են մտել Խանքենդ և Թնդանոթները, ի ցույց հայերի՝ շարել են Խանքենդի շուրջն ու դեպի Մազի կամուրջ ուղարկել զնդացիները:

Հուլիսի 4

Առավոտյան վաղ վեր եմ կացել ու գնացել Ազգային խորհրդի գրասենյակ: Սիրտս տխուր է, շատ պարզ տեսնում եմ, որ ճգնաժամը մոտեցել է, որ հարվածող բռունցքը բարձրացել է մեր գլխին, և մենք հետ մղելու հնարավորություն չունենք: Քիչ հետո եկան նույնպես և խորհրդի մյուս անդամներից մի քանիսը: Նստեցինք խորհրդակցության: Բոլորս էլ տխուր ենք: Ստացված տեղեկություններն սպառնալից են: Ադրբեջանը լարել է ուժերը Ղարաբաղն ընկճելու: Գավառը պինդ է կանգնած: Խաչնն ու Վարանդայի մի մասն է միայն, որ անգն են և վախենում են: Վարանդայի մյուս մասը, Դիզակն ու Զիվանշիրը որոշ քանակությամբ զենք ունեն, ուստի և՛ տրամադրությունը մարտական է: Զինված մարդու հոգեբանությունն այլ է լինում. երբ զենքը ձեռքից առնում ես, նա կորցնում է հոգեկան հավասարակշռությունը: Զենք ունեցող գավառները տղամարդու պես պատրաստ էին կուրծք տալու, և եթե գոնե յուրաքանչյուր հրացանին 300 փամփուշտ ունենայինք, բոլոր ճակատներում նախահարձակ կլինեինք, հուսալով, որ նախքան Ղարաբաղի մեռնելը, նա մահացու հարված պիտի տա արյուն սիրող թշնամուն: Գոնե դրսից մի հուսադրող ձայն լսեինք...

Կարողացել էինք անգլիացիների հետ Աշոտին ուղարկել Քիֆլիս, մեծ հույս ունենալով, որ նա կներկայացնի մեր անելանելի վիճակն ու կշտապեցնի օր առաջ մի բան, մի որևէ բան անել Ղարաբաղի համար: Բայց օրերն անցնում էին, իսկ մենք դեռ սպասում էինք, ինչպես որ սպասեցինք Միշայի ու Արղուսյանի գալուց հետո, ինչպես որ սպասել էր ամբողջ

Ղարաբաղը երկար ու ձիգ ամիսների ընթացքում, սակայն ոչինչ ու ոչինչ շատանալով:

Ժողովուրդը կծկված է: Զգուշանում է խանութները բացելուց: Միսիան սուսուփուս ինչ-որ գործ է կատարում: Լուր են բերում, թե ամերիկական միսիայում գլխավոր բժշկի կարգադրությամբ՝ 500 հոգու համար վիրակապեր են պատրաստում... Ուրեմն այստեղ մի բան նախօրոք գիտեին կամ էլ զգացել էին, որ այս անսահման էլեկտրականացած դրությունը կայծակներ պետք է ծնի:

Շուշվա հաշիվը դեռ վաղուց վերջացած էր այն օրվանից, երբ Սուլթանովը ոտքը դրել էր այնտեղ, անգլիացիների հովանավորությամբ: Բայց Ազգային խորհուրդը համառորեն չէր ցանկացել տեղի տալ: Այժմ որոշվեց, որ եթե այլևս Շուշիում մնալու հնարավորություն չլինի, Ազգային խորհուրդն անցնի գավառ:

Քաղաքում էլ անելիք չկար: Շատ-շատ միայն գոտեպնդիչ խոսքեր էինք ասում ու անհոգ ձևանում: Գավառի մասին գիտեինք, որ շտաբն այնտեղ գործում է, այս գիշեր մեզնից մի քանիսն էլ կգնա այնտեղ և ի՛նչ կլինի, թո՛ղ լինի:

— Հոգիս վկայում է, որ այսօր մեզ հաց ուտելու «իրավունք» չեն տալու, — ասաց Նղիշեն, — գնանք օր առաջ մի բան ուտենք:

Դուրս եկանք, որոշելով, որ միմյանց հանդիպենք վանքի բակում:

Խորհրդավոր լուսթյունը, մարդկանց մտահոգված դեմքերը, դիրքերում աշալուրջ միմյանց շարժումները դիտելը վկայում են, որ գործը չափազանց հասունացել է և բավական է միայն մի հրացանի պայթյուն, որ ամեն կողմերից սկսվի կարկտային գնդակոծությունը:

Ժամը ուղիղ 10 և կեսն էր: Հանկարծ Քերծի գլխից մի քանի հրացաններ պայթեցին. դա ազդանշանն էր դժոխային գործողության, կես բուպե շանցած՝ քաղաքի թուրքական մասից, ասկյարների բոլոր դիրքերից սկսվեց մի սոսկալի հրացանաձգություն, որին մասնակցում էր և Սուլթանովի եղբայր Սուլթանը՝ իր հետ բերած բազմաթիվ կատաղի քուրդ ձիավորներով:

Իսկույն քաղաքը սկսվեց. երեխաներն ու աղջիկները լաց ու կոծով փախան դեպի իրենց տները: Խանութները իսկույն կողպվեցին: Հայկական մասում ոչ մի թուրք չկար. կարծես նախօրոք զգուշացված՝ նրանք քաշվել էին ներքև: Իսկ թուրքական մասում բավականաչափ հայ մշակներ ու արհեստավորներ կային, որոնց քաղցն ստիպել էր գնալ թուրքերի համար օրավարձով աշխատելու: Նրանք, իհարկե, կմորթվեին:

Վազեցիիք վանքի բակը: Եվ առաջին հրահանգը, որ մի ավելորդ անգամ ևս տրվեց մեր փոքրաթիվ կտրիճներին, այն էր, որ թուրքերի հազար գնդակին մի անգամ պատասխանեն, քանի որ փամփուշտ չկա:

Սուրհանդակը Քերծի գլխից լուր բերեց, որ առաջին զենդակ գցողը թուրքերն են եղել: Նրանց օֆիցերը, Սուրխայ անունով, դուրս էր կանչել հայերի դիրքերից մեր օֆիցերին՝ Ավագին՝ «զրույցի»: Եվ «քաղցր» զրույցի ժամանակ, երևի նախօրոք պայմանավորված, դավաճանական գնդակով խփում են Ավագին: Հայ զինվորները, այդ տրամադրությունը տեսնելով, դուրս են թռչում դիրքերից, վրա պրծնում, ասկյարներին քշում այդ կողմի բոլոր դիրքերից և խփում մի օֆիցերի ու երեք ասկյարի: Այնուհետև մինչև վերջ՝ խլված դիրքերը մնում են մեր ձեռքին: Մյուս կողմից էլ, 5 հոգուց բաղկացած մեր դիրքապահները «Վերին դարվազի» մոտ, ժայռի վրայից ցած են վազում, փակում զինված քոչվորների առաջը, վերցնում 200 ոչխար, մի քանի ձի և սպանում ութ հոգու:

Քաղաքացիներից մի քանի հոգի եկան վանքի բակն ու անձամբ դիմեցին ինձ, թե ցանկանում են դիրքերում կրոժողներին հաց մատակարարելու հոգսը իրենց վրա վերցնել և գործը զուլխ բերել հանգանակությամբ: Ես ուրախացա, որ ժողովրդի մեջ մարդիկ կան, որոնք կամովին օգնության հասնել են ցանկանում, միայն պատվիրեցի, որ նվիրատվություններն անպայման կամավոր լինեն, ով կտա՝ կտա, ով չի տա՝ ստիպել չի կարելի: «Ինչքան կարող եք, հավաքեցեք, եթե պակասություն լինի, կհոգա Ազգային խորհուրդը», — ասացի ես ու նրանք գնացին, որպեսզի մի քանի օր հետո մեր սիրտը դառնացնեն այդ լավ գործի տեղը ելքով...

Ժամը 12-ին մոտ գնդակոծությունը հասավ աներևակայելի չափերի: Հայկական թաղերում յուրաքանչյուր տուն, յու-

բաքանչյուր փողոց տնքում էր թուրքերի անհաշիվ գնդակների տարափից: Պատերին քավելով, ժողովուրդը կամաց-կամաց հավաքվեց վանքի բակում, և սկզբում շշուկով, հետո բարձրաձայն, այս ու այն կողմից ձայներ լսվեցին, թե իրենք չեն կարող, ոչ մի տեղից օգնություն չստանալով, իրենց երեսխաներին ու կանանց հանձնել թուրք կատաղած ամբոխի ձեռքը, հարկավոր է հպատակվել: Քաղաքը հպատակվի, իսկ գավառն՝ ինքն է իմանում, ինչ ուզում է, թո՛ղ անի:

«Հպատակություն» խոսքն այնքան էր ատելի նույնիսկ Շուշվա ապիկարների համար, որ առայժմ չկամեցան իսկույն գործի անցնել, այլ սպասողական դիրք բռնեցին, մանավանդ որ դուրս եկան գավառացիներ, որ ամենաանողորմ հայհոյանքներով վրա պրծան քաղաքացիների վրա, թե՛ «եթե մեկ էլ հպատակության խոսք բաց անեք, ձեզ շանսատակ կանենք»:

Ժամը 12-ին հրացանաձգությունը հսկայական շափեր ընդունեց: Զանազան սխտեմի հրացաններ՝ տարբեր տեղերից կա՛մ ծկլթում էին, կա՛մ ճայթում, կա՛մ որոտում: Մանավանդ մզկիթի գլխից շորս հրացանավոր իրենց «դումդումներով» էլ դադար չէին առնում, կարծես փամփուշտների ամբարի կողքին էին նստած՝ զարկում էին ու զարկում:

Որքան էլ զայրույթով լցված լինենք դեպի մեր տմարդի թշնամիները, պետք է պարզ խոստովանենք, որ, ըստ երևույթին, կոտորածի հրաման չկար, որովհետև թուրքերը եթե ուզենային, մի երկու ժամվա մեջ ամբողջ քաղաքը կարող էին մոխրի վերածել և կոտորել, ով չկարողանար մի կերպ դուրս փախչել: Նրանց նպատակն էր սարսափ, խուճապ առաջացնել քաղաքում. դա նրանց հաջողվել էր: Ժողովուրդը ահաբեկված էր...

Այդ միջոցին էլ Ղայբալու շենի²³ մոտից լուր հասավ, որ քրդերի ու թուրքերի մեծ բազմություն եկել, «հոտ-հոտ» է քաշում գյուղի շորս կողմից:

Ժամը 1-ին, երբ հրացանաձգության սարսափը գագաթնակետին էր հասել, ժողովրդի պատվիրակները, վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանին վերցրած՝ գնում են անգլիական միսիա, աղաչում, որ փրկեն քաղաքը: Ես էլ վանքի բա-

կից դուրս գալով, անցնում էի մահմեդական սիպայների հանրակացարանի մոտով:

— Κοροϊο, — կանչում էին նրանք՝ ծիծաղելով պատի տակով վազող հայերի հետևից ու ականջ դնելով հրացանների անընդհատ ձուռոցներին:

Պատվիրակությունը գնում է միսիա, իրավիճակը հայտնում այնտեղ: Մայրը նստում է ավտոմոբիլ և քշում Սուլթանովի մոտ: Ժամը 1-ին նա վերադառնում է ու հայտնում, թե Սուլթանովը վերջնագիր է դրել, որ եթե անգլիական միսիայում ստորագրություն տվող անձինք հեռանան քաղաքից, անմիջապես կդադարի հրացանաձգությունը, կվերանա բոլկոտը, կվերականգնվեն նախկին բարիդրացիական հարաբերությունները և զինված ամբոխին կստիպի ցրվել իրենց տեղերը:

Նրանք, ում հասցեին ուղղված էր Սուլթանովի վերջնագիրը, արդեն անցել էին գավառ: Մնում էին միայն երեք հոգի, երեքն էլ դաշնակցական՝ Եղիշե Իշխանյանը, Հարություն թումյանը և Աստվածատուր Ավետիսյանը: Նրանք իսկույն մտավորականների մի փոքրիկ ժողով գումարեցին Հ. Բահաթրյանի պարտեզում, որոշելու, թե ինչպես վարվեն: Բուլբուլը լուռ էին, ո՛վ կարող էր նրանց խորհուրդ տալ, որ հպատակվեն Սուլթանովի կամքին: Միայն եպիսկոպոսն էր աղաչում, թե հանուն անպաշտպան կին-երեխաների՝ «համաձայնվեցե՛ք»: Եղիշեն տատանվում էր, Ավետիսյանը լուռ էր, իսկ թումյանը պնդում էր, թե չպետք է խաբվել, եթե իրենք Շուշուց դուրս գան, ճանապարհին սպանելու են, և Սուլթանովի խոստացած խաղաղությունը, միևնույն է, չի լինելու:

Կես ժամ խորհրդակցելուց հետո որոշեցին գնալ անգլիական միսիա և տեղնուտեղը իմանալ, թե ինչ է պահանջվում իրենցից:

Ծանր, սարսափելի ծանր բոլակներ էին: Եթե համաձայնվեին դուրս գալ Շուշուց, ես էլ համոզված էի, որ ճանապարհին կարող են պատառ-պատառ անել: Բայց, մյուս կողմից էլ, գուցե իսկապես ժողովուրդը փրկվեր, եթե նրանք հեռանային: Եղիշեին, որին անչափ սիրում էի իբրև ընկերոջ և լավ մարդու, ասացի.

— Ես չեմ կարող ձեզ որևէ խորհուրդ տալ, ինքներդ վրձ-
ուեցե՛ք և եթե վճռեք, որ պետք է հեռանաք Շուշուց, ես կա-
րող եմ ինձնով փոխարինել մեկն ու մեկին: Դու կմնաս, կանց-
նես գավառ, իսկ ես կգնամ:

Եղիշեն տխուր ժպտաց և իր ընկերներով, եպիսկոպոսի
հետ միասին, գնացին անզլիական միսիա... իսկ ներքևից
թուրքերի հրացանները ճոռում էին ու ճոռում:

Այդ միջոցին էլ Ղայբալու շենից հեհեհ մի մարդ հասավ,
թե «բազմաթիվ զինված թուրքեր բռնել են գյուղի բարձրու-
թյուններն ու հարձակում են գործում և փոքրաթիվ դիրքա-
պահ հայեր մի կերպ նրանց ներխուժումը կասեցնում են:
Օգնություն են խնդրում»: Բայց մենք հույս ունեինք, որ Խա-
շենից, որքան էլ իրենք թույլ լինեն, օգնություն կհասցնեն՝ ըստ
նախօրոք մշակած ծրագրի:

Ժամը 4-ին վերադարձան Եղիշեն և մյուսները: Մայրը
նրանց կրկնել էր Սուլթանովի պահանջը, ինքն էլ իր կողմից
ավելացնելով, թե՛ «ես չեմ պահանջում, որ հեռանաք, այդ
ձեր կամքն է, բայց ձեր գնալուց հետո երաշխավորում եմ,
որ կռիվն անմիջապես կդադարի ու քաղաքում արյունահե-
ղություն չի լինի, ինչպես և երաշխավորում եմ Շուշուց հե-
ռանալով՝ անվտանգ մինչև Վրաստանի սահմանն անցնելը»:

Եղիշեն, Ավետիսյանն ու Թումայանը համաձայնվել էին,
և մայրը գնացել էր Սուլթանովի մոտ՝ խոսելու այդ մասին:
Երեկոյան ամեն ինչ հայտնի դարձավ: Աքսորվողները պետք
է գնային և հենց որ նրանց ավտոմոբիլը, անզլիական օֆի-
ցերի ու Սուլթանովի կողմից նշանակված մարդկանց հսկո-
ղության տակ, Շուշվա դիրքերից դուրս գար, անմիջապես
պետք է դադարեր հրացանաձգությունը, ներմուծվեին հաց և
այլ մթերք ու տիրեր խաղաղություն:

Այդ լուրը տարածվեց ժողովրդի մեջ: Մարդիկ փոքր-ինչ
սրտապնդվեցին: Շատ էին կծկվել, կուշ եկել: Բայց մյուս
կողմից էլ գնդակների տարափն ավելի սաստկացավ, թեև
սիպայներն արդեն դուրս էին եկել որոշ կետերում դիրքեր
բռնել՝ մնալով միայն դիտողների դերում:

Իրիկնադեմին անզլիացի սպաները մի քանի սիպայներով
դուրս եկան դեպի քաղաքի հայկական և թուրքական սահ-
մանը: Նրանք մտնում էին հայերի դիրքերը, որտեղ հայ զին-

վորները մեկ-երկու հոգով դիմազարավում էին հարյուրավոր
հրացանավորների, և հայ զինվորների հրացանների փողերից
հոտ քաշում, թե չե՞ն կրակել արդյոք: Մինչդեռ դիմացից
գնդակները վզալուով անցնում էին բազում ուղղությամբ:

Հոմերի 5

Ամբողջ գիշերը շարունակվում էր կատաղի հրացանաձգու-
թյունը: Բոլոր դիրքերից, առանց բացառության, մարդ մար-
դու հետևից զալիս էր փամփուշտ պահանջում և, իհարկե,
դատարկաձեռն հետ դառնում: Քարինտակում 100—200 զին-
վորներ, սպա Ստեփանյանի առաջնորդությամբ, սպասում
էին մեր հրահանգին, որ մտնեն քաղաք, բայց պատվիրեցինք
գիշերը քաղաք հասցնել մի 50 հոգու, վերևի դիրքերը ուժե-
ղացնելու և ուրիշ ոչինչ:

Գիշերվա ժամը 12-ին, անզլիական օֆիցերների հսկո-
ղությամբ, «աքսորյալները» եկան իրենց տները, հազուսու-
նեք փոխեցին՝ առավոտյան Շուշուց հեռանալու համար:

Խիստ հուզումնալից գիշեր անցկացրինք: Վերջապես լու-
սացավ: Լուսացավ, և թուրքերն էլ արթնացան, հրացանները
վերցրին ու նստեցին փամփուշտների ամբարի մոտ: Մինչդեռ
մերոնցից այնպիսինը կար, որ ամբողջ կովի ընթացքում ար-
ձակել էր ընդամենը հինգ փամփուշտ, որովհետև ունեցածը
միայն 15 հատ էր:

Ազգային խորհրդի անդամ Հրանտ Բահաթրյանը լուր բե-
րեց, որ ավտոմոբիլները պատրաստ են, և շուտով «աքսոր-
յալները» կճանապարհվեն:

Իսկապես ժամը 9¹/₂-ին Եղիշեն, Ավետիսյանն ու Թում-
այանը ճանապարհ ընկան:

Վերին աստիճանի զայրացած ու անզոր կատաղությունա-
բալիով, սիրտս պնդացրած՝ շափում էի ժամանակը, թե մե-
տոնք ե՞րբ կհասնեն Շուշվա արևելյան դռներին և երբ, իմ
հաշվով, նրանք արդեն հասած պետք է լինեին այնտեղ, հան-
լարծ երկու անգամ ուժեղ զալպեր թնդացին: Սիրտս կծկվեց:
Քվաց, թե նախազգացումս կատարվեց, այսինքն՝ նրանց դա-
լաճանաբար գնդակահարեցին: Բարեբախտաբար շուտով
ացահայտվեց, որ ես սխալվել եմ, այդ զալպերը երևի ուրա-
խության նշաններ էին:

Անգլիական միսիայի տված հավաստիացումներից պետք էր սպասել, որ Սուլթանովը կկատարի իր խոստումը, այսինքն՝ հենց որ «հանցավորները» Շուշուց հեռանան, իսկույն կդադարի հրացանաձգությունը, բոլկոտը կվերանա և այլև Քայց դուրս եկավ հակառակը: Ավտոմոբիլները դեռ Մազի կամուրջ չհասած՝ սկսվեց մի կատաղի հարձակում Ղայթալու շենի վրա, իսկ քաղաքում սաստկացավ հրացանաձգությունը:

Ենթադրելով, որ Սուլթանովը ձեռք չի քաշել Ղարաբաղի ավերելու դիվալին իր ծրագրից, բոլոր դեպքերի մանրամասնությունները գրավոր կերպով անմիջապես հայտնվեց Ղարաբաղի Ազգային խորհրդի գավառ անցած անդամներին ու գլխավոր շտաբին: Ես առաջարկում էի խիստ զգույշ լինել դինվորությունը պատրաստ պահել՝ Շուշին թողնելով իր տկար ուժերին, որովհետև եթե գավառի ուժերը հավաքվեին Շուշի ապա գավառն անտեր կմնար ու կկորցնեի իր խորհրդավորությունը: Մեզ թվում էր, թե Սուլթանովը գավառի ռազմական ուժերի մասին ստույգ տեղեկություններ չունի և կքաշվի այնտեղ ռազմական գործողություններ սկսելիս:

Հուսահատական մաքառումից հետո Ղայթալու շենն ընկավ ժամը 1-ին, ու սկսվեց կոտորածն անպաշտպան կին-երեխաների, ալան-թալանն ու ավերվածությունը անգլիական ու ամերիկական միսիաների քթի տակ ու հրդեհում ամբողջ գյուղը²⁴: Անգլիական մի քանի սպաներ դուրս էին եկել Քերժի գլուխը՝ թաթարական բարբարոսություններին թաժաշա անելու: Գյուղն ավերող բարբարոսները Քերժի գլխի խմբավածներին մի զալպ են ուղղում և մի գնդակ գալիս սպաներից մեկի ուսադիրն է պոկում: Սպաները խոհեմաբար հենց դառնում դեպի իրենց տեղերը:

Ժամը 2-ին քաղաքում մի հսկայական խուճապ է առաջանում, երբ ժողովուրդը տեսնում է, որ հրացանաձգությունը շարունակվում է ավելի ուժեղ թափով, որ միսիաները մատ մատի շեն տալիս, և որ Ղայթալու շենը կոտորվում անխնա կերպով: Մյուս կողմից էլ, լուրեր են տարածվում, թե Ղայթալու շենն ավերող հրոսակախմբերն ասկյարների հետ պատրաստվում են Շուշին ևս ավերելու, [ժողովուրդն] իրենց կորցնում է, զգաստացնող, սիրտ տվող խոսքերը դառնում են միայն դատարկ հնչյուններ և քաղաքի ամեն ծայ

րից մեծ-փոքր, կին-տղամարդ՝ մարդը մի կապոց շալակած, դիմում է դեպի ներսի թաղերը՝ աշխատելով ինչքան կարելի է մոտ լինել միսիաներին: Դեռ հուլյաները չէին կրտրել նրանցից:

Նկատելի էր, որ ադրբեջանական հայ ազնետները ևս գործում էին, ուժեղացնելով խուճապը: Ժամը 3-ին ժողովուրդն իրար գլխի անցնելով՝ հավաքվեց վանքի բակում ու բացարձակ պահանջ դրեց՝ գնալ ու Սուլթանովին քաղաքի կողմից հպատակություն ցույց տալ, գավառն ինքն է իմանում, ինչ ուզում է, թող անի: Դրուժյունը շափազանց լուրջ էր: Ղայրույթից արցունքը խեղդում էր ինձ...

Այդ միջոցին Շուշվա հարուստներից մեկը, որ հեղափոխականներին ատում էր և հալածվում նրանցից, հոգեկան բարձր թոխջով վրա պրծավ խելապատառ եղած շուշեցիներին ու գոռաց, թե «ոչ ոք չհամարձակվի Ադրբեջանին հպատակվելու անունը տալ», թե «փորձենք մի անգամ էլ գնալ միսիա, տեսնել ի՞նչ է դառնում»:

Ժողովուրդը տեսնելով, որ Ասլան Աթաբեկյանը՝ իրենց մարդը, դեմ է Սուլթանովի ոտքերն ընկնելուն, համաձայնեց նրա հետ և ընտրելով յոթ հոգի, եպիսկոպոսի հետ ուղարկեց անգլիական միսիա, իսկ մենք էլ կարգադրեցինք, որ քաղաքում մնացած փոքրաթիվ կովոդներն այդ գիշեր թողնեն քաղաքն ու հեռանան գավառ: Ազգային խորհրդից էլ մարդիկ պետք է մնային քաղաքում՝ գավառի հետ կապ պահպանելու:

Պատվիրակությունը գնաց միսիա, իսկ ժողովրդի մի մասը ցրվեց՝ ծնկները թակելով, մյուս մասը մնաց վանքի բակում, սպասելով, թե ինչ լուր պետք է ստացվի:

Վերջին ժամանակներս անգլիացիների հետ բավականին հաշոյ կապ պահպանողը Հրանտն էր: Կովի սկզբից մինչև այս պահը նա շարունակ այնտեղ էր ու պնդում էր միսիայի առաջ՝ վերջ տալ այս խայտառակությանը, որը կանդորդառնա Անգլիայի պատվին: Երեկոյան ժամը 6-ին Հրանտը մի տոմսակ ուղարկեց, թե՛ «ընտրեցե՛ք ժողովրդից վեց մարդ և ուղարկեցե՛ք միսիա, որպեսզի անգլիական սպաների հետ դուրս գան դիրքերը, վեց հոգի էլ թուրքերի կողմից կգան իրենց դիրքերը և երկուստեք կդադարեցնեն հրացանաձգությունը»:

Մարդիկ ուղարկվեցին, որոնք գնացին դիրքերը: Այդտեղ անգլիական միսիայի կողմից կարգադրություն արվեց, որ սիպայներն աշալուրջ հսկեն և որ կողմից որ հրացան բացվի, իսկույն արձանագրեն, որպեսզի հրացան արձակողին պատասխանատվության կանչեն:

Հայերի կողմից հրացանաձգություն, առանց այն էլ, իհարկե, չկար, բայց թուրքերի կողմից շարունակ տրաքում էին հրացանները, իսկ արձանագրել... ո՞ր մեկն արձանագրեին:

Այսպես թե այնպես՝ դրությունը փոքր-ինչ խաղաղվեց, և քաղաքի վախկոտները որոշ շափով հանգստացան:

Երեկոյան անգլիական միսիայից մի նոր կարգադրություն ևս հասավ, այն է՝ դատարկել զորանոցը, որովհետև սիպայներ պետք է բնակեցվեն այնտեղ:

Չորանոցը քաղաքի արևմտյան դռների մոտ և քաղաքի իշխող դիրքի վրա լինելով, հայկական մասում, մինչև այժմ մեր ձեռքին էր և 35 էլ զինվոր էինք պահում այնտեղ: Բայց զինվորների գավառ անցնելով՝ զորանոցը դատարկ էր մնացել, որտեղ կարելի էր գաղթականներ բնակեցնել: Քանի որ սիպայներ են ուզում դնել, ի՞նչ արած, թող դնեն: Միայն մի փոքր կասկած ընկավ սիրտս, թե չլինի՞ հանկարծ Աղբր բեշանի ասկարներ բերեն ու լցնեն: Կասկածս հայտնեցի մի քանիսին, սակայն նրանք ժպտացին, ասելով, թե էլ ինչո՞ւ միսիան մեզ խաբի, զորանոցը նրանց, անշուշտ, հարկավոր է, քանի որ Աղբրից անգլիական նոր զորքեր են գալու:

Ղայբալու շենի տները վառվում էին մեկը մյուսի հետևից և ծուխը թանձրացել էր լեռան լանջին: Պարզ էր, որ «բար հարևանները» անցնում էին տնետուն ու մի առ մի վառում գյուղի հետքը կորցնելու մտադրությամբ: Բայց երկինքը խղճաց, սկսվեց մի հորդ անձրև ու բոցավառվող տների կրակ հանգցրեց, որից հետո տիրեց մի սպանող, գերեզմանային լուռություն: Մեկ-մեկ միայն տարբեր կողմերից մի քանի հրացաններ էին պայթում ու դարձյալ լուռ:

Հուլիսի 6

Ազգային խորհուրդը գավառ անցնելուց հետո եպիսկոպոսը ցանկանում է ընդառաջ գնալ ժողովրդի խնդրին և անձամբ հարաբերության մեջ մտնել Սուլթանովի հետ: Եպիսկոպոսը

կողմնակա հասկացնում են, որ ինքնագլուխ գործ բռնելը ներկա պայմաններում հարմար չէ, լավ կլինի, որ քաղաքացիներից ընտրվի մի հանձնաժողով, ինքը նրա հետ խորհրդակցի ու նոր միայն խոսի պատասխանատու անձանց հետ:

Այդպես էլ անում են: Հավաքվում են 20—30 հոգի, ընտրում 10 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որտեղ առանց իմ համաձայնությունը հարցնելու, պցում են և ինձ, ինչպես և Հրանտ Բահաթրյանին: Երկուսս էլ Ազգային խորհրդի անդամներ էինք, բայց Ազգային խորհուրդն այժմ գտնվում էր գավառում ու մենք, այսպես ասած, միայն կապ պահպանողներ էինք: Ես գավառ գնալ չէի կարող, որովհետև դեռ Բաքվում եղած ժամանակ ձեռնափայտով հագիվ ման էի գալիս, իսկ այժմ ավելի վատ դրության մեջ էի: Երբ իմացա, որ ինձ ընտրել են մի անհամապատասխան հանձնաժողովում, հարց դրեցի դաշնակցության կոմիտեի առաջ, թե՞ կարո՞ղ եմ, արդյոք, մասնակցել այդ հանձնաժողովի վարելիք գործերին: Կոմիտեն գտավ, որ որոշ նկատառումներով մասնակցությունս անհրաժեշտ է: Այնուամենայնիվ, այդ օրը, թեև հրավեր էի ստացել, չգնացի, միայն իմացա, որ տխուր հռչակ ստացած Ռուբեն Շահնազարյանին²⁵ ուղարկել են Սուլթանովի մոտ, իմանալու, թե նա ինչ է մտածում բորբոքված կրքերը հանդարտեցնելու համար:

Պետք է ասել, որ Շուշին փաստորեն վաղուց էր ընկել Սուլթանովի ճանկը և այս արյունահեղությամբ նա ոչինչ չշահեց. ձեռքին դարձյալ միայն Շուշին էր, իսկ գավառը, նախկին դրությամբ, ոչ մի Աղբրեջան չէր ուզում ճանաչել:

Ռուբեն Շահնազարյանը վերադառնալով՝ հայտնում է, որ Սուլթանովը ցանկանում է տեսնվել Վահան եպիսկոպոսի հետ:

Սուլթանովը ցանկանում է տեսնվել եպիսկոպոսի հետ... Իսկ Ղայբալու շենը դեռ շարունակում է մոխիրների վերածվել: Երեկ երեկոյան անձրև եկավ ու բարբարոսների կողմից հրդեհվող տների կրակը հանգցրեց: Իսկ այժմ Քերթի գլխից լավ երևում էր, թե ինչպես թուրքերը տնից տուն անցնելով՝ քանդում են կիսավեր տները, և թե ինչպես որսորդական շների պես թփերի տակ ընկած՝ թաքնված հայերի են փրկում:

րում: Եվ մեկ-մեկ բացվող հրացանների ձայնը հաստատում է, որ այս կամ այն թիփ տակ մի հայ երեխա, կամ մի հայ կին, կամ մի հայ տղամարդ փչեց իր շունչը... գնաց բողոքելու երկնքում, որ գետնի երեսին պաշտպան շունեցավ, պաշտպանելու եկած դաշնակիցն էլ հովանավորեց «մասգործներին»:

Այսօր մեր «դաշնակիցներին» մի նոր քայլին ևս վկա եղանք: Երեկ կարգադրել էին մաքրել զորանոցը, այսօր առավոտյան միսիայից գնում են տեսնում, որ մաքրված է: Եվ մինչև հայերն սպասում էին, թե ահա անգլիական զորքը կգա այնտեղ, կեսօրին սիպայների մի խումբ առաջից, մի խումբ էլ հետևից՝ մեջտեղ առած ադրբեջանական ասկյարներին, հայոց հողով անցկացնելով, ապահով կերպով տարան ու լցրեցին զորանոցը՝ այդպիսով հայկական մասը դնելով մշտական վտանգի տակ: Այն զորանոցը, որ տաճիկները Շուշի մտած ժամանակ անգամ Ադրբեջանը ոտք դնել չէր համարձակվել...

Շնորհակալություն անգլիական հրամանատարությունը: Շատելվորը հասավ իր նպատակների մի մասին ու շահեց Սուլթանովի խորին հարգանքը:

Բայց ինչպիսի զգացումներ պիտի առաջանան տարաբախ Փահլուվի գյուղացիների սրտում, քանի որ թուրքերը, ոգևորված, երեկոյան ժամը 4-ին շրջապատելով այդ փոքրիկ գյուղը, սկսեցին թալանել, հրդեհել ու ավերել:

Սուլթանովն այդպիսով կատարում էր իր հանդիսավոր խոստումը, թե՛ հենց որ «խոռվարարները» հեռանան Շուշուց, իսկույն ամեն ինչ կդադարի: Անգլիացիներն ականատես էին այդ խաբուսությանը, բայց կարծես թե իրենց լուսթյամբ սրբազործում էին թուրքական տականքների արյունոտությունները՝ իրենք ավելի մեծ խաբեքա լինելով:

Հոգևոր 7

Եզրիկոպոսը գնում է Սուլթանովի մոտ և վերադառնալով հայտնում, որ Սուլթանովն իրեն ընդունեց մեծ պատվով միանգամայն լցված է խաղաղասիրություն, ցավում է տեղում և անհեղձ գեպքերի առթիվ և այլն, մի խոսքով՝ եպիսկոպոս:

քերանը բաց էր մնացել Սուլթանովի «սոխակային գեղգեղանքներից»: Հայտնեց նույնպես, որ վաղը նա գալու է փոխայցելության:

Հոգևոր 8

Ի պատասխան Սուլթանովի «բարի» տրամադրության, այսօր կրկնապես գյուղը վառվում է՝ պատկերը լրացնելու համար: Անգլիական միսիան, ինչպես ասում են, դիմել է Սուլթանովին, որ հերիք համարի եղածը:

Ժամը 1-ին Սուլթանովը գալիս է եպիսկոպոսի մոտ: Նրա հետ փոքր-ինչ զրուցելուց հետո անցնում է առաջնորդարանին կից դպրոցի բակը, ուր հավաքվել էին բավականաչափ շուշեցիներ և մի ճառ ուղղում: Ծա չէի գնացել, բայց պատմեցին, թե նա ասել է, որ ինքը, իբրև բժիշկ, իր բժշկական կարողությունը միշտ օգտագործել է մի մարդու, մի հիվանդի կյանք փրկելու ու երբ այդ հաջողվել է, իրեն բախտավոր է զգացել, արդ, որքան պետք է ցավի այժմ իր սիրտը, երբ Ղայբալու շենին դժբախտություն է պատահել: Ապա նա գտնում է, որ ավերված գյուղերը պետք է վերականգնվեն, որքերը՝ խնամվեն, վնասները՝ հատուցվեն:

Իսկ մինչ այդ կեղծավոր հրեշն իր քաղցր երգն էր երգում, Ղայբալու շենից մեկ-մեկ կին կամ տղամարդ էր հասնում Շուշի, հրաշքով ազատված, և խելագարի պես հեծեծալով պատմում, թե ինչպես անողորմ կերպով իրենց կոտորեցին, ինչպես կանանց ու աղջիկներին լվեցին, բռնաբարեցին ու շատերին էլ տարան... Ամբողջ գյուղում մի շուն, մի հավ չի մնացել, բոլորը մաքրել-տարել են:

Քաղաքում գտնվող գավառացիները սեղմում էին ատամներն ու խորհրդավոր կերպով գլուխները շարժում, ասել ուզենալով, թե «այս գազաններին պետք է ենթարկվեն»:

Մեզ շատ էր զարմացնում, թե ինչու Խաչենից օգնություն չէին գնացել ավերվող գյուղերին: Այսօր տեղեկություն եկավ, որ Դալի-Մահրատուն 250 հոգի հավաքած, եղած-չեղած փամփուշտները վերցրած՝ եկել է մինչև Խնածախ գյուղը, բայց տեսնելով, որ այդտեղ ասկյարները դիրքեր են բռնել զենքացիներով, լավ է համարել ինքն էլ հենց այդտեղ դիրքեր բռնել ու մնալ, վախենալով, որ չեն կարող շղթան պատռել

ու անցնել, կամ շատ-շատ, եթե պատուեն էլ, ապա եղա
փամփուշտը կվերջանար, իսկ առանց զենքի օգնության գնա
լըն էլ իմաստ չունեիր ու ամբողջ խաշենը կմնար բախտ
կամքին:

Հոմերի 9

Կարծելով, որ Շուշիում խուճապ գցելով և մի քանի գյու
ղեր ավերելով, Ղարաբաղը սարսափահար պետք է գա ու
աղաչի Սուլթանովին, թե հպատակվում է Ադրբեջանին, Սուլ
թանովը և անգլիական միսիան գտնում են մի խեղճ հայ
հետը դնելով անգլիական սպա ու սիպայներ, ուղարկու
ղեպի խաշեն, մեր ամենաթույլ անկյունը, առաջարկելով, որ
այնտեղից՝ «ամեն մի հասարակութունից երկուշափան մար
դիկ զան Շուշիում համաձայնութուն կայացնելու»:

Այդ բանը ինձ հայտնի դարձավ միայն երեկոյան: Բայ
ես համոզված էի, որ ոչ մի գյուղացի չի գնալու, որովհետե
նրանք շատ պարզ պատճառաբանությամբ պետք է ասեին
«Սուլթանովը անգլիական միսիայի միջոցով հանդիսավոր
խոստում է տվել, որ ժողովրդին «գրգռողները» հենց որ հե
ռանան Շուշուց, իսկույն խաղաղութուն է ընկնելու»: Մինչդե
հենց բոլոր պատուհասները թափվում են նրանց հեռանալու
հետո: Էլ ի՞նչ վստահութուն, որ համաձայնութուն լինելու
հետո թուրքերն ավելի սանձարձակ չեն դառնալու՝ հայեր
դիմադրական կորովը վերջնականապես շախջախված համա
րելով:

Եվ իսկապես, Սուլթանովը եթե մի քիչ խելոք մտածե
այդ միջոցին, ապա նա պետք է ճանապարհներից քաշել տար
իր ավազակախմբերին ու ասկյարներին, որ բոլոր ճանա
պարհները փակել էին և թուշունն անգամ անցնել չէր կարո
ու Վարանդայից խաշեն կամ խաշենից Վարանդա գնալու հա
մար գիշերներն էին փորձում, այն էլ՝ զինված խմբերով: Իս
Ասկերանի մերձակա հայկական գյուղերը կատարելապես
դժոխքի մեջ էին: Նրանց թթենիները, թուփը փշանում էին
ցանած բանջարեղենը ոչնչանում, և հենց որ փորձ էին անու
մոտենալու այգիներին, հազարավոր գնդակներ էին թափվու
նրանց վրա: Քանի՜-քանի անգամ այդ գյուղացիները դիմե

ին անգլիական միսիա, թե՛ «ախր Ամերիկայից են մարդիկ
ալիս մեզ մի կտոր հաց տալու, իսկ մեր հացը մեր աչքի
ուռաջ փշանում է, հնարավորութուն տվեք մեր հարստու
թյունը հավաքելու»: Եվ միշտ էլ պատասխանում էին, թե
Սուլթանովին ասել են, նա այդ մասին կկարգադրի: Իսկ Սուլ
թանովի կարգադրութունն այն էր լինում, որ օղակն ավելի
ին սեղմում, այգիներն ավելի էին փշացնում: Բացի դրանից,
Սուլթանովը շարունակ հասկացնում էր անգլիական միսիային,
թե հայերն Ասկերանի շրջանում խճուղին տեղորի տակ են
պահում և թույլ չեն տալիս քաղաքն ապրանք ներմուծել...

Տրամադրութուններս իբրև թե շատ էր լավ, այսօր մի նոր
աստ եկավ մեզ բոլորովին զայրացնելու: Առաջինն այն էր,
որ ծայրագյուղերից լուրեր հասան, թե այստեղի գյուղերում
ամախոսականներ են պատրաստում Սուլթանովին ներկա
ացնելու, թե իրենք ենթարկվում են Ադրբեջանին: Մյուսն էլ
այն էր, որ շուշեցիները բռնել են կովի ժամանակ զինվոր
ների հաց մատակարարողների օձիքը և պահանջել հետ
արձնել իրենց 3200 ուրբին: Ամեն ամիս մեկը տվել էր 15,
20, 50, ամենաշատը՝ 60 ուրբի և դրանից գոյացել էր 3200
ուրբի, որով գնել էին հաց, կանաչեղեն ու բաժանել դիր
երում գիշեր-ցերեկ կովոզ զինվորներին: Այժմ, երբ Շուշին
տնվում էր Սուլթանովի ձեռքում և գիտեին, որ իրենց դեմ
անգնողները մեծ մասամբ ցրվել են գավառ, Սուլթանովին
ուր գալու համար հետ են պահանջում տված կուպեկները,
աստատ համոզված լինելով, որ իրենց դիմանագիտական
այդ «գեղեցիկ» քայլը հայտնի պետք է դառնա Սուլթանովին:
Իրանց այդ պահանջը մերժվեց խորին զզվանքով:

Հոմերի 10

Այս գիշեր թուրքերը հարձակվում են Դահրազ գյուղի վրա,
այց նրանց դեմ դուրս է գալիս մեր մի փոքրիկ զորախումբն
շարժելով՝ քշում:
Նույնպիսի հարձակում տեղի է ունենում Դաշլու շենի վրա:
անոնավոր հետևակ և ձիավոր զորքը տաճիկ և Ադրբեջանի
որս օֆիցերների հրամանատարությամբ գալիս-հասնում
մինչև գյուղը: Փոքրաթիվ հայ պահակներն ստիպված են

լինում նահանջել: Այդ ժամանակ Դոնավարդից հրաման էր
լիս, որ Շուշուց և հարավից առաջ շարժվեն մեր զորամասն
ու շրջապատեն, այլ խփեն աչ ու ձախ թևերից: Այդպես
անում են, և հենց այն րոպեին, երբ թուրքերը մտնում
գյուղի ծայրն ու մի երկու մարագ էլ վառում, հայկակ
ուժերը վրա են հասնում և ուժեղ թափով փլվում թշնա
վրա: Թուրքերը բավականաչափ զենքեր ու դիակներ թող
լով՝ փախչում են, իսկ մի ուս օֆիցեր գոռում է, թե՛ «ն
հանջեցե՛ք, որովհետև կանոնավոր զորքեր են դուրս եկել մ
դեմ»: Հայերը թուրքերի շինքին գրեթե նստած՝ հասնում են մ
չև Մազի կամուրջ, այդտեղից ցանկանում են խփել, խանթ
դը վերցնել, բայց հրամանատարությունը հետ է կասեցնում

Այստեղ մի միջադեպ է պատահում. հայ զինվորներ
մեկը ճանկում է սպանված մի ասկյարի փամփուշտներով
փամփուշտակալն ու համբուրում, ուրախանալով, որ ձե
փամփուշտ է ընկել: Այդքան սաստիկ է եղել Ղարաբաղ
փամփուշտի ծարավը:

Հուլիսի 11

Սուլթանովն ու անգլիական միսիան մարդ էին ուղար
նաչեն, այնտեղից պատգամավորներ հրավիրելու Շուշի՝ հ
մաձայնություն կայացնելու: Բայց երբ նրանք մոտենում
ենածախ գյուղին, ճանապարհը փակում են և շնայած ան
լիական սպան հասկացնում է, թե իրենք «բարի» նպատակ
են եկել, դարձյալ մնում են անդրդվելի: Ստիպված իր
հետ գնացած հային են ուղարկում գյուղ, նրան էլ այնտ
բռնում են, թե «գու լրտես ես»: Վերջինս մի կերպ կարող
նում է ազատվել ու լուր բերել քաղաք՝ ներկայացնելով հ
յերի տրամադրությունը:

Մյուս կողմից էլ տեղեկություններ եկան, որ խաչեն
չնայելով, որ զինվորները սպառնում են, այնուամենայն
ժողովուրդը համախոսականներով ցանկանում է համաձայն
թյան գալ, որովհետև տեսնում է, որ բանը բանից անցել
ոչ ոք օգնության հասնել չի շտապում, իսկ արտերը հաս
նացել՝ հնձողի են սպասում:

Հուլիսի 12

Այսօր ժամը 12-ին եպիսկոպոսի մոտ ժողով եղավ, որտեղ
ուրբեն Շահնազարյանը հայտնեց, որ Սուլթանովը ցանկա
նում է խոսել ժողովրդի ներկայացուցիչների հետ: Շահնա
զարյանը երևի հանձն էր առել այդ ժողովը սարքելու, և երբ
հավաքվեցինք ակումբի մի սենյակ, այնտեղ համարյա բոլոր
ուսակցություններից մարդիկ կային: Թվով 12 հոգի էինք:
Երեկոյան ժամը 7-ին եկավ Սուլթանովը մի երկու ուրիշ
ուրք պաշտոնյաների հետ: Բոլորի հետ ասիական քաղաքա
արությունը շերմ-շերմ բարեկուց հետո (ժողովականները
ատրաստվել էին լսելու, թե ինչ է ուզում ասել օրվա հերոս,
աճիկներին առաջնորդող բժիշկ-զինվորականը) Սուլթանովը
երանը բաց արեց և մի երկար ու խելոք, մտածված ճառ
արաց, ավելացնելով.

— Ես ուրախ եմ, որ այստեղ են գտնվում հայերի մեջ
ություն ունեցող զլխավոր հոսանքների ներկայացուցիչ
ներ: Ուրախ եմ մանավանդ, որ այստեղ են նույնպես և ներ
այացուցիչներն այն կուսակցության²⁶, որ առաջնորդ է հա
արվում հայ ժողովրդի և կցանկանայի նրանցից լսել, թե
նչ կարծիքի են Ղարաբաղի մասին, այսինքն՝ ինչպե՞ս անել,
չժողովրդի իսկական կամքը հանդես գա, որովհետև ես գի
նեմ, որ միայն անհատներն են Ղարաբաղի հայ ժողովրդին
ամառեցնողը:

Որտեղից գիտեր Սուլթանովը, որ այդ ժողովում ներկա
են և դաշնակցության երկու ներկայացուցիչները (ես և Անու
ովան Տեր-Միքայելյանը), դա հետաքրքիր չէ, հետաքրքիր
չէ է, որ նա ստորաբար ժողովրդի համառությունն անհատ
ներին էր վերագրում:

Նրան պատասխան տրվեց, որ կուսակցություններն այս
տեղ նշանակություն չունեն, որ ժողովուրդն իր ընտրյալնե
րից համազումարներ է հրավիրել և համազումարի բերանով
քանիցս հայտնել իր կամքը, որ ոչ մի կուսակցություն Ղա
րաբաղի հայությանը իր կամքը թելադրել չի կարող, այլ ժո
ղովուրդն է, որ ինքը, առանց որևէ արտաքին դրդման, ան
վաղատ կերպով իր կամքն է արտահայտում: Եվ եթե Սուլ
թանովն ու անգլիական միսիան մի անգամ ևս ցանկանում են

լսել Ղարաբաղի ժողովրդին, ապա թող հնարավորութիւնները մինչեւ համազումար ևս հրավիրել, որտեղ լինեն թե՛ անհրաժեշտ լինող հրամանատարութիւնը և թե՛ Ադրբեջանի ներկայացուցիչները՝ վերջին անգամ Ղարաբաղի խոսքը լսելու:

Սուլթանովը, երբ լսեց համազումար հրավիրելու առաջարկութիւնը, մտալովեց, փոքր-ինչ մտածեց և, նախկին տրամադրութիւնը հետացնելով դեմքից, ասաց.

— Ամիսներ ի վեր ձգձգվում է Ղարաբաղի հարցը: Ամիսներ են անցել, որ ես գնեերալ-նահանգապետ եմ: Իմ կառավարութիւնը և թուրք ժողովուրդն ինձնից հաշվետուութիւն են պահանջում Ղարաբաղի համար: Ի՞նչ կարող եմ պատասխանել: Այդ հարցը վաղուց պետք է վերջացած լիներ, բայց իմ գլխավոր հոգսն է եղել [հարցը] վերջացնել առանց ցրտի: Այժմ, երբ ես սպասում էի վերջնական լուծմանը և փազանց երկարած այս խնդրի, այժմ նորից համազումար անուն եք տալիս: Մինչև ե՞րբ ձգձգել:

Բայց որքան էլ Սուլթանովը դառնացած խոսեր, այնուամենայնիվ, մենք դարձյալ պետք է ձգձգեինք, հուսալով, որ մի որևէ տեղից հանկարծ մի լույս կարող է ծագել, և որ տեղից պետք է հնձել:

Հենց ձգձգելու համար է, որ Սուլթանովին պատասխանելով, թե՛ «միայն համազումարը կարող է ձեզ պատասխանել, մենք Ղարաբաղի բախտը որոշող վճիռներ կայացնել չենք կարող»:

— Շատ լավ, — պատասխանեց Սուլթանովը, — թող լինի VI համազումարը, բայց նախազգուշացնում եմ, եթե դա ձեզ ձգձգելու համար եք անում, հուսալով, թե այդ ժամանակաշրջանում հրաշքներ կկատարվեն, այն ժամանակ ես հետևանքների համար պատասխանատու չեմ:

— Համազումարին պետք է ներկա լինի և անգլիական միսիայի ներկայացուցիչը, — ավելացրինք մենք:

— Համաձայն եմ, բայց, պարոններ, ձեռք քաշեք 3-րդ ուժից, որ միայն խանգարում է մեր հաշտ ապրելու մտքը: Այդ երրորդ ուժը մեզ, բացի վնասից, ինչպես տեսնում եք, օգուտ չի բերում: Բայց քանի որ դուք ուզում եք, ապա լինի ձեր ուզածի պես:

— Որպեսզի VI համազումարն ազատ լինի որևէ արտաքին

հնչումներից, այն պետք է գումարով գավառում, — ասա-
լինք մենք:

— Համաձայն եմ: Այժմ կարծեմ ավելացնելու էլ ոչինչ չունեք, միայն ես պահանջում եմ, որ համազումարը լինի մտ ժամանակներս: Հակառակ դեպքում, ես կհամոզվեմ, որ դուք անկեղծորեն չեք մտնում խնդրին ու ձգձգելու համար է, որ համազումարը մեջտեղ եք բերում, և այն ժամանակ ես ստիպված կլինեմ իմ տրամադրութիւնն ատակ եղած իրողցներով խնդիրը լուծել:

Որոշվեց, որ համազումարը հրավիրվի հունիսի 22-ին: «Ժողովի» վերջում Սուլթանովը, ցինիկ ժպիտը բերանին, ասաց.

— Պարոններ, հասկացրե՛ք ձեր գավառական գործիչներին, որ նրանք հրացանաձուլումը շատ չգրադվեն ու դարբեցնեն իրենց հարձակումները զանազան ժայրերում: Առանց այն էլ դուք փամփուշտ չունեք, եթե եղածն էլ այդ ձևով փչաց-
վեք, ո՛ւմ օգուտ: Թո՛ղ պահեն, գուցե պետք լինի:

Հունիսի 12

Այսօր դաշնակցութիւնն արտակարգ ժողով հրավիրեցի, որտեղ մանրամասնորեն զեկուցեցի իրերի դրութիւնը մասին: Ժողովը գտավ, որ պայմանները շարժական ծանր են, որ միայն տարաբար ոչ ոք օգնութիւն չի հասնում և, կտրված է միմեան տեղից, հարկավոր է մի կերպ անել, Ղարաբաղը փրկելու արշակահեղութիւնից:

Հունիսի 18

Այսօր մի խայտառակ դեպք եղավ եպիսկոպոսի մոտ, ուր արտաքրված էին Շուշի առաջավորներն ու քաղաքային հանձնաժողովի անդամները:

Քննվում էր այն հարցը, թե ի՞նչ անել, որ Ղարաբաղի ժողովից սև ամպերը ցրվեն, ինչպե՞ս անել, որ ավերված Ղարաբաղը վերականգնվի: Այդ ժամանակ հարևան սենյակից հարձք ու հուզված խոսակցութիւն ձայներ լսվեցին: Ես դուրս ելա ժողովի սենյակից և տեսա մի քանի հոգու մյուս սենյակում հավաքված. Ռուբեն Շահնազարյանը նստած էր լու-

սամուտի մոտ մի աթոռի վրա, իսկ Հրանտ Բահաթրյալը մարդու դեմքը, որի հետ այդ օրը բռնվել էր Հրանտը տեսլալ պատճառով:

Մի քանի խոսք Ռ. Շահնազարյանի մասին: Վերջինս աշխատում էր ցույց տալ (գուցե և այդպես էր որ ինքը չափազանց սիրում է Ղարաբաղը և տքնում է փրկության արյունահեղությունից: Ուստի գտնում էր, որ Ղարաբաղը պետք է պատկանի Ադրբեջանին: Սեփական շահերն ի նկատմամբ, արդյոք, թե՞ ուրիշ բան, ո՞վ գիտի, բայց որ նա գործում էր հօգուտ Սուլթանովի, դրանում ոչ ոք չէր կասկածում: Ինչպես և ես շեմ կասկածում, որ նա համենայն դեպս մասնակցել էր:

Սուլթանովի և Շուշվա հանձնաժողովի միջև կապ պահանջը Շահնազարյանն էր, և նա ամեն անգամ, երբ գալիս էր Սուլթանովի մոտից, աշխատում էր ահաբեկչություն անելու լարված պահել մարդկանց միտքը, շափազանցում էր Սուլթանովի ուժերն ու հավատացնում, որ մոտ օրերս սոսկապետ փոթորիկ կբարձրանա Ղարաբաղի գլխին, եթե համաձայնություն չուտով չկայացվի: Նրա բերած լուրն ու իր սեփական հեթանոսությունները հանձնաժողովի, որոշ անդամների միջոցով անցնում էին Շուշվա ժողովրդին, իսկ այնտեղից՝ գավառից թեև այստեղ ավելի գրգռել իրավիճակ էր, քան սարսափեցնում էին:

Մեկ էլ կտեսնեիր, կգար, ներս կգործեն և առանց դեղինի կկանչեր. «Այսպես անկարելի է՝ պարոնայք... Շուշվա մարդ ուղարկեցե՛ք, որ այսինչ անողից այսինչ բատալիոն հեռանա, թե չէ՛ Սուլթանովն սպանում է զինական ուժի գլխին»:

Բայց «այսինչ տեղն այսինչ բատալիոնը» չկար, և երբ հանդիմանում էինք նրան, թե ինչն է Սուլթանովի ասածը հերքել, նա պառպախանում էր, որ Սուլթանովը շատ էր գիտի, թե գավառում ինչ է կատարվում, և նա սխալվել էր կարող:

Շահնազարյանն ատելով ատում էր գավառում գտնվող գործիչներին և առհասարակ բոլոր նրանց, ովքեր նյարդալարած ամեն կերպ աշխատում էին Ղարաբաղը դուրս կորցնելու Ադրբեջանի երախից: Նա արդեն շրջում էր ադրբեջանահայ ստիկան հետևից զցած, իսկ այդ հանգամանքը մարդկային ստիկան էր նրան շատ չհավատալու Ահա համառոտ կերպ

դ մարդու դեմքը, որի հետ այդ օրը բռնվել էր Հրանտը տեսլալ պատճառով:

Երբ եպիսկոպոսի մոտ ինչ-որ խնդիրների մասին էր խոսում, Շահնազարյանը հարևան սենյակում սկսում է իր արգրեջանյան շնորհքը ցույց տալ: Հրանտը վեճի է բռնվում նրան մերկացնում: Շահնազարյանը խոսքի տակ չի մնում: Երբ խոսում, երբ Հրանտը զայրացած՝ ձեռք ու ոտքերով մղվում էր նրա հարևան սենյակի Շահնազարյանը, սա էլ տեղից «հանգստացե՛ք, հանգստացե՛ք» էր ասում:

Հրանտը իրեն կորցրած՝ ձեռքը տարավ դեպի կողքից կախած մատուցերը: Ես աշխատեցի նրան հանգստացնել ու դուրս գրեցի մինչև սանդուղքները, այնտեղից նա աշխատեց նորից վերադառնալ, բացականշելով:

— Թո՛ղ էդ շան որդուն սատկացնեմ: Դա Ադրբեջանը թե կալած՝ մեզ ծախելու է:

Բայց նրան համոզեցինք հեռանալ, իսկ Շահնազարյանը այդ ժողովում որոշվեց մարդ ուղարկել գավառ՝ համարումար հրավիրելու մասին խորհրդակցելու: Գնացողը պետք էինք Տիգրան Տեր-Գրիգորյանը:

Հոգևոր 15

Շուշի հասան Ադրբեջանի պառլամենտի անդամներ Չուրբը, Խոջոյանը, Կալաբեկովը և Շաֆի բեկ Ռուստամբեկովը: Նրանք եկել են վերջին աղետների (Ղայբալու շեն և ուրիշն.) արտաժողովուն իմանալու, տեղնուտեղը ծանոթանալու խընդ-ին, ապա վերադառնալով Բաքու, զեկուցել պառլամենտում: Նրանք իջել են թուրքական մասում:

Քուբարի հետ այդ օրը տեսնվել չկարողացա, որովհետև արժրացավ հայկական մասը: Դրա փոխարեն տեղեկություններ եկան, որ Ասկերանի շուրջը գտնվող գյուղերը, շատ անհասկալի տեղերի տակ լինելով թուրք ասկյարների ու ավազակների կողմից, հույսները կտրած՝ ցանկանում են անջատ լինել Սուլթանովին՝ հաշտության գալու, որպեսզի իրար ունենան այդ միջոցով իրենց դաշտային աշխատանքը կատարելու:

Հումիսի 17

Երեկ մարդ էինք ուղարկել անգլիական միսիա, որպեսզի այնտեղ հայտնեք, որ գործը հարթելու համար հարկավոր հրավիրել VI համագումար, որ Սուլթանովը իր համաձայնությունը տվել է, բայց անհրաժեշտ է և միսիալի համաձայնությունն ու նրա կողմից որևէ մեկի ներկայությունը համագումարին: Սակայն պատգամավորները ոչ էին գնացել միսիայում նրանց չէին ընդունել, ուստի այսօր նորից գնացին: Վերադարձան և միանգամայն ճնշված հայտնեցին:

— Մեզ շափազանց սառն ընդունեցին միսիայում: Սպառնալուք, որ մինչ այդ իրեն կոռեկտ էր պահում հայերի նկատմամբ, այս անգամ ուղղակի հարձակվեց մեզ վրա: Նուստում էր, որ զանգեզուրցիներին ցույց կտան, թե ինչ է նշանակում անգլիական հրամանատարության կամքին հակառակ գնալ: «Մենք այնտեղ կին ու երեխաներին կհրամայենք քաղվել լեռները, իսկ տղամարդկանց կկոտորենք մինչև վերջ մարդը»:

— Բայց ի՞նչ կապ ունի Զանգեզուրը VI համագումար հետ, — զարմացած հարց տվեցի ես:

— Այն կապն ունի, — պատասխանեց Գ. Մ. — յանը²⁷, — ուղում են ասել, թե Ղարաբաղի հարցը վերջացած է, Զանգեզուրն էլ շուտով կվերջացնեն:

— Իսկ ի՞նչ ասացին վերջապես համագումարի մասին:

— Ասացին, որ իրենք վերջին խոսքն արդեն քանից ասել են, «Ղարաբաղը պետք է անցնի Ադրբեջանին: Ուզուե՞ք համագումար հրավիրեցե՞ք, ուզում ե՞ք՝ կոտորվեցե՞ք եթե ամբողջ Ղարաբաղը մոխրի վերածվի, մենք միայն հանդիսատեսի դերում կլինենք, բայց եթե Սուլթանովը համաձայն է համագումար հրավիրելուն, և եթե նա մեզ գրի արձակում է, այն ժամանակ միայն մենք էլ մեր համաձայնությունը կտանք և ներկայացուցիչ կուղարկենք համագումարին»:

Այդպես ուրեմն, Սուլթանովը պետք է թելադրեր, որ անգլիական միսիան այդ կամ ոչ ասեր, իսկ ի՞նչ էր անում Հայաստանի կառավարությունը...

Այդ օրը տեղեկություն ստացվեց, որ Երևանում մեծ մի

տինգ է տեղի ունեցել Շուշվա դեպքերի առթիվ ու ցասկոտ ճառեր են ասվել այնտեղ: Գավառից մի քանի հոգի կային մոտս, այդ լսելով, նրանք կատաղեցին ու բռունցք մեկնեցին դեպի Հայաստանի կառավարությունը:

— Ա՛խ, թե ձեռքներս կընկնեի՞ր... — սպառնացին նրանք: — Էդ միտինգի փոխարեն ի՞նչ կլիներ, որ ժամանակին մի քիչ փամփուշտ հասցնեիք մեզ: Զեր հարյուր միտինգը մի հատիկ փամփուշտ չարժե:

Ուրիշ լուրեր ևս հասան, որ Աղզամում շատ ասկյարներ են հավաքվել տարբեր տեղերից, տաճիկ սպաների հրամանատարությամբ, և որ բոլորի վրա մեծ է [նշանակված] Քյազիմ բեյը:

Հումիսի 19

Տիգրանը գավառից եկավ ու ասաց, որ համագումարը 22-ին լինել չի կարող, ժամանակը կարճ է, հարկավոր է հետաձգել: Իմ ցանկացածն էլ հենց այդ էր, որքան էլ Սուլթանովը կատաղեր ու հին երգը երգեր, թե դաշնակցությունն է խանգարողը, այնուամենայնիվ, պետք է ամեն շանք գործ դնել օրեր շահելու, ամեն մի օրը մի նորություն կարող էր բերել:

Զուբարը մի քանի անգամ այսօր շեշտեց, որ մի կերպ անեմ ու Ղարաբաղի խնդիրը «զցեմ» Բաքու: Այդպես էր եզել իրենց ցանկությունը, բայց ինչպե՞ս զցել Բաքու:

Ի նկատի ունենալով գործի շափազանց ծանրությունը, այսօր ժողով հրավիրվեց բոլոր կուսակցություններից, որտեղ քննության առնվեց Ղարաբաղի ներկա դրությունն ու այն փրկելու խնդիրը:

Ես բացատրեցի ու զեկուցեցի վերջին օրերին տեղի ունեցած բանակցությունների ու մի քանի անցուդարձերի մասին և ավելացրի.

— Հասել է այն պահը, որ ամեն տեղերից հույսներս կարած վճռական քայլը պետք է անենք. կոիվ կամ համաձայնություն: Ինչպե՞ս եք մտածում դուք (ես անձամբ դեմ էի կռվին):

Բոլորը, առանց բացառության, պնդեցին, որ կռվելու ոչ մի հնար չկա, որ այս բոլորը ժամանակավոր է, կամ նոր Ռու-

ասատանը կգա և ամեն ինչի վերջ կդնի և կամ խաղաղարար (խառնարար) կոնֆերանսը վերջնական լուծում կտա վիճելի հարցերին: Պետք է Ղարաբաղը անվնաս պահել ապագայի համար, իսկ դրա համար հարկավոր է համաձայնություն գալ Ադրբեջանի հետ:

Երեկոյան Չուբարի հետ ժողով գումարեց քաղաքային մասնաժողովը: Չուբարն ու Շահնազարյանը բռնվեցին: Վերջինս դարձյալ սկսել էր իր նվնվոցները, ուստի Չուբարը բարկացավ նրա վրա, ավելացնելով, որ Ղարաբաղի հարցը հինգ գյուղ ավերելով չի կարող լուծվել և վնաս չունի, եթե մի քանի գյուղեր ևս ավերվեն: Իսկ Չուբարի անձնական կարծիքըն այն էր, որ Ղարաբաղը պետք է զիջել, ուրիշ հնար չկա: Նա այդ ասում էր ինձ և ոչ հրապարակավ: Եվ հայտնում էր, որ դրսում էլ այդպիսի կարծիք կա:

Այդ ժողովում որոշվեց, որ Խուբեն Շահնազարյանը վաղը գնա Սուլթանովի մոտ (կապը միայն նա էր պահպանում) և հասկացնի, որ զավառում համազումար կարող են գումարել միմիայն հունիսի 28-ին, ոչ շուտ. արգելք են հանդիսանում դաշտային աշխատանքներն ու տեղերի հեռավորությունը:

Հունիսի 21

Սուլթանովը հարալ-հրոց էր բարձրացրել, թե համագումարը հետաձգելու նոր ժամանակ նշանակելը դարձյալ խաբելու փորձ է, և որ ինքն ստիպված է միջոցներ ձեռք առնել: Շահնազարյանի ասելով, կարողացել է համոզել, որ այստեղ խաբելու բան չկա, այլ իսկապես դժվար է համագումարն այդպես շուտափույթ գումարել, և Սուլթանովը համաձայնություն է տվել, ասելով, որ ինքը գնում է Բաքու, բայց այդտեղից կվերագառնա կառավարության ներկայացուցչի կամ պառլամենտի անդամների հետ ու համագումարին կկարդան կառավարության դեկլարացիան և համագումարից կպահանջեն՝ այն՝ կամ ո՛չ:

Չուբարի միջոցով հաջողեցրել էի, որ այդ օրն իրենց հետ ես էլ գնայի Բաքու, այնտեղից՝ Երևան և դրուժյունը պարզելի: Միրտս ճաքում էր: Սուլթանովը համաձայնել էր, և երբ ես գնացի նահանգապետի տուն, որտեղ Խոջայանն ու Չուբարն էին, այդտեղ Չուբարն ասաց, որ «անիծվածները» այժմ

հրաժարվում են ինձ վերցնել, պատճառաբանելով, որ տեղ չի: Մյուս կողմից էլ Չուբարը բռնեց կոկորդիցս, թե՛ «դու ես, որ պետք է մնաս», քանի որ Ղարաբաղի դրուժյունն այնքան ծանր է*: Բայց ինչո՞վ կարող էի օգնել: Ես Հայաստան հասնելով, գուցե էլի մի բան անեի, իսկ Ղարաբաղում բանը բանից անցնելու վրա էր՝ Հայաստանի կառավարության անտարբերության և մի շարք այլ պայմանների պատճառով:

Քոռ ու փոշման, ինքնասիրությունս վիրավորած՝ վերադարձա, իսկ Չուբարը նորից պնդեց, թե՛ «չմոռանա՛ս, հա՛, էնպես արա, որ գործն ընկնի Բաքու, հարկավոր է ձգձգել»:

Սուլթանովը, Չուբարը, Խոջայանը, Կալաբեկովն ու մյուսները ճանապարհվեցին Բաքու, և մենք հույս ունեինք, որ Սուլթանովն այլևս չի վերագառնա, քանի որ անգլիական հրամանատարությունը ևս դեմ է Շուշում նրա մնալուն:

Հունիսի 22—24

Այս երեք օրվա մեջ նախապատրաստություններ էին տեսնում թե՛ քաղաքում և թե՛ գավառում VI համագումարը հրավիրելու համար: Քաղաքում ու գավառում ժողովրդի մի մասն անհամբեր սպասում էր այդ օրվան, հուսալով, որ համաձայնությունը կկայանա, և գործը կանցնի այնպես, որ կառավարություններին: Մյուս մասն էլ դարձյալ սպասում էր անհամբեր, որ այդ օրը կվճռվի Ղարաբաղի հարցը և կոհվ կծագի բոլոր ճակատներում:

Ստացված տեղեկությունները գոնե հաստատում էին, որ ժողովրդի զինված մասը զիջելու ոչ մի տրամադրություն չունի, իսկ ո՞վ գնեք չունի, շատ տեղերում երկաթից շամփուրներ է պատրաստում՝ ժայրահեղ դեպքում նրանցով կրովելու: Էլեկտրականացած օրեր էին: Զինվորությունը հաշտության մասին լսել անգամ չէր ուզում: Առհասարակ նրանք, ովքեր ծանրաբեռնված չէին ընտանիքով, հաց ունեին ու հետո էին թուրքական հարձակման առաջին ալիքներից, անհաշտ տրամադրություն ունեին, և պարզորեն կարելի է պնդել, որ եթե Ղարաբաղն այդ օրերին ունենար թեկուզ յուրաքանչյուր հրացանին 200 փամփուշտ և Խաչենն էլ ունենար

* Մյուս կողմից էլ ես էր, որ ասում էր: «Գործը պի՛ր Բաքու»:

Քեկուզ հինգ հոգուն մի հրացան, ապա Սուլթանովը, Աղբրբեջանն ու անգլիական միսիան վկա կլինեին մի սոսկալի տեսարանի:

Իսկ ես համոզված էի, որ կգումարվի VI համագումարն ու մերժելով Աղբրբեջանի ոտնձգությունները, կցրվի: Թե նրանից հետո ի՞նչ կլինեք, թո՞ղ լինեք, բավական է:

Հունիսի 25

Այսօր առավոտյան Ռուբեն Շահնազարյանը Սուլթանովի կողմից հեռագրով կանչվեց Բաքու: Տեսնես ի՞նչ «հոգեկից» զրույցներ պիտի ունենան:

Անգլիացիների մեկնելը Շուշուց վերջնականապես հաստատվեց: Արդեն խումբ-խումբ հեռանում են: Մնացել են միսիան և փոքրաթիվ սիպայներ:

Խանքենդում ասկյարներն սպանել են մի կնոջ և թալանել երկու տուն: Տանտերերից մեկին նախօրոք կապտուել են, ծեծել, հետո թալանել:

Բոլկոտը, թեև քիչ թուլացած, շարունակվում է, ինչպես և ավազակությունը: Այդ ձևով են ցանկանում հոգնեցնել, հոգեհան անել Ղարաբաղը:

Հայերից մեկը գնացել էր թուրքի շուկայից հաց գնելու: Հացավաճառ թուրքը ասել էր.

— Այ էրմանի, շունը որ շուն է, մի անգամ աքացի տալուց էլ հայաթ չի մտնում, բա ձեզ հարյուր անգամ աքացի տվինք, ինչո՞ւ չեք խրատվում:

Իսկ մի տաճկահայի էլ մի ուրիշ հացավաճառ թուրք ավելի կեղտոտ բան էր ասել, հայհոյել, հետո հաց առաջարկել:

Հայաստանի վիզը չկոտրվի, որ Ղարաբաղն այսպես խեղճացրեց: Չգիտեմ, երբեկից այնտեղի ղեկավարները պատասխանատվության պե՞տք է կանչվեն, թե չէ: Եթե երկրի դրությունը ճգնաժամային շիներ, կարելի էր այնտեղ՝ Երևանում մի փոթորիկ բարձրացնել, գոնե սիրտ հովացնելու համար: Բայց ի՞նչ օգուտ, Ղարաբաղը ձեռքից գնում էր:

Հունիսի 26

Համագումարի պատգամավորները հավաքվում են Շուշուղում: Ես արդեն տեղեկություններ ունեի նրանց տրամա-

զրության մասին: Նրանք հունիսի 29-ին որոշում են կայացնում, թե՛ դեռ ամսի 28-ին հայտնել են Շուշի, որ համագումարն սպասում է անգլիական ներկայացուցչին ու մյուսներին և տեսնելով, որ նրանք 30-ին էլ չեկան, ցրվում են՝ այդ մասին դարձյալ հայտնելով մեզ՝ Շուշի և ուղարկելով արձանագրության մի պատճենը մեզ, մյուսը՝ անգլիական միսիային:

Արձանագրությունը շատ հակիրճ էր կազմված, ասվում էր, թե ավելի սպասել չեն կարող, հավաքվել է 500-ի շուրջ ժողովուրդ, ո՛չ հաց կա, ո՛չ խոտ՝ ձիերի համար: Ցրվում են իրենցից միանգամայն անկախ պատճառներով, բայց պատրաստ են նորից համագումարի հավաքվել հարցը լուծելու համար: Միևնույն ժամանակ համագումարը հույս էր հայտնել, որ Ղայբալու շենի և մյուս գյուղերի ավերման հեղինակները կկանչվեն պատասխանատվության:

ՀԱՅԿԱԿԱՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Քաղաքի հայկական հանձնաժողովի նախաձեռնությամբ և անգլիական միսիայի գիտությունների Հայկական Ղարաբաղի բնակչության ներկայացուցիչները հավաքվեցին VI համագումարի՝ գլխավոր նպատակ ունենալով բանակցությունների միջոցով մշակել Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման պայմանները մինչև նրա վերջնական որոշումը խաղաղարար կոնֆերանսի կողմից: Ընդառաջ գնալով այն ամենին, ինչը կարող է սոսկ նպաստել երկուստեք բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանը, Ղարաբաղի հայ բնակչությունը ողջունում է Ղարաբաղի ժամանակավոր ստատուս-քվոն խաղաղ ճանապարհով որոշելու ամեն մի փորձ: Նա ցանկացել է այդ հարցն ավարտել հունիսի 28-ի նիստում Ադրբեջանի Հանրապետության, անգլիական միսիայի և քաղաքի հայկական հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ: Համագումարին՝ նշված օրը անհայտ պատճառով չեն ներկայացել հիշյալ ներկայացուցիչները, որի համար էլ համագումարը զրկվել է իր հիմնական խնդիրը լուծելու հնարավորությունից: Անկախ իր բոլոր ցանկություններից, համագումարը, ի նկատի ունենալով դաշտային աշխատանքների ետուն շրջանը, հնարավորություն չունի սպասել ներկայացուցիչների ժամանմանը:

Համագումարը, արտահայտելով իր խոր ամոսսանքներն այդ անհաջողության առթիվ և, առանց բնակչության խտրականության, ելնելով Ղարաբաղի ողջ բնակչության շահերից, գտնում է, որ հնարավոր է Ղարաբաղի հարցը լուծել խաղաղ ճանապարհով և պատրաստակամություն է հայտնում ձեռնարկել իրենից կախված ամեն ինչ՝ նրա հարցի խաղաղ լու-

ծումը բննարկելու հաջորդ համագումարում և որ այն հնարավոր կլինի հրավիրել միայն դաշտային-սեզոնային աշխատանքներն ավարտելուց հետո:

Այդ նպատակով համագումարը Հայկական Ղարաբաղի սահմաններում գործող բոլոր կազմակերպություններին և պաշտոնյա անձանց պարտավորեցնում է ջանքեր գործադրել տեղերում պահպանելու բարիդրացիական հարաբերությունները՝ նրանց հետ մտնելով նորմալ կապերի մեջ:

Համագումարը հույս ունի, որ մինչև հաջորդ համագումարը այդ ուղղությամբ կձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր և Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները կգործադրեն իրենց բոլոր ուժերը՝ վերականգնելու նորմալ հարաբերությունները հայերի և մուսուլմանների միջև, մանավանդ սահմանամերձ շրջաններում, որտեղ խափանվում են դաշտային աշխատանքները: Այդ տեսակետից պետք է նշել Ասկերանի շրջանի ավերված գյուղերի բացառիկ դրությունը (Փիրշամալ և Խանքենդ), որոնք բացահայտորեն զրկված են որևէ բան հավաքելու հնարավորությունից:

Համագումարը միևնույն ժամանակ անհրաժեշտ է գտնում բողոք հայտնել Ադրբեջանի իշխանությունների կողմից քաղաքում կազմակերպված ընդհարումների, հայկական հինգ գյուղերի ոչնչացման, Ղայթալու շենի կոտորածի և այլնի կապակցությամբ ու պահանջում է հետաքննել այդ իրադարձությունները, բացահայտել մեղավորներին, նրանց պատասխանատվության կանչել և փոխհատուցել հասցրած վնասները, քանի որ նման ելույթները բացառում են հիմնական հարցի խաղաղ լուծման ամեն մի հնարավորություն:

VI համագումարի եռօրյակը՝ Գ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Փարտուղար՝ Ե. ՔԱՄԱԼՅԱՆ

20 հունիսի 1919 թ., գյուղ Շոշ

Այս արձանագրության պատճենը դեռ մեզ չհասած՝ ավտոմոբիլով Եվլախից Շուշի են հասնում Ադրբեջանի պառլամենտի անդամ Շաֆի բեկ Ռուստամբեկովը և Կալբաբեկով Քյարիմ բեկը, որոնց միանում են Խոսրով բեկ Փոլադովը և Շահուովարովը: Նրանք իմանում են, որ համագումարը ցրվել է, և մինչ քաղաքային հանձնաժողովը թեմական դպրա-

նոցի՝ առաջնորդարանին կից շենքում հուլմունքից չգիտեր ինչ անել, իսկ Վահան եպիսկոպոսը քիչ էր մնում մազերը փետեր, և մոնչում էր. «Հոտս կկոտորվի... հոտս կկոտորվի...», շենքի մոտ կանգ առավ մի կառք: Այնտեղից դուրս թռան Քյարիմ բեկ Կալաբեկովը ու Շաֆի բեկ Ռուստամբեկովը և արագ-արագ անցան դեպի եպիսկոպոսի բնակարանը: Եպիսկոպոսը դուրս եկավ նրանց ընդունելու: Դուրս եկան և մնացած բոլոր անդամները: Ես մնացի:

Շուտով եկան և Ռուբեն Շահնազարյանը, Փոլադովն ու Շահսուվարովը ու գնացին եպիսկոպոսի մոտ:

Երեկոյան ժամը 7-ն էր, մութն ընկնելու վրա: Ես ուզում էի իմանալ, թե ինչ էլք պիտի ունենա քաղաքական այս խաղը: Լուսամուտները բաց էին, և ես մեկ-մեկ ձայներ էի որսում: Մի նախադասութուն լսեցի, որ ինձ վրա շատ վատ ազդեց: Խոսողը Ռ. Շահնազարյանն էր: Նա երկար խոսեց, ես շատ բան չհասկացա, բայց մի նախադասութուն ամբողջապես հասավ ականջիս. «Ղայբալու շենք քիչ է նրանց համար, մի փոքրիկ արյուն առնել ևս պետք է, և այն ժամանակ ծնկաչոք համաձայնության կգան...»: Նա ուսերեն էր խոսում և սպառնալիքն ուզղել էր համագումարին՝ միևնույն է թե Ղարաբաղին:

Եպիսկոպոսի մոտից մարդ գնաց ու կանչեց Տիգրան Տեր-Գրիգորյանին: Քիչ հետո ինձ ևս կանչեցին: Չգնացի: Նորից կանչեցին: Այս անգամ գնացի, հետաքրքրվելով, թե ինչ է կատարվում այնտեղ:

Իհարկե, նորեկները գիտեին, որ ես «հայտնի» դաշնակցական եմ: Երբ ներս մտա, առաջին գործս եղավ ուշադրություն դարձնել «հյուրերին»։ Ռուստամբեկովի արտաքինն առաջին հայացքից հետ մղեց ինձ:

Պարզվեց հետևյալը:

Թուրքերը պնդում էին, որ համագումարը չի ցրված, և եթե ցրված է, ապա դիտմամբ կատարված գործ է դա՝ հրավեր կովի: Բայց որովհետև իրենք հաստատ տեղեկություն ունեն, որ չի ցրվել, ուստի առաջարկում են անմիջապես հասնել Շոշ, պահել համագումարը, որպեսզի իրենք էլ գան, վերջապես դեմառդեմ խոսեն, իմանան, թե ի՞նչ է ուզում Ղարաբաղը:

Եպիսկոպոսը կպավ իմ և Տիգրանի օձիքից, թե՛ «հենց հիմա դուք պետք է գնաք ու «այնտեղ» խոսեք, որ էսպես չի կարելի»:

Ես վրդովմունքս զսպելով, հայերեն պատասխանեցի, թե հենց այսպես է, որ կարելի է: Համագումարի օրվա [մասին] հայտնի է եղել բոլորին նախօրոք: Ո՞վ է մեղավոր, որ շահագրգռված կողմը ժամանակին չի եկել: Նույնն էր ասում և Տիգրանը:

Ռուստամբեկովը հասկանալով, թե բանն ինչ է, սկսեց դարձյալ մեղադրականներ կարդալ համագումարի հասցեին, մեջքնդմեջ սպառնական շեշտեր մտցնելով ասածների մեջ, վերջն էլ ավելացնելով, թե՛ «եթե մենք Բաքվից վեր ենք կացել ու եկել, ինչո՞ւ համագումարը չէր կարող մի երկու օր էլ ավել սպասել»:

Վերջը համաձայնեցինք, որ առավոտյան վաղ ես, Տիգրանը և Գրիգոր բեկ Մինասրեկյանը գնանք Շոշ [գյուղ]: Ես համաձայնեցի մանավանդ նրա համար, որ Չուբարն ասել էր, թե՛ «մի կերպ արե՛ք, գործը զցե՛ք Բաքու»: Մտածում էի գավառում մի հնար անել և ասել միտքս, ցանկությունս պարզել, խնդիրն այնպես թեքել, որ ընկնի Բաքու: Չէ՞ որ այնտեղ Հայաստանի ներկայացուցիչն էր գտնվում և դաշնակցության Կենտրոնական կոմիտեն, որ այնքա՞ն ուժեղ էր: Եվ վերջապես մեր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով շատ գաղտնի (մեզ համար) հարցերի կծանոթանայինք:

Այգպես որոշելով՝ ցրվեցինք:

Հուլիսի 1

Առավոտյան շատ վաղ ես, Տիգրանն ու Մինասրեկյանը թուրք պահակների հետ իջանք թուրքական մասը: Պահակներ նրա համար էին ուղարկել, որ մեզ ապահով հասցնեին թուրքական մասը: Իրենք էլ գիտեին իրենց շնական բնավորությունը, որ եթե անպաշտպան, մենակ հայեր իրենց ճանկը ընկնեն, կենդանի չեն թողնի: Մեզ համար այնտեղ ձիեր արդեն պատրաստել էին: Նստեցինք ձիերն ու դարձյալ ձիավոր պահակներով՝ իջանք մինչև Շոշու գետի ձորագլուխը: Այնտեղից մեզ ուղեկցողներին հանձնելով ձիերը՝ ոտքով շարունակեցինք ճանապարհը:

Առաջնայն ժամը 7-ին Շոշում էինք: Հարցրինք պատահող գյուղացիներին, թե համագումար եկած պատգամավորները բոլորն են ցրվել: Մեկը պատասխանեց՝ այո՛, մյուսը՝ ո՛չ: Գնացինք համագումարի տեղը՝ «գրասենյակ»: Այստեղ եկավ համագումարին չերժ մասնակցություն ունեցող ս[ոցիալ]-դ[եմոկրատ] Արշավիր Քամալյանը: Նրա հետ երկար խոսակցություն ունեցանք ներկա դրության մասին և եկանք այն եզրակացության, որ այլևս ոչինչ անել չի կարելի, խոսքը մնում է VII համագումարին: Բայց որովհետև ազգային ու շրջանային խորհուրդների անդամներից շատերը այդ միջոցին գտնվում էին Դոնավարզում, վճռեցինք գնալ այնտեղ ու մի բան որոշել:

Այդտեղ՝ Շոշ գյուղում, մեր խոսակցությանը ներկա էր Զիվանշիրի ներկայացուցիչը: Խոսելով Ադրբեջանի անիրավությունների մասին, նա բացականչեց.

— Եթե նույնիսկ Խաչենը, Վարանդան և Դիզակը հպատակվեն Ադրբեջանին, Զիվանշիրը մի գիծ կթաշի իր շորս կողմը և կկռվի մինչև վերջ:

Նրա այդ հայտարարությունը վիրավորեց ներկա գտնվող վարանդացիներից մեկին, որն էլ իր հերթին գոչեց.

— Եթե Զիվանշիրը գիծ քաշի, Վարանդան պարիսպ կթաշի ու այնպես կկռվի... մենք ձեզնից պակաս տղերք չենք:

Այդ օրերին Ղարաբաղն ալեկոծված ծովի պես ծփում էր: Ժողովուրդն սպասում էր, որ ահա կպայթի փոթորիկը, ուստի զոռ էին տալիս փութսերին՝ եղած երկաթները շամփուրների վերածելու, գոնե դրանցով պաշտպանվելու օրհասական բուպեին... Իսկ մեր «օգնություն, օգնություն» աղաղակներն անպատասխան էին մնում... Ափսո՛ս Ղարաբաղ:

Ոտքով ճանապարհվեցինք դեպի Դոնավարզ: Բաքվից վերադառնալուց հետո ես հազիվ էի կարողանում քայլել, իսկ այժմ ոտքով Շոշից մինչև Դոնավարզ գնալն ինձ համար շափազանց ծանր էր: Տեղ-տեղ հանգստանալով, տեղ-տեղ Տիգրանի օգնությամբ՝ մի կերպ հասանք Դոնավարզ գյուղը, ուր գտանք Ազգային խորհրդի անդամներին, զինվորական շտաբն իր ամբողջ կազմով և շրջանային խորհուրդների անդամներից շատերին:

Տեղի ունեցավ փոթորկալից ժողով, որը տևեց մինչև գիշերվա ժամը 3-ը, որից հետո որոշվեց կա՛մ գումարել VII համագումար, կա՛մ մի պատգամավորություն գնա Բաքու, այնտեղ բանակցի Ադրբեջանի իշխանության հետ, ապա արդյունքը հաղորդի VII համագումարին, որը կամ կընդունի, կամ չի ընդունի:

Շատ լավ եղավ. Հայաստանի կառավարությանը դարձյալ ժամանակ էր տրվում իր անելիքն անելու: Բայց պիտի անե՞ր...

Ո՞վ պետք է գնար Բաքու: Բաքու գնալ ես ուզում էի, իսկ բանակցել Ադրբեջանի կառավարության հետ... Բոլորը բացարձակապես հրաժարվեցին այդ սոսկալի պատասխանատու միսիայից: Հրաժարվեցի, երբ պնդեցին, թե ես պիտի գնամ: Այն ժամանակ ամեն կողմից սկսեցին իրար մեղադրել, թե միշտ այսպես է լինում, մարդիկ վիճում են, քննում, քննադատում և երբ հարկավոր է լինում զոհաբերություն՝ ամենքը փախչում են:

Ես ձեռքս ամուր խփեցի սեղանին ու ասացի, որ գնում եմ: Ծափահարությամբ ընդունվեց առաջարկությունս; բայց երբ պահանջեցի, որ երկու հոգի ևս ընկերանան ինձ, դարձյալ ամենքը կտրուկ կերպով հրաժարվեցին, գործը գցելով ինձ, թե՛ «դու ես իմանում, գնա՛ Շուշի և ում ուզում ես, վերցրու քեզ հետ, լիազորում ենք»:

Ես ներքուստ ուրախ էի: Բաժակցությունները կտևեին 15—20 օր, մի նույնքան էլ կտևեր համագումարը: Համագումարը այնպես կսարքեինք, որ էլ ավելի կերկարացնեք գործը, իսկ մինչև այդ երևի մի լույս կծագեր: Բայց մյուս կողմից էլ ձգվել էի պատասխանատվության ծանրության տակ ու անիծում էի նախ անգլիական հրամանատարությանը, որ մեզ այս օրը գցեց, ապա՝ Հայաստանի կառավարությանը, որ Ղարաբաղի խնդրի ծանրությունը անհատի ուսերի վրա է գցում:

Հուլիսի 2

Եկանք Շուշի. ես ուխտագնացություն կատարեցի բոլշևիկներին (Ա.)²⁸, դաշնակցությունից սկսած մինչև հայ ժողովրդական կուսակցության գոնեները, բոլորը շնորհա-

վորում էին այդ տեսակ ելքը, բայց չհամաձայնեցին գալ Բաքու, ասելով, որ իրենք ժամանակ չունեն, ժողովուրդն իրենց չի հավատում և այլն: Վերջապես քաղաքային հանձնաժողովում (բացի շենքում) բոլորը զեկուցելուց հետո ես ասացի, որ վերցնում եմ ինձ համազումարից տրված լիազորությունը պատգամավորներ ընտրելու, քանի որ ոչ ոք չի համաձայնվում, ուստի թողնում եմ հանձնաժողովին, թող նա կատարի ընտրությունը:

Հանձնաժողովն էլ իր կողմից բոլորի կարծիքներն իմանալուց հետո կանգ առավ Ռ. Շահնազարյանի վրա: Նա հեշտությամբ ընդունեց, բայց ես...

Կեսօրից հետո թուրքերը հավաքվեցին եպիսկոպոսի մոտ, և մենք այնտեղ հայտնեցինք գավառի կամքը: Կալաբեկովն ու մյուսները ծառս-ծառս եղան, որ «գավառը թե ով՝ խաբխարում է և ուրիշ ոչինչ»: Բայց երբ մենք ուսներս հուպ տվինք, թե դուք գիտեք, այն ժամանակ համաձայնեցին, որ Բաքու մարդիկ գնան, վերջնական խոսքը թողնելով VII համագումարին:

Ռուստամբեկովը հարցրեց ինձ, թե մանդատ ստացե՞լ եմ և երբ իմացավ, որ չեմ ստացել, զարմացավ, թե անանց մանդատի հապա ես ինչպես պետք է վարեմ քանակցությունները: Պատասխանեցի, որ սպասեն մի քանի օր, մինչև որ մանդատ ստանամ (ես գիտեի, որ նրանք շատ շտապում են, և վաղն անպատճառ պետք է գնան): Թուրքերը երկար տրտնջալուց ու մեղադրականներ կարդալուց հետո որոշեցին, որ մենք գնանք, մանդատը մեր հետեից կուղարկեն:

Շատ լավ, ձգձգելու դարձյալ նոր առիթ:

Երբ ցրվեցինք և ես ու Տիգրանն առանձնացանք, ասացի. — Տիգրան, մանդատի համար դու պետք է գնաս Գոնավարդ, միտդ պահիր, ինչ որ ասում եմ, ա. մանդատում պետք է գրված լինի, որ Բաքվում վարելիք բանակցություններին պետք է մասնակցեն նաև Ղարաբաղի Հայրենակցական միության կողմից ընտրված մարդիկ և ք. բանակցություններին պետք է մասնակցի նույնպես և Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը: Այդ վերջինը հարկավոր է մանավանդ նրա համար, որ վերջապես մեր կառավարությունը խառնվի, և գործը կամ կովով վերջացնի, կամ հաշտությամբ:

Մենք բաժանվեցինք, և ես պատրաստվեցի առավոտյան ժամը 11-ին ճանապարհվելու:

Հուլիսի 8

Ուղիղ ժամը 8-ին ես, Ռուբեն Շահնազարյանն ու Խոսրով բեկ Փոլադովը (գավառապետ) ավտոմոբիլ նստելով՝ ճանապարհվեցինք դեպի Բաքու: Փոլադովն օձի լեզու էր բանեցնում, զարմանում, որ հայերն այսքան համառ են ու ամեն կերպ աշխատում էր ցույց տալ, թե ինքը որքան շանքեր է գործադրել հայերի ու թուրքերի մեջ բարիդրացիական հարաբերություն ստեղծելու: Խոջալուի մոտ նրա քաղցրախոսությունը փոքր-ինչ դեմ առավ իրականությանը: Շուշուց Բաքու գնացող 15 հոգու ասկյարները կանգնեցրել էին ճանապարհին (չնայած նրանք Շուշու նահանգապետի դեսպանատնից գրավոր թույլտվություն ունեին), թե Շուշուց տրված թուղթը նշանակություն չունի, պետք է խուզարկեն, իսկ դա նշանակում է, որ պետք է թալանեն: Փոլադովը, անհարմար զգալով, վազեց օֆիցերի մոտ և վերջինիս շնորհիվ հաջողվեց հեռացնել ասկյարներին, որից հետո խումբն առաջ շարժվեց, մենք էլ հետևեցինք:

Հասանք Աղղամ: Շաֆի բեկ Ռուստամբեկովն ու Քյարիմ բեկ Կալաբեկովն այնտեղ էին և մի տան վերին հարկում ճաշում էին մի խումբ օֆիցերների հետ: Կալաբեկովն իսկույն դուրս եկավ ու մեզ գրույցի տանելով, քաղաքավարի կերպով հասկացրեց, որ մեր ներս մտնելն «անհարմար է», ես պատշգամբում քայլելով, աշխատեցի տեսնել, թե ովքեր են ներսում: Մի քանի դեմքեր տեսա. ուսս սպաներ էին: Կային և ուրիշ շատերը, որոնց մեջ գուցե՞լ տաճիկներ, բայց չկարողացա կողմնորոշվել:

Ժամը 1-ին դարձյալ ուրիշ ավտոմոբիլ նստելով, շարունակեցինք ճանապարհը: Սրտումս արյուն կաթելով հասա Եվլախ: Գիշերվա ժամը 11-ին գնացքը եկավ: Նստեցինք և ուղևորվեցինք Բաքու:

Հուլիսի 4

Վագոնից իջնելուն պես, դեռ տուն չմտած, վազեցի քաղաք՝ տեսնելու Բեկզադյանին²⁹ ու նրանից իմանալու, թե ի՞նչ

կա արտաքին աշխարհում Ղարաբաղի վերաբերյալ և ի՞նչ է անում այդ ուղղությամբ Հայաստանի կառավարությունը: Տերեֆունի փողոցում պատահեցի Լևոն Քաղևոսյանին: Նրան երկու խոսքով հասկացրի, թե ինչու եմ եկել ու խնդրեցի միասին մտնել հայկական միսիա:

Մտանք Բեկզադյանի մոտ: Ես նրան համառոտ բացատրեցի իրավիճակը, ապա վերջում ասացի.

— Այսպես է ահա Ղարաբաղի դրուժյունը: Մենք ցայսօր խարխափել ենք խավարի ու անհայտության մեջ. ոչ մի տեղից ոչ ոք մեզ մի լուր չի ուղարկել: Մենք թողնված ենք եղել մեր բախտին, չենք իմանում ինչ անել: Այժմ, խնդրեմ, պարզեցե՛ք, ի՞նչ է արվում Ղարաբաղի համար:

Բեկզադյանը բառ առ բառ պատասխանեց.

— Ղարաբաղի համար իրական ոչինչ չի արվում, ինչ թե մինչև այսօր անիրազեկության մեջ եք եղել, այսօր ես մի քիչ ձեր առաջ կրարձրացնեմ անիրազեկության վարագույրի ծայրը:

Եվ հանելով մի գրավոր հաղորդագրություն, կարդաց հատիսյանի ու գեներալ Կորու տեսակցության Ղարաբաղին վերաբերող կտորը, ուր ասված էր, թե գեներալ Կորին պնդում է, որ Ղարաբաղը ժամանակավորապես պետք է կառավարի Ադրբեջանը:

Թոմսոն, Շատելվորտ, Կորի... և նրանց հետ բոլոր անգլիական սպաները՝ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու նախանձախնդիրներ... Ես ասելու խոսք չգտա, միայն խնդրեցի հենց այս երեկո ժողով գումարել Ազգային խորհրդի և Հայրենակցական միության, որտեղ ես կարողանայի խոսել Ղարաբաղի մասին: Ապա գնացի երեխաներիս տեսնելու:

Նրանք որքան ուրախացան ու փաթաթվեցին ինձ, այնքան էլ տխրեցի ես. ողորմելի դրուժյան մեջ էին, փող չունեին, մերկ ու գրեթե բոքիկ էին, ապրում էին աներոջս տղայի մոտ՝ երկու սննյակում տասնչորս հոգի: Կինս շատ էր տանջվել բնակարան գտնելու համար, չէր հաջողվել: Բոլորը նիհարել էին: Եվ ոչ ոք ընկերներեցս չէր հարցրել, մի անգամ չէր հետաքրքրվել, թե՛ «ախր ես մարդուն հիվանդ-հիվանդ պարտավորեցրինք գնալ Ղարաբաղ, ի՞նչ են ուտում նրա երեխաները, հաց ունե՞ն, թե՛ հող են լիզում»: Թողնեմ:

Երեկոյան գումարովեց ժողովը, ուր եկել էին Հայրենակցական միության ներկայացուցիչները, Ազգային խորհրդի բոլոր անդամներն ու Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը: Նախքան զեկուցումն սկսելը, խնդրեցի, որ արձանագրվեն իմ բոլոր ասածները և պատճենը տրվի ինձ: Ապա զեկուցեցի: Ես շատ հուզված էի և, ըստ իս՝ պատկերավոր կերպով ներկայացրի Ղարաբաղի դրուժյունը, որ տևեց մոտ չորս ժամ: Հետո սկսեցին վիճել ու կարծիքներ հայտնել, որից հետո եկան այն եզրակացության, թե հարկավոր է Ադրբեջանի հետ բանակցություններ վարել: (Այդ ժողովում, բառ առ բառ հիշում եմ, ես ասացի. «Երբ ներկա պայմաններում Ղարաբաղը կովի քաշվի, ապա հենց այժմվանից մի շիրիմ պետք է կանգնեցնել ու վրան գրել. «Մի ժամանակ այստեղ է եղել Ղարաբաղը»):

Ստեղծվեց խորհրդատու հանձնաժողով՝ պայմանները մշակելու և խորհրդակցելու: Ընտրվեցին երեք հոգի Հայրենակցական] միությունից և երկու հոգի էլ՝ Ազգ[ային] խորհրդից: Սրանք մշտապես պետք է բանակցությունները վարողների հետ խորհրդակցեին: Ապա Հայրենակցական միության կողմից միացան ինձ ու Ռ. Շահնազարյանին արդեն ընտրված Սերգեյ Մելիք-Յուլյանը և Նիկոլայ Փիրումյանը:

Չափազանց հետաքրքիր ժողովը վերջանալուց հետո Սամսոն Հարությունյանը, որ վերջում եկել էր, ասաց ինձ.

— Շարուրի և Նախիջևանի թուրքերն ասել են, որ իրենք ժամանակավորապես ենթարկվում են Հայաստանին, թող Ղարաբաղն էլ ժամանակավորապես ենթարկվի Ադրբեջանին, քանի որ անգլիական հրամանատարությունն էլ այդ է պահանջում թե՛ Շարուրում և թե՛ Ղարաբաղում:

Հուլիսի 6

Առավոտյան ժամը 10-ին ընտրված հանձնաժողովի նիստը կայացավ. Չուբարը բերել էր իրեն հանձնարարված դեկլարացիան, որը աննշան փոփոխություններով տվեցինք տպագրության, իսկ պայմանների մշակումը՝ չկարողացանք վերջացնել:

Ժամը 1-ին գնացինք «Օվրոպա» հյուրանոցը, որտեղ էր գտնվում և Սուլթանովը: Նա սիրալիկ ընդունեց ու ասաց, որ

առայժմ կառավարութիւնը «պատրաստ» չէ ընդունելու պատգամավորութիւնը: Խնդրեց հետաձգել վաղվան: Ապա սկսեց մասնավոր զրույց, որի ժամանակ Սուլթանովը մեջընդմեջ դժգոհութիւն էր հայտնում դաշնակցութիւնից:

Այդտեղից դուրս գալով, անցա Դաշնակցութեան բլուրո, ուր Լեոն Քաղեռայանն ասաց, թե Լեոն հեռագրել է, որ Արամայիսը գա Քիֆլիս: Ես կթռչի, ոտքով կգնայի Քիֆլիս, բայց առանց այն էլ Ադրբեջանը խոսքի տակին ու գլխին պնդում էր, թե «մենք խաբխրում ենք»: Եթե հիմա էլ թողնեիր ու գնայի, կնշանակեիր խզել ամեն տեսակ բանակցութիւն, «ձգձգողական քաղաքականութեանը» վերջ դնել ու ասել՝ «Թո՛ղ ինչ ուզում է լինի»: Մերոնք քննեցին խնդիրն ու գտան, որ ես եմ միակ իսկական ներկայացուցիչը Ղարաբաղից, որ եթե ես էլ թողնեմ ու գնամ, այն ժամանակ հարցը միանգամայն կփոխվի ի վնաս մեզ:

Երեկոյան ևս ժողով գումարվեց Կենտրոնական [կոմիտեում], ուր զեկուցում տվեցի Ղարաբաղի մասին: Այստեղ շկար ո՛չ Ռ. Շահնազարյանը, ո՛չ էլ օտար մարդիկ, և ես բաց թողեցի սանձն իմ սրտի դառնութեան, հաստատելով, որ Ղարաբաղը շոքող հերոս չէ, բայց եթե նա շոքեց և եթե այսպես շարունակվի՝ անպատճառ կշոքի, ապա պատճառը, մեղավորը Հայաստանի կառավարութիւնն է և այն գործիչները, որոնց դրսում հանձնված է եղել Ղարաբաղի բախտը: Փոթորկալից վեճերից հետո միաձայն որոշվեց շարունակել բանակցութիւնները, աշխատելով գործը «ձգձգել»: Դարձյալ «ձգձգել» լա՛վ քաղաքականութիւն է: Իսկ ընդհանրապես ընդունելի համարվեց այն պայմանագիրը, որ պատրաստվում էր ներկայացնելու Ադրբեջանի կառավարութեանը:

Հուլիսի 7

Առավոտյան Բեկզադյանից իմացա, որ նա հատուկ սուրհանդակ է ուղարկել Երևան՝ մանրամասն զրույցամբ և գանազան որոշումների պայմաններով: Ապա գրել է նույնպես, որ Ղարաբաղը պահանջում է, որ ինքը՝ Բեկզադյանը, ևս մասնակցի բանակցութեանը: Իմ պնդումին, որ նա անպայման մասնակցի, պատասխանեց.

— Իմ կառավարութիւնից ես հրահանգ չունեմ, ուրեմն և մասնակցել չեմ կարող, բայց [կա] մի ուշագրավ հանգամանք. քանի դուք չէիք եկել, Ջաֆարովը³⁰ կանչել էր և խոսել Ղարաբաղի մասին, այն տրամազրույցամբ, որ ժամանակն է վիճելի խնդիրները հարթելու: Բայց ձեր գալուց հետո ես դիմել եմ նրան շարունակելու մեր դիվանագիտական «զրույցը», նա խուսափել է որոշակի պատասխան տալուց:

Այդ պատասխանը լսելուց հետո ես մտքումս որոշեցի. չէնց որ Ղարաբաղի մասին կայանալիք պայմանագրութիւնը հանգի այնպիսի կետի, որ էլ դես-դեն ընկնելու տեղ չի մնա ու պետք է վերջացնել, ապա հայտնել, որ համաձայն մանդատիս (որ դեռ չէի ստացել), ես բանակցել առանց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի, չեմ կարող: Ասեիր ու հեռանայի, համոզված լինելով, որ դա ինձ վրա էժան չի նստի, որովհետև ինձ կհաշվեին մի քաղաքական խաբեբա:

Ռ. Շահնազարյանին ուղարկել էինք Սուլթանովի մոտ տեղեկանալու, թե չէ՞ր ստացվել, արդյոք, և կառավարութիւնը ե՞րբ է մտադիր սկսելու բանակցութիւնը: Սուլթանովը պատասխանել էր, որ կառավարութիւնը Ղարաբաղի հարցով է զբաղված և շուտով երևի կկայանա տեսակցութիւնը: Ասել էր նույնպես, որ պառլամենտը դեռ պետք է քննի այդ հարցը: Անհրաժեշտ է ասել, որ այդ օրերին հարցապնդում պետք է լիներ Ղարաբաղում Սուլթանովի կատարած «սխրագործութիւնների» մասին:

Երեկոյան Հայրենակցական միութեան ժողովը տեղի ունեցավ, ուր ես զեկուցում ու տեղեկութիւն տվեցի Ղարաբաղի և գործերի ընթացքի մասին: Հայ[րենակցական] միութիւնը գտավ, որ ուրիշ ելք չկա, պետք է համաձայնութեան գալ:

Հուլիսի 8

Հայտնի դարձավ, որ այսօր մեր տեսակցութիւնն Ազրբեջանի վարչապետի հետ չի կայանալու: Տեղի ունեցավ խորհրդակցական մարմնի նիստ, ուր «վերջնական» կերպով կշակվեցին ներկայացվելիք պայմանները:

Մեր միսիայից ինձ հաղորդեցին, որ Քիֆլիսից Մ. Ղարաբեկյանի ստորագրութեամբ հեռագիր է ստացվել, որով ինձ

անհապաղ կանչում են Քիֆլիս: Քե՛ Ազգային խորհրդի նախագահությունը և թե՛ մեր Կենտրոնական կոմիտեն կտրականապես շեշտեցին, որ զնալ շեմ կարող, թող այնտեղից գան: Այդ հիման վրա մի համառոտ և զգուշ նամակ գրեցի Լեոյին, թե իմ գալը չի լինում, ավելի լավ է՝ այնտեղից մեկնու մեկը գա:

Երեկոյան Ռ. Շահնազարյանը, որ ելումուտ ուներ Սուլթանովի մոտ, հայտնեց, որ իմ մանդատը ստացվել է, և վաղը կարող ենք սկսել մեր բանակցությունները կառավարության հետ: Մանդատը բերել էր Ադրբեջանի հատուկ ցրիչը, որին տվել էր թուղթը Շուշվա քաղաքային հանձնաժողովը:

Առավոտյան ժամը 10-ին Շահնազարյանը Սուլթանովի մոտից բերեց մանդատս, որ դրված էր բաց ծրարի մեջ: Մանդատս այսպես էր.

ՄԱՆԿԱՏ

Ղարաբաղի
Հայոց Ազգային
խորհուրդ
5 հուլիսի 1919 թ.
№ 66
ք. Շուշի

Ղարաբաղի հայության VI համագումարի կողմից ստեղծված և լիազորված ժամանակավոր հանձնաժողովը սույնով լիազորում է քաղաքացի Միսակ Տեր-Դանիելյանին Բաքվի ղարաբաղցի հայերի Հայրենակցական ընկերության և Հայաստանի ներկայացուցիչների հետ համատեղ, մինչև խաղաղության կոնֆերանսի վերջնական որոշումը, Ադրբեջանի Հանրապետության հետ բանակցություններ վարելու Ղարաբաղի վիճելի տարածքում ժամանակավորապես *modus vivendi* հաստատելու համար: Բանակցությունների արդյունքների մասին քաղաքացի Մ. Տեր-Դանիելյանը զեկուցում է ներկայացնում Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարի քննարկմանն ու հաստատմանը:

Ժամանակավոր հանձնաժողովի նախագահ՝
Շ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Քաղաղար՝ Ք. ԱՂԱ

Մանդատի հետ միասին ստացել էի և հետևյալ արձանագրության պատճենը: (Արձանագրությունը կազմվել էր Դոնա՝ վարզում, թեև ուզարկած թղթի վրա Շուշի էր գրված):

Ղարաբաղի
Հայոց Ազգային
խորհուրդ
5 հուլիսի 1919 թ.
№ 65

ՔԱՂՎԱՍՔ

Ղարաբաղի հայության VI համագումարի արձանագրությունից:

1919 թվականի հունիսի 30

Ի նկատի ունենալով, որ Շուշիում գտնվող անգլիական միսիան չի ներկայացել համագումարին, բացի այդ, քաղաքի հայկական հանձնաժողովի և ժամանակավոր գեներալ-նահանգապետի ներկայացուցչի մասնակցությամբ պետք էր ֆենարկվեր Հայկական Ղարաբաղի քաղաքական դրության հետ կապված հարցը, համագումարը որոշում է՝ մինչև յոթերորդ համագումարի հրավիրումը և վերահիշյալ հարցի վերջնական լուծումը ստեղծել երեք հոգուց բաղկացած հանձնաժողով և նրան լիազորել անմիջապես կամ էլ իր ներկայացուցչի միջոցով բանակցություններ վարելու Ղարաբաղի վիճելի տարածքի քաղաքական դրության կարգավորման համար: Ձայների մեծամասնությամբ անդամներ ընտրվեցին Ներսես Նասիբյանը, Շահնազար Գասպարյանը և Գաբրիել Հայրապետյանը:

Հանձնաժողովի բոլոր բանակցությունների արդյունքների մասին անպայման զեկուցել յոթերորդ համագումարին՝ հաստատելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Քաղաղար՝ Ե. ՔԱՄԱՅԱՆ

Արձանագրության սույն ֆալվածքի նշտությունը հա տալովում է ստորագրություններով և կնիքով

Ժամանակավոր հանձնաժողովի նախագահ՝
Շ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Քաղաղար՝ Ք. ԱՂԱ

Հուլիսի 9

Ժամը 12-ին ես, Ս. Մելիք-Յուլյանը, Ն. Փիրումյանը և Ռ. Շահնազարյանը, համաձայն պայմանավորվածության, գնացինք Ադրբեջանի կառավարչապետի մոտ: Մեզ ընդունեց անմիջապես ինքը՝ Նասիբ բեկ Ուսուրբեկովը: Այնտեղ էր և Սուլթանով խոսքով բեկը, ապա եկավ կարճ ժամանակով նույնպես և Մելիք-Ասլանով խողաղատ բեկը: Անխուսափելի ձեռ-

կանութիւններից հետո մենք ներկայացրինք դեկլարացիան և պայմանները: Դեկլարացիան հետևյալն էր.

«Հայկական Ղարաբաղի վեցերորդ համագումարի նախագահութեան կողմից լիազորված հանձնաժողովը, հետևյալ կազմով՝ Մ. Տեր-Գանիբեկյան, Ռ. Ն. Շահնազարյան, Ս. Ա. Մեշիք-Յուլլյան և Ն. Դ. Փիրումյան, առաջնորդվելով դարերով կողք կողքի խաղաղ և համերաշխ ասորող զարաբաղցի հայերի և թաթարների միջև հարաբերութիւնները սրվելու հնարավորութիւնը կանխելու մասին Կովկասում Մեծ Բրիտանիայի հրամանատարութեան կողմից բազմիցս արված առաջարկութիւններով և Ղարաբաղի հայութեան VI համագումարի որոշումներով, բանակցութիւնների մեջ է մտնում Ադրբեջանի Հանրապետութեան կառավարութեան հետ՝ Ղարաբաղի լեռնային մասում ժամանակավոր *modus v. vendi* հաստատելու համար»:

Իսկ համաձայնութեան ժամանակավոր պայմանագիրը, որ ներկայացրինք, հետևյալն էր.

Լեռնային Ղարաբաղի հայության ժամանակավոր համաձայնությունը Ադրբեջանի կառավարության հետ

Ուշադրութեան անելով, որ Ղարաբաղի լեռնային մասի մասնակցութեան հարցը լուծվելու է հաշտարար կոնֆերանսում, որ յուրաքանչյուր ընդհարում կործանարար է Ղարաբաղում բնակվող ազգութիւնների համար, որ Ղարաբաղի հարցի ցանկացած լուծման դեպքում էլ հայերն ու մուսուլմանները պետք է պարեն համատեղ, Ղարաբաղի հայութեան VII համագումարը իր 4-րդ՝ 1919 թ. օգոստոսի 15-ի անավտոյան նիստում որոշեց կանգ առնել Ադրբեջանի Հանրապետութեան կառավարութեան հետ կնքած ժամանակավոր համաձայնութեան հետևյալ կետերի վրա.

1. Կողմերի կողմից սույն ժամանակավոր համաձայնութիւնն ընդունվում է մինչև հաշտարար կոնֆերանսի կողմից այդ հարցի լուծումը, որպիսի որոշումը միանշանակ պարտադիր է երկու կողմերի համար:

2. Հայերով բնակեցված Ղարաբաղի լեռնային մասը՝ Շուշու, Զիվանշիրի և Զեբրայիլի գավառները (Իրզակ, Վարան-

դա, Խաչեն և Զրաբերդ), իրեն ժամանակավորապես համարում է Ադրբեջանի Հանրապետութեան տարածքում:

3. Շուշին, Զիվանշիրը և Զեբրայիլը մնում են որպես Ղարաբաղի գեներալ-նահանգապետութեան առանձնացված հատուկ վարչական միավորներ, որոնց ներքին կառուցվածքն այնպիսին է, որ լեռնային հայկական շրջանում վարչութիւնը նշանակվում է հայերից: Վերջիններս պաշտպանում են փոքրամասնութիւնների իրավունքները:

4. Ղարաբաղի լեռնային մասում (Իրզակ, Խաչեն, Վարանդա և Զրաբերդ) վարչական պաշտոնատար անձինք նշանակվում են Հայերի խորհրդի անդամների ներկայությամբ:

5. Ղարաբաղի գեներալ-նահանգապետութիւնում հիմնադրվում է Վեցի խորհուրդ՝ կազմված երեք հայից ու երեք մուսուլմանից:

6. Խորհրդի անգամ հայերը ընտրվում են լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան համագումարի կողմից: Համագումարն ունի վերընտրելու իրավունք:

7. Ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կենսագործվել առանց խորհրդում նախօրոք քննարկվելու:

8. Խորհուրդը $\frac{1}{3}$ մասով ունի նախաձեռնողական իրավունք գեներալ-նահանգապետութեան կառուցվածքի և կառավարման հարցերի վերաբերյալ:

9. Խորհուրդն ունի դիտարկման ու հսկողական իրավունք գեներալ-նահանգապետութեան կառավարման նկատմամբ, բայց առանց միջամտելու վերջինիս գործողութեանը:

10. Հիմնվում է գեներալ-նահանգապետի օգնականի պաշտոն քաղաքացիական մասի գծով, որտեղ նշանակվում է հայ:

11. Գեներալ-նահանգապետի քաղաքացիական մասով տեղակալի պաշտոնի համար հայկական համագումարի կողմից ներկայացվում է երկու թեկնածու, որից հաստատվում է մեկը:

12. Ղարաբաղի հայերը օգտվում են կուլտուրական ինքնորոշման իրավունքից:

13. Կուլտուրական ինքնորոշման իրավունքն իրականացվում է Ղարաբաղի հայերի կողմից պարբերաբար հրավիրվող

Ղարաբաղի Ազգային խորհրդի կողմից: Համազումարը հրավիրում է Ազգային խորհուրդ:

14. Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը լիազորված հայերի միջոցով վերահսկում է Հայկական Ազգային խորհրդի գործունեությունը:

15. Ձինվորական մասերը խաղաղ ժամանակաշրջանում բնակեցվում են Խանքենդում (այժմ Ստեփանակերտ — ծառեր կազմ.) և Շուշում:

16. Ղարաբաղի և լեռնային գոտու շրջաններում (Շուշու, Ջիվանշիրի և Ջերբայիլի գավառներ) զինվորական մասերի յուրաքանչյուր տեղաշարժ կարող է կատարվել խորհրդի անգամների $\frac{2}{3}$ մասի համաձայնությամբ:

17. Քաղաքական համոզումների համար՝ թե՛ դատական և թե՛ վարչական կարգով, ոչ ոք չի կարող ենթարկվել հետապնդման:

18. Քաղաքական մոտիվներով հարձակոյթ կերպով հետացած հայերը իրավունք ունեն վերադառնալու իրենց տները:

19. Մինչև հաշտարար կոնֆերանսում Ղարաբաղի հարցի լուծումը, այս երկրամասում դադարեցվում է հայ և մուսուլման բնակչության զինաթափումը:

Մանրություն: Ի նկատի ունենալով, որ զինաթափումը հայտարարված է ողջ Ադրբեջանում, ուստի խոսքը գնում է [դրա] դադարեցման մասին:

20. Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը Ղարաբաղի բնակչությանը ցույց է տալիս նյութական ու բարոյական աջակցություն մուսուլմանների ու հայերի ավերված գյուղերի շուտափույթ վերականգնման համար:

21. Ազգամիջյան հարաբերությունների լավագույնս կարգավորման համար խորհրդի կողմից հաճախակի հրավիրվում են հայ-մուսուլմանական ընդհանուր ու տեղական համագումարներ:

22. Միությունների, խոսքի ու մամուլի լիակատար ազատություն: Ողջ Ադրբեջանի տարածքում զինվորական դրություն լինելու պատճառով ժողովներ թույլատրվում են [գեներալ-նահանգապետության] վարչության կողմից:

23. Մասնավոր ու պաշտոնատար անձանց յուրաքանչյուր զանցանք հետապնդվում է դատական կարգով, բացառությամբ այն զանցանքների ու հանցագործ արարքների, որոնք Ադրբեջանական Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեի 1919 թ. հունիսի 11-ի պարտադիր որոշմամբ քաջառված են ընդհանուր ենթադատությունից:

24. Առ այսօր ազգամիջյան ընդհարումներին մասնակցած լինելու համար ոչ ոք չի հետապնդվում:

25. Սույն համաձայնագիրը մնում է ուժի մեջ ցանկացած իրադրության պայմաններում՝ շրջափակում, ռազմական իրադրություն և այլն:

26. Սույն համաձայնությունը ուժի մեջ է մտնում Հայկական Ղարաբաղի VII համազումարի կողմից ընդունվելու պահից:

Փաղ. Շուշի, 22 օգոստոսի 1919 թ.

Սույն ժամանակավոր համաձայնությունը ստորագրում են Հայկական Ղարաբաղի VII համազումարի կողմից ընտրված պատգամավորները, որ համազումարի բոլոր անդամների կողմից լիազորված են ստորագրելու Ադրբեջանի կառավարության հետ ժամանակավոր համաձայնությունը և, համաձայն ընդունված ժամանակավոր համաձայնության, օժտված են Ղարաբաղի ժամ[անակավոր] գեներալ նահ[անգապետի] օգնականին առընթեր խորհրդի երեք անդամների ընտրության ու Ղարաբաղի կառավարմանն առնչվող տեխնիկական բոլոր հարցերի լուծման իրավունքներով. 1. Դանիել Առաքելյանց, 2. Արրահամ Գեորգեիկյանց, 3. Սիմոն Պողոսով, 4. Հիվանդ է, 5. Սումբատ Բալայանց, 6. Բենիամին Բաբաբեկյանց, 7. Իսրայել Գուլիբեկյան, 8. Արրահամ բեկ Իշխանով, 9. Բախշի Մուրադով, 10. Հովհաննես Արրահամյան, 11. Ստեփան Ստեփանյան, 12. Հակոբ Բալասանյան, 13. Տիգրան Մելիք-Կասպարյան, 14. Հովհաննես Կասպարով, 15. Կոնվարդապետով, 16. Արսեն Իոննեսյան:

Իսկականի հետ ճիշտ է՝ գրասենյակի վարիչ

ՀՀ ՆՇԳ ՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 90, ք. 67—68:

Այսպէս, այս դեկլարացիայով ու պայմաններով սկսեցինք բանակցութիւնն Ադրբեջանի հետ: Խոսակցութեան ընթացքում Սուլթանովն իրեն լավ չպահեց և մի քանի անգամ շեշտեց, որ Ղարաբաղում եթէ անհանգստութիւն է, պատճառը դաշնակցութիւնն է: Շահնազարյանն, իհարկե, լուռ էր, բայց Սուլթանովն անպատասխան չէր մնում: Ուսուրբեկովն, ընդհակառակը, իրեն շատ լավ էր պահում, նրա յուրաքանչյուր խոսքը շափված էր ու կշռված. նա խորամանկ ու խելոք մարդու տպավորութիւն թողեց: Անճնակարևոր կետերի դեմ նա առարկեց՝ անընդունելի համարելով: Սակայն ես իմ սրտի խորքում համոզված էի, որ նա բոլոր կետերը պետք է ընդուներ, որովհետև Ադրբեջանի ցանկութիւնը 2-րդ կետն էր: Մնացածը երկրորդական էր: Եվ հենց ինձ տանջողը երկրորդ կետն էր: Ես հոգեմեծ էի...՝ հարցը լուծելու այս կամ այն միջոցով: Եվ նույնիսկ եթէ նա այդ շատեր էլ, ապա կար գումարվելիք համազումարը, որտեղ, ես մեծապէս հույս ունեի, կարելի էր մերժել տալ բոլոր համաձայնութիւնները:

Երկար բանակցութեանից հետո Ուսուրբեկովն ասաց, որ ինքը վերջնական պատասխան տալ չի կարող, Ադրբեջանի Պաշտպանութեան խորհուրդը պետք է պայմանները քննութեան առնի, որից հետո միայն ինքը կպատասխանի:

Մենք դուրս եկանք և հենց այդ երեկո Ազգային խորհրդի պրեզիդիումին ու Տ. Բեկզադյանին զեկուցեցինք տեղի ունեցածի մասին: Ես հայտնեցի, թե՛ ռքանի որ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը, հակառակ իմ մանդատի, չի մասնակցում բանակցութիւններին, ապա շափազանց դժվարանում է իմ դրութիւնը: Համազումարը կարող է մեղադրել ինձ զանցառութեան համար, ուստի և կուզենայի իմանալ, թե որչափով ես իրավազոր եմ այս պատասխանատու գերը մինչև վերջ տանելու: (Այստեղ ավելացնել, որ Խատիսյանը գրել էր Բեկզադյանին, թե Արամայիսը պատասխանատու կլինի Գաշնակցութեան) բյուրոյի ու կառավարութեան առաջ, եթէ ստորագրի համաձայնագիրը): Եվ բոլորը միաբերան պնդեցին, թե պատասխանատուութիւնը բաժանում են իրենց մեջ:

* Ձեռագրում մի շարք տեղեր վնասված են: Մանր. կազմակերպի:

Մոռացա հիշել, որ այդ օրը զարտուղի ճանապարհներով Ղարաբաղից ստացել էի հետևյալ գրութիւնը.

Ղարաբաղի
այոց Ազգային խորհուրդ
հուլիսի 1919 թ.
№ 67
Շուշի

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ ՔԱՂԱՔԱՑԻ
ՄԻՍԱԿ ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
Վեցերորդ համազումարի կողմից
կազմված ժամանակավոր հանձնաժողովը նպատակահարմար է
տեսնում տեղեկացնել Ձեզ, որ Ղարաբաղի վիճելի տարածքում
modus vivendi հաստատելու հարցի առթիվ ո՛չ պաշտոնա-
կան և ո՛չ էլ անհատական խորհրդակցութիւններում, որտեղ
և ում հետ էլ տեղի ունենա, Ռ. Ն. Շահնազարյանը իրավունք
ունի Ձեզ հետ մասնակցել և հայտարարութիւն առնել Ղարա-
բաղի հայութեան անունից:

Ժամ[անակավոր] հանձ[նաժողովի] նախ[ագահ]

Շ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Քարտուղար՝ Թ. ԱՂԱ

Այս գրութիւնը ես ներկայացրի Ազգ[ային] խորհրդի
պրեզիդիումին, ուր կար և Հայաստանի դիվանագիտական
ներկայացուցիչը, հետո Գաշնակցութեան կենտր[ոնական]
կոմիտեին, երկու տեղերում էլ ինձ ստիպեցին այդ թուղթը
ցույց շտալ Շահնազարյանին, որովհետև նա լիազորութիւն
լուծենալով համազումարից, այլ՝ քաղաքի հանձնաժողովից,
կարող է անիրավութիւններ առնել, որի հետևանքը կլինեն
խզված բանակցութիւնները, որ բոլորովին ցանկալի չէ: Կու-
զակցական կարգապահութիւնը ստիպեց, որ հպատակվեմ
(մի խոսքով՝ շփոթ):

Հուլիսի 11

Այսօր Բեկզադյանը կարգաց Երևանի կառավարութիւնից
հասցված գրութիւնը: Գրել էր կառավարչապետ Խատիսյանը:
Բովանդակութիւնն այն էր, որ Ղարաբաղի խնդրում Հայաստա-
նի կառավարութիւնը կանգնած է իր նախկին տեսակետին, այ-
սինքն՝ Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է, որ

Մ. Տեր-Դանիելյանի և Ռ. Շահնազարյանի կատարածը համարում է «непредуманным», որ Ղարաբաղի ժողովուրդը եթե ուզում է բանակցել, Հայաստանի կառավարությունը չի արգելի:

Այդպես ուրեմն, երբ ամիսների ընթացքում մեր աղաղակը խփում էր Երևանի խուլ պատերին ու անպատասխան մնում, երբ մենք շարունակ «փող», «փամփոփուշտ» էինք աղաղակում և Երևանը խուլ էր մնում, երբ մենք Ղարաբաղում հնոցի մեջ եփվում էինք, Ադրբեջանն իր թնդանոթներն էր շարել մեր շորս կողմը, իսկ Հայաստանի կառավարությունը միայն իր գրպանում էր բռունցք ցույց տալիս, մեզ թողնելով ահավոր թշնամու ճիրաններում մեն-մենակ թպրտալիս, այդ բոլորը «предуманным» էին, իսկ երբ Տեր-Դանիելյանը հազար ու մի խորամանկ միջոցներով դարձյալ ձգձգում էր վրձնական ըրպեն ու ժամանակ տալիս Հայաստ[անի] կառավարությանը իր խելքն ու ուժը ցույց տալու, նստիսյանը, բացարձակապես արդարացնելով Երևանը, մեղմ ասած՝ անզգույշ էր համարում մեր արածը և զոհաբերություններիս գլխով նոր զոհաբերությունը, այնուամենայնիվ, ստիպողաբար պետք է լռեի, որովհետև Ղարաբաղի խնդիրը կար մեջտեղ: Բարձրացրած աղմուկներս միայն շփնասեին Ղարաբաղը: Հայկական միսիայում իմ վրդովմունքին պատասխանեցին, որ այնտեղ՝ Երևանում, իրազեկ չեն, հարկավոր չէ հուզվել, այլ պետք է շարունակել սկսածը: Երեկոյան Դաշ[նակցության] Կենտր[ոնական] կոմիտեում հարց դրեցի, որ այսպիսի պայմաններում բանակցություն շարունակելն անհնարին է, իմ նիհար ուսերին չեմ կարող տանել այս սարսափելի ծանր պատասխանատվությունը, թողնում եմ՝ Երևան գնալու համար: Մերոնք ամենայն եռանդով պնդում էին, որ պետք է մնամ ու շարունակեմ:

Այսօր նույնպես Թիֆլիսից ժամանեց Մ. Ղարաբեկյանը: Նա եկավ ինձ մոտ և միասին դուրս եկանք քաղաք: Դրսում նա բացատրեց, թե ինչու է եկել: Ծն էլ ներկայացրի հանգամանքներն ու մինչև այսօր կատարված գործերը: Նա եկել էր բանակցությունների մասին գաղափար կազմելու ու հայտնելու, որ նոր նպաստավոր հանգամանքներ կան մեզ համար, հարկավոր է Ադրբեջանին ուշադրություն չդարձնել:

Երեկոյան Ազգային խորհրդի պրեզիդիումի նիստ տեղի ունեցավ, որտեղ Ղարաբեկյանը զեկուցեց «նոր նպաստավոր հանգամանքների» մասին: Դուրս եկավ, որ այսինչ տեղը, այսինչ տեղն ամերիկացին այս է ասել, այսինչ եվրոպական միսիայի ներկայացուցիչն այն է ասել և այլ խոսքեր, որ աստ էին ասել ու շատ խոստացել, սակայն այժմ ոչինչ չտատով հանդերձ՝ մեզ թողել օձի բերանում: Ծն լուռ լսում էի, ներկա գտնվողները նույնպես բացատրեցին հանգամանքներն, ասելով, թե թող այստեղ շարունակվեն բանակցությունները, իսկ մեր բարեկամներն էլ «թող կատարեն իրենց բարի գործը առանց արյունահեղության»:

Հուլիսի 12

Ցերեկով՝ նորից ժողով Ազգային խորհրդի պրեզիդիումի: Ղարաբեկյանը մանրամասն զեկուցեց, վերջիվերջո հայտարարելով, որ թե՛ հայրենակցական միությունները, թե՛ ազգային խորհուրդները և թե՛ վերջապես մասնավոր մարդիկ արել են բոլորը, ինչ որ պետք է: Ժամանակն է արդեն, որ Հայաստանի կառավարությունը հանդես գա՝ ինքը լուծի հարցը, պատասխանատվությունը վերցնելով այս կամ այն գործիչ, լարմնի ուսերից: Այսինքն՝ նա ասաց այն, ինչ ցանկանում էինք մենք բոլորս Ղարաբաղում:

Հուլիսի 18

Երկրորդ նիստն ունեցանք Ադրբեջանի կառավարչապետի նիստ: Նա առաջարկեց իր պայմանները, որ ուղղակի ծաղր էր արժենա: Ոչինչ պատասխան չտալով, խնդրեցինք վերջնական մտադրած իրենց պայմանները ներկայացնել: Նա խոստացավ երկու ժամից հետո:

Հուլիսի 14

Պայմաններն ստացանք միայն այսօր և ժողովներում քննությունների առնելով՝ գտանք անընդունելի: Պետք էր պնդել մեր պայմանների վրա, հակառակ դեպքում ես պատրաստ էի վերջին ըրպեին կիսատ թողնել սկսածն ու հեռանալ: Սուլտանովն էլ կարծես մի բան նկատել էր:

Ղարաբեկյանը գնաց Քիֆլիս՝ տանելով իր հետ այն համոզմունքը, որ Ղարաբաղը կանգնած է մեծ աղետների հեռանկարի առաջ, և ամեն պատասխանատվություն ընկնում է Հայաստանի կառավարության վրա, եթե նա չմիջամտի:

Ուսուրբեկովի հետ նորից տեսակցելով, հայտնեցինք, որ իրենց պայմաններն ընդունել չենք կարող: Նա էլ ասաց, որ քննենք ու գանք համաձայնություն: Եվ այս անգամ նա մեր ներկայացրած գրեթե բոլոր պայմաններն ընդունեց, բացի 2-րդ և 14-րդ կետերից և մի երկուսի թեթև փոփոխությունն էլ ինքն առաջարկեց: Ընդհանրապես նկատելի էր, որ Ադրբեջանի կառավարությունն աշխատում է շուտով լուծել այդ հարցը. երևի Զանգեզուրը նրան հանգիստ չէր տալիս:

Ամսի 16-ին Երևանից եկավ Արշակ Հովհաննիսյանը: Բոլոր տվյալներից երևում էր, որ նրան ուղարկել էին բանակցությունները խանգարելու և ինձ ուղարկելու Երևան: Արշակը խոսում էր իշխանավորի, հրամայողի տոնով, որ ինձ բուրովին դուր չեկավ: Երևանում նստած ապիկարներն արթնացած էին ձևացել, աչքերը տրորել ու հանկարծ տեսել, որ Ղարաբաղն իսկապես ճգնաժամային դրության մեջ է, և էլ ուրիշ ելք չգտնելով՝ մտածել են. «Ի՞նչ անենք, ի՞նչ շանենք խանգարենք, որ համաձայնություն չկայանա, Արամայիսին էլ կանչենք Երևան, որ «հիմարություններ» շանի»: Եվ Արշակը մնում էր մնում՝ իր լիազորություններից խոսում: Աստված օրհնե նրան, նա էլ հենց այդ էի ուզում, որ մի կերպ թողնեի-հեռանայի, նրանից հետո համոզված լինելով, որ Հայաստանի կառավարությունը կիշնի ասպարեզ ու կա՛մ կզիշի Ղարաբաղը, կա՛մ վերջապես՝ մի որևէ ձևով պետական միջոցներով կլուծի խնդիրը: Ես էլ ասացի.

— Դեռ մի շաբաթ առաջ Առն Քաղեսոյանի և ուրիշների ներկայությամբ ասել եմ, որ միանգամայն հպատակվում եմ կուսակցության և կառավարության հրահանգին, իսկ այսօր հայտնում եմ, որ այդևս ձգձգելու, ձգձգողական քաղաքականություն վարելու հնարավորություն չունեմ, թո՛ղ մեր սկսած գործը Հայաստանի կառավարությունը շարունակի իսկ ես վաղն իսկ կճանապարհվեմ Երևան:

Իմ այդ կտրուկ հայտարարությունը լսողները գտան, որ ես շտապում եմ, որ պիտք է դեռ ձգձգել:

Սերգեյ Մելիք-Յուլյանը ևս շտապում էր հեռանալ Հյուսիսային Կովկաս: Ես ու նա մտածեցինք մի այսպիսի բան, գնալ Ուսուրբեկովի մոտ ու հայտնել նրան, որ մենք VI համագումարի գծած շավղից շատ ենք շեղվել և որպեսզի լինելիք նոր համագումարում թյուրիմացություններ չառաջանան, ապա մշակած պայմանները տանել, ներկայացնել VI համագումարից մնացած հանձնաժողովին, թող քննի, դատի և եթե հանձնաժողովն ավելացնելու կետեր կունենա, ավելացնի, նորից բերվի Բաքու, վերջնականապես մշակվի և այնուհետև նոր միայն տարվի հաջորդ՝ VII համագումար:

Շատ կասկածում էինք, թե Ուսուրբեկովը կընդուներ այս առաջարկությունը, բայց եթե ընդուներ, մենք շահում էինք նախ այն, որ ձգձգումը կշարունակվեր անորոշ ժամանակով, և մեկ էլ, որ ես ոչ թե փախուստի ձևով, այլ ազատ կերպով կգնայի Երևան և այնտեղ՝ ամեն ինչ բացատրելով հանդերձ, կտեսնեի էլ, թե ի՞նչ է արվում Ղարաբաղի համար:

Մեր այդ ծրագիրը հայտնեցինք Ռ. Շահնազարյանին և Ն. Փիրումյանին: Շահնազարյանը մի քիչ փիլիսոփայելուց հետո համաձայնեց, իսկ Փիրումյանն անմիջապես միացավ մեզ:

Առհասարակ Ղարաբաղի ողբերգությունը ինձ համար երկրորդություն էր պատրաստել և ես, վախենալով պատմության գնահատությունից, ճնշվում էի այն ամենից, ինչ որ կարող էր վնասել իմ 30 տարվա գրական-հասարակական գործունեությանը: Բայց ի՞նչ անեմ, եթե մեջտեղ, իրերի բերվամբ, ես էի մնացել կանգնած:

Երկար խորհրդակցելուց հետո վճռվեց Ուսուրբեկովին հայտնել մեր որոշումը: Հուլիսի 22-ին ես, Նիկոլոն ու Շահնազարյանը գնացինք նրա մոտ: Մելիք-Յուլյանն արդեն տոմսակ վերցրած՝ պատրաստվում էր հեռանալու: Ուսուրբեկովը, բավական մտածելուց հետո, պատասխանեց.

— Պարոններ, բավական է ինչքան ձգձգվեց այս հարցը: Գուր զարձալ ուզում եք ձգձգել, երևի ինչ-որ բանի սպասե-

լով, կարծելով, որ մի երրորդ ուժ կարող է հանկարծ մի որևէ նոր բան անել: Բայց ես ձեզ նորից կրկնում եմ. ձեռք քաշեք այդ երրորդ ուժից: Ես Սուլթանովի հակառակորդն եմ և Շուշվա դժբախտ դեպքերի պատճառով ինքս նրան կհեռացնեի պաշտոնից, բայց որովհետև երրորդ ուժն է միջամտել ու ցանկանում հեռացնել, ապա կառավարության վարկի հարցն է մեջտեղ գալիս: Եվ երբ Կորին եկավ այստեղ, ես համառորեն պնդեցի, որ Սուլթանովը պետք է վերադառնա իր տեղը, և նա ստիպված եղավ համաձայնել (այդ օրերին համոզված պնդում էին, որ Սուլթանովն այլևս չի վերադառնա Շուշի): Ուրեմն երրորդ ուժի մասին շատ ծեծեք: Չմտածենք նույնպես, որ գործը ձգձգելով՝ Ղարաբաղը կշահի: Իսկ եթե դուք անկեղծորեն ցանկանում եք իսկապես Ղարաբաղի հայերին իրազեկ դարձնել պայմանների մասին, ապա թող այդպես լինի, միայն թե 8, 10 օրից ավելի չտևի:

Այդպիսով, գործը նորից ընկավ Ղարաբաղ, և այս անգամ գնացողը պետք է լինի Ռ. Շահնազարյանը, որ այստեղ չէր համարձակվի գավառ դուրս գալ և մի ուրիշ որևէ մեկը, որ կարողանար խոսել գավառում: Ես վերադառնալ Ղարաբաղ չէի կարող, քանի որ Երևանից պահանջում էին, մնում էր ուղարկել ուրիշի, և ընտրեցինք Ս. Հարությունյանին՝ մի խելացի երիտասարդի:

Ռ. Շահնազարյանը ճանապարհովեց Ղարաբաղ: Այժմ հարկավոր էր Ղարաբաղին հասկացնել, ինչպես Արշակ Հովհաննիսյանն էր ուզում, որ Ռ. Շահնազարյանը կարող է նրանց թյուրիմացության մեջ գցել, որ խնդիրն այսպես է ու այսպես, որ Հայաստանը երբեք Ղարաբաղը զիջելու մտադրություն չունի, թող համագումարը՝ երբ գումարովի, այդ հանգամանքն ի նկատի ունենա:

Այդ ժամանակ պատրաստվում էր Գոսիակի սարերով Ղարաբաղ գնալ մեր «հին ընկերներից մեկը»՝ Ս. Ղ.-ն: Օգտավելով հանգամանքից, նրան կանչեցին Գաշնակցության գրասենյակ, որտեղ մանրամասն բացատրելով ամեն ինչ, պատվիրեցին, և նա հանձն առավ սրբությունը կատարել, որ Գոսիակից սկսած մինչև Ղարաբաղ, իր անցնելիք բոլոր տեղերում հայտնի, թե ոչ մի համաձայնություն Ադրբեյջանի հետ ընդունելի չէ, և Ղարաբաղը պետք է կանգնած լինի Հայաս-

տանի տեսակետին: Արշակ Հովհաննիսյանն այդ հանձնարարությունն անելուց հետո իմ հարցին, թե ե՞րբ պետք է գնա Երևան, պատասխանեց. «Հենց որ դու ոտդ դնես վազոն, հետևյալ օրն էլ ես կգնամ: Մինչև դու չճանապարհվես Երևան, ես այստեղից չեմ գնա»: Ես շատ զարմացա նրա այդ պատասխանի վրա, բայց ավելի հասակով ու ավելի եփված, ավելի խոսքի տակ-գլուխ իմացող մեկը լինելով, քան դիմացինը, լռեցի, մտքումս վճռելով, որ ահա կգնամ Երևան ու հարկավոր փոթորիկն այնտեղ կբարձրացնեմ: Ապա մի տոմսակ ևս գրելով Շուշի՝ Հայաստանի մասին և առաջին գնացողով ուղարկելով, պատրաստվեցի ճանապարհվել Երևան:

Հուլիսի 28

Նստեցի վազոն: Սուլիշը սուլեց, գնացքը շարժվեց, և ես երեխաներիս նորից թողնելով սրա-նրա դռներին, առանց փողի, առանց հացի՝ ճանապարհվեցի դեպի Երևան, անհուն փափագով լցված, թե երբ պիտի հասնեմ ու տեսնեմ իմ բաղձալի, իմ թանկագին Հայաստանը, որի համար ոչի՛նչ, ոչի՛նչ չէի խնայել...

Հասա Քիֆլիս, այնտեղից՝ Սանահին: Ինչպիսի՞ շերմ զգացումներ... Իմ հայրենիքն է, իմ Հայաստանը: Նույն զգացումները, ինչ զգացել էի 1896 թվականին, երբ իբրև հայդուկ՝ պարսկա-տաճկական սահմանն անցնելով, Հայաստանի հողը թևակոխեցի³¹:

Երևանում պատահեցի Դավիթ Անանունին: Իշա նրա մոտ: Լավ է, որ Դավիթը պատահեց, թե չէ երևի տեղ չպիտի գրտնեի: Նույն օրը տեսնվեցի ընկերներիցս մի քանիսի հետ, իսկ հաջորդ երեկո [Գաշնակցության] բյուրոյի ժողովը տեղի ունեցավ, որտեղ ես հանգամանորեն զեկուցեցի Ղարաբաղի վիճակը անցած-գնացածի ու նրա ներկա դրության մասին: Կարծում էի, թե իմ տված տեղեկություններից հետո մարդիկ ծառու-ծառու կլինեին, անմիջապես կձեռնարկեին բավարարելու այն բոլորը, ինչ որ պահանջվում էր Ղարաբաղի համար: Բայց իմ հարձակումներին ի պատասխան՝ ենթարկվեցի հակահարձակման, մեղադրվողը Ղարաբաղն էր: Այդ էր գուրդալիս նրանց ասածների ոգուց:

Հետո զեկուցում տվեցի դաշնակցության պառլամենտական

Ֆրակցիային, հետո մի հրապարակախոսական ժողով ունեցաւ զարաբաղցիների հետ: Վերջը խոսեցի խառնայանի հետ և՛ պըր-
ծավ... Այս բոլորից հետո եկա այն եզրակացութեան, որ Ղա-
րաբաղի դատը գտնվում է անճարակ մարդկանց ձեռքին, որ
այդ մարդիկ Ղարաբաղով այնքան են հետաքրքրվում, ինչ-
քան ես՝ Միամով: Իմացա միայն, որ Ղարաբաղի համար բաց
է թողնված ութ միլիոն ռուբլի, իսկ թե այդ ութ միլիոնը ո՞ր
էր գնացել՝ չիմացա: Գիտեի նաև, որ մենք Ղարաբաղում մեծ
քանակութեամբ փամփուշտ կարող էինք գնել, և արդեն
գործը սարքված էր, սակայն կոպեկ չունեինք, որ գնեինք...
Բոլոր փաստերն ու իրերը կողք կողքի դնելով՝ համոզվեցի,
որ ներկա պայմաններում Ղարաբաղն ամենաուղիղ ճանա-
պարհն է վերցրել, և Հայաստանի այս կառավարութեան վրա
հույս դնել ու խիզախ քայլեր անել՝ նշանակում է գնալ դեպի
գերեզման:

Իմ հարձակումներին, թե ոչինչ չեն արել և ոչինչ չեն անում
Ղարաբաղի համար, պատասխան ստացա, թե՛ իսկապես,
Քաջազնունու կառավարութիւնը ոչինչ չի արել, իսկ իրենք
անում են որոշ քայլեր: Բայց ես ոչ թե որոշ, այլ նույնիսկ
անորոշ քայլեր էլ չտեսա: Եվ սրանով վերջացավ բոլորը:
Լսեցին, խոսեցին ու մոռացան...

Եվ ես, մտքումս հայհոյելով ինձ, որ այսքան միամիտ
եմ, որ դեռ հավատում եմ, թե նախկին նվիրվածութիւնը կա
գաղափարակիրներին մեջ, միանգամայն հիասթափվելով՝
քաշվեցի մի կողմ: Եվ չքաշվել չէի կարող, որովհետև «առաջ-
ներում շեմքս մաշող ընկերներս այժմ անմատչելի Արա-
մազդներ էին դարձած և ապիկար քաղաքական «չոչեր»»:

Ես համառոտ կերպով նկարագրեցի Ղարաբաղի սղբեր-
գութիւնը մինչև այն օրը, երբ իմ դերը վերջացրի: Ղարա-
բաղում տեսնելով, որ Հայաստանից հույս չկա, ինձնից հե-
տո ուղարկում են նոր պատգամավորութիւն, որ գալիս է
Բաքու, համաձայնութիւն կայացնում, որի 26 կետերը (պայ-
մանները) հուզումնալից նիստերից հետո, երբ Սուլթանովը
48 ժամ ժամանակ էր տվել ընդունելու, որ հակառակ դեպ-
քում կսկսի ռազմական գործողութիւնները, VII համագու-
մարն ընդունում է. Ղարաբաղն այդպիսով ժամանակավոր
կերպով ենթարկվում է Ադրբեյջանին:

ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՍ ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Թե՛ Հայաստանում գտնվող և թե՛ Հայաստան այցելող ու
վերադարձող շատ ականատեսներ տրտնջում էին, որ երկիրն
անբարեկարգ վիճակում է, որ հայրենիքը գրեթե այսօր հի-
վանդ է, որ նրա հարեան նորակազմ հասարակութեան պե-
տութիւններն ամբողջ թափով առաջ են գնում, ամրապնդվում
են, իսկ Հայաստանը ոչ միայն առաջ չի գնում, այլև ավելի
է թուլանում և ստեղծագործական, շինարարական ոչինչ չի
կատարվում այնտեղ»:

Այդ կարծիքն անհատներից արդեն անցել է հասարա-
կութեան լայն խավերին, ընդունվել իբրև ճշմարտութիւն և
դարձել «անհերքելի համոզմունք»:

Երբ Ղարաբաղի խնդրով գնացի Երևան (1919 թ. հուլիսի
27), պարզ է, որ առաջին իսկ հերթին պետք է հետաքրքրվեի
այդ տարածված «ճշմարտութիւններով»: Կային, իսկապես,
խոշոր թերութիւններ, կային և առաջադիմութիւններ:

Երբ մարդ Բաքվի կայարանում որոշ դժվարութիւններից
հետո կարողանում է տոմսակ գտնել ու մտնել վազոն, նա
արդեն զգում է, որ ինքն իսկապես պառավել է (իսկ ո՞վ է
տարիների ընթացքում այդպիսի բան տեսել)՝ տեղերը հա-
մարագրված, ամեն մարդ իր տեղը բռնած, միմյանց չեն
հրհրում, կոնդուկտորը իր գործն է կատարում, ուղեկցորդը՝
իր, մյուս պաշտոնյաներն էլ՝ իրենց: Գնացքները կայարան-
ներում կանգ են առնում այնքան, ինչքան որ նշանակված է:
Ծանապարհին մարդ սոված չի մնա, հաց, տաք կերակուր,
մրգեղեն, կաթ, ձու միշտ կարելի է ճարել: Մի խոսքով՝ հա-
մեմատաբար կարգ ու կանոն, հանգիստ ճանապարհորդու-
թիւն և հավատ, որ որոշված ժամանակին կլինես ցանկա-
ցած տեղը: Նույնը և գրեթե վրաստանի երկաթուղիներում:

Ճիշտն ասած, Ադրբեջանի երկաթուղիների ծառայողներն ավելի ուշադիր ու մեղմ են դեպի ուղևորները, քան են՝ Վրաստանինը (ի բաց առյալ այն ժամանակները, երբ Ադրբեջանի թուրքերն այս կամ այն առիթով հայերից ուզում են վրեժ հանել, զնացքները տանում են [դեպի] դժոխքներ):

Բայց հասնում ենք Սանահին թե չէ, պատկերը փոխվում է: Այնտեղ երկաթուղին կայարանի տպավորություն չի թողնում, այլ խռնված, զայրացած բազմության մի անհամբեր շուկայի: Մարդիկ, իրերը շալակած, մի անկյունից մյուսն են գնում, կամ պատերի տակ կապոցների վրա երեխաներին քնեցրած՝ թթված դեմքով, ինչ-որ մեկի հասցեին սպառնալիքներ, անեծքներ ու հայհոյանքներ ուղարկում:

Այնտեղ տոմսակի մասին մտածելն ավելորդ է, այլ պետք է աղոթել, որ մի որևէ ապրանքատար գնացք հասնի Երևանից ու մարդիկ միմյանց շարդելով, միմյանց կոխկրտելով, կարողանան բաց վագոններում նստել իրար գլխի և սպասել անվերջ, ձանձրալի ժամեր, թե զնացքը երբ է շարժվելու դեպի Երևան:

Մի վնասված շոգեքարշի առաջից, մի ուրիշն էլ հետևից հրելով՝ գնացքը վերջապես առաջ է շարժվում: Բայց վայ այն «առաջ» շարժվելուն. մի քիչ բարձր տեղերում շոգեկառքերը փնչացնում, քափ ու քրտինք են մտնում՝ կանգ առած գնացքի համառությունը կոտրելու, չի հաջողվում...

Հասնում ես այս կամ այն կայարանը, հաց չկա, մրգեղեն, կաթ, ձու, երբեմն նույնիսկ ջուր՝ աստված տա: Եվ ահա սկսում են տրտունջներ, հայհոյանք, ծաղր ու ծանակ՝ Հայաստանի ու նրա կառավարության հասցեին:

Այդտեղից՝ համեմատած Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի, որտեղից և իհարկե, աչք ծակելու շափ տարբերություն՝ կովկասյան երևի նոր ստեղծված պետությանց միջև:

Այդ տպավորությունն է, որ իբրև ճշմարտություն երկաթուղիների վերաբերյալ, ականատեսները պատմում են մանրամասնորեն և բոլորի մեջ ստեղծում այն համոզմունքը, թե Հայաստանը կմեռնի «բնական» մահով:

Բայց այդ եզրակացությունը բավականաչափ անբարեխիղճ մի եզրակացություն է, իսկ համեմատությունը՝ միակողմանի:

Ուրիշ է Հայաստանը, ուրիշ՝ Ադրբեջանն ու Վրաստանը: Այո՛, հենց որ հասնում ենք Սանահին, իսկույն զգում ու տեսնում ենք, որ համեմատաբար բարեկարգ, շենք ու շուքով երկրներից հասել ենք մի անբարեկարգ, քառասյին դրության մեջ գտնվող երկիր: Բայց դրա հետ միասին մի ուրիշ բան էլ ենք տեսնում, որ Սանահինից սկսած մինչև Ալեքսանդրապոլ-Երևան՝ կարծես մի սոսկալի փոթորիկ է զարկել ու անցել՝ իր հետևից թողնելով ավերածություն, ավերածություն ու ավերածություն...

Հայաստանը բացառիկ պայմաններ է ունեցել. շատ տալ, բայց ոչինչ չստանալ, նույնիսկ՝ ունեցածիցն էլ զրկվել:

Ռուսական զորքերի Կովկասյան ճակատից «քաջարար» հապշտապ հետ քաշվելուց հետո ուսաց կառավարության հսկայական ժառանգությունից Հայաստանին աղքատիկ բաժին էլ չընկավ, մինչդեռ նրա երկու հարևաններն այնքան բաժին ստացան, որ ավելի քան բավական էր նոր կազմվող պետություններին հզոր նեցուկ հանդիսանալու: Օրինակ՝ 10 000 վագոններից Հայաստանին ընկել էր միայն 400 վագոն, իսկ 9600-ը՝ Վրաստանին և Ադրբեջանին:

Ալեքսանդրապոլ: Տաճիկների ձեռքով ավերված դեպոյի առաջ կանգնած են բազմաթիվ շոգեկառքեր, սակայն միայն իբրև վկաներ, թե բարբարոս ձեռքն ի՞նչ կատաղության մեջ է աշխատել փշացնել հաղորդակցության այդ հզոր գործոնները: Դրանք շոգեկառքեր չեն, այլ ծովածած, ջարդուփշուր եղած երկաթների կույտեր:

Կայարաններում զանգեր չկան, պոկել-տարել են, «սեմաֆորները» փշացրել, նրանց վրա գնդակների հետքեր են. երեվի «քաջ» տաճիկները ճշան են խփել:

Կայարանները և նրանց շուրջը գտնվող երկաթուղային շենքերից շատերն ավերված ու քարակույտեր են դարձած:

Եվ երբ այդ բոլորը տեսնելուց հետո համեմատություն մեջ ես դնում Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը, ապա բարեխիղճ, ոչ շարամտությամբ խնդրին մոտեցող, այլ սըր-տացավ մարդն իր սրտի խորքում կխոստովանի, որ Հայաստանի երկաթուղիները եթե ողբալի դրության մեջ են, ապա դրա պատճառը ո՛չ Հայաստանի կառավարությունն է, ո՛չ պառլամենտը, ո՛չ էլ այս կամ այն անհատը առանձին վերց-

րած: Եվ նա կխոստովանի նույնպես, որ եթե Հայաստանն էլ ստացած լիներ նույնքան երկաթուղային հարստություն, ինչքան իր մյուս երկու բախտավոր հարևանները, ապա Հայաստանի երկաթուղիներով ճանապարհորդողները գուցե ավելի հարմարություններ ու ուրախություններ գտնեին, քան մյուս դեպքում:

Այդպես և մյուս ճյուղերում: Տաճիկներն ու գերմանացիները եկան՝ իբրև բարեկամներ Վրաստանի ու Ադրբեջանի: Ռուսաստանից ժառանգածը քիչ էր, թալանը քիչ էր, տաճիկներն էլ բավականին մթերք թողեցին Ադրբեջանում, մինչդեռ Հայաստանում՝ ոչինչ, ընդհակառակը, քանդեցին, ավերեցին, խլեցին ու թալանեցին: Հայերը, ռուսական կառավարությունն ու այլ կապիտալիստներ ձեռք ձեռքի տված՝ տասնյակ տարիների ընթացքում ստեղծեցին Թիֆլիսն ու Բաքուն իրենց հարստություններով, իսկ Երևանը ո՛չ հայն էր շինել, ո՛չ ռուսը, ո՛չ վրացին: Տաճիկն էլ եկավ եղածը քանդեց: Եվ այդ բոլորի վրայից եկավ «դաշնակից» Անգլիան, փամփուռների պաշարը բեռնեց վագոնները, տարավ հանեց Հայաստանից, որպեսզի տաճիկներն ու Ադրբեջանն ավելի արիաբար իրենց գործը տեսնեն Հայաստանում: Ամիսների ընթացքում թուրքերը հայերին հանգստություն չտվեցին և չէին թողնում, որ նրանք ձեռք զարկեն ստեղծագործական աշխատանքի: Ել ինչո՞ւ նեղանալ, թե Հայաստանում սով է, աղքատություն է, մերկություն է, անբարեկարգություն է:

Չէ՞, Հայաստանը չէ մեղավորը և ո՛չ էլ նրա կառավարությունը, այլ օրյեկտիվ պայմանները: Մի երկիր, որ ձայրեծայր լիքն է որբերով ու գաղթականներով, որ ամեն կողմերից ենթարկված է եղել և անիրավ հարևանների, որ վար ու ցանքս անելու մասին մտածելու անգամ ժամանակ չի ունեցել՝ նրանից ավելին պահանջել չի կարելի: Բայց որ այդ երկիրը բնագոյարար կաշվից դուրս է գալիս ապրելու համար, դա փաստ է: Եվ նա ապրելու է, անկախ իր կառավարության ցանկությունից: Եվ գուցե կառավարության ներկա կազմը բուրդովին մեղք չունի Հայաստանի հմայքը բարձրացնելու մեջ, եթե այդ զարմանալի ժողովուրդը տոկոսնության մեջ ու համբուրության մեջ իր ուսերի վրա շտանի բուրդ փորձանքներն ու շինարարությունը:

Միայն մի փոքր ժամանակ ու հանգստություն: Կտա՞ն, արդյոք, «սիրելի» հարևանները: Առավել ևս՝ խորհրդային իշխանությունը:

Իսկ ի՞նչ տպավորություն ստացա տասնյակ տարիներ միմյանց հետ մտերմական-գաղափարական հարաբերություն ունեցած ընկերներիցս: Այդ մասին միայն երկու խոսք. նրանցից շատ-շատերն ապահովված էին: Ի՞նչ ճանապարհով, որտեղի՞ց, չգիտե՞մ: Եվ երբ ես սոված, մերկ երեխաներիս թոռնի՞ց, չգիտե՞մ: Եվ երբ ես սոված, մերկ երեխաներիս թոռնի էի սրա-նրա դռանն ու նախկին ոգևորության մեջ, սակայն առանց թմբկահարության խրվել գործի մեջ, առանց կոպեկի, թալանված, ոչ ոք չհարցրեց, թե ինչ ես ուտում, որտեղ ես ապրում, ուր են երեխաներդ: Այնուհետև մի երկուսին էլ դիմեցի, բայց տեսա, որ ամենակուշտ «ընկերոջ» դիմաց կարելի է սոված ընկնել ու մեռնել՝ առանց ուշադրություն դրավելու, մինչդեռ նրանցից շատերը իմ հացն էլ էին շատ կերել, իմ փողերից էլ էին շատ ստացել...

«Այսօր» փոխված գտա միանգամայն ու տեսա, որ զուր է օգնություն սպասել «մտերիմներից», հիշեցի նախկին ընկերական ավանդույթներն ու տարիները, և սիրտս նվա՞ց ցավից...

ՄԱՆՈՒԱԳՐՈՒՑՈՒՆՆԵՐ

- 1 Միտայի Վանդույանը «22 Գաղանկացույցի պատմություն» իր գրքի 1-ին հատորում (Փարիզ, 1932), «Հայ-Ռաֆայելյան պատերազմը» գլխում (Գ բաժին), խոսելով Ղազարազում սկսված 1905—1906 թթ. հայ-Ռաֆայելյան կռիվների մասին, բերում է դեպի Ասկերան առաջ-խաղացող թուրքական զինված ուժերի ճանապարհը փակելու և տեղի ունեցած ճակատամարտի նկարագրությունը, առաջին կռիվներում աչքի ընկած մի քանի հայ քաջորդների անուններ՝ Գրիգոր Միրզաբեկյան (Մաժուն Խել), Արամայիս («Միտակ Տեր-Դանիելյան, Խանասորի մեր մտավորական զինվորներին»-Մ. Վ.) և ուրիշներ: Նրանք հասկապես աչքի ընկան Վարանդայի կողմում դիրքեր գրաված թուրքական Քնդանթները խլելու և Քնդամու հարձակումը կասեցնելու առաջադրանքը հաջող կատարելու գործում:
- 2 Ի նկատի ունի Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը. 23—29 ապրիլի, ք. Շուշի:
- 3 Շատելվորազ ապրիլի սկզբին փոխարինել էր Բաքվում գտնվող անգլիական զորամասերի հրամանատար Վ. Քոմսոնին: Նա արցախահայությանը պահանջում էր ենթարկվել Ազրբեյջանին: Նրան պատասխանելու համար էլ հրավիրվում է վերահիշյալ V համագումարը, որի աշխատանքներին մասնակցելու համար Շուշի է ժամանում Շատելվորազ:
- 4 Գնենրալ Վ. Քոմսոնի երաշխավորությամբ 1919 թ. հունվարի 15-ին Խոսրով բեկ Սուլթանովը՝ ծննդով Շուշիի Մինքեղզ գյուղից, ազգությամբ քուրդ, մասնագիտությամբ բժիշկ, մուսավաթական, նշանակվել էր Նշված գավառների գնենրալ-նահանգապետ:
- 5 Խոսքը վերաբերում է առաջին աշխարհամարտի արդյունքները ըննարկող Փարիզի կոնֆերանսին, որտեղ պետք է ըննարկվեր նաև Ղարաբաղի հարցը:
- 6 Ակնարկը վերաբերում է թուրք-Ռաֆայելյան ուխտարների հոսք Ղարաբաղի տարածքով սար բարձրանալուն:
- 7 Արցախահայության խնդրանքով, Հայաստանի կառավարության բազմիցս բողոքներից հետո անգլիական հրամանատարությունը համաձայնում է Արցախում ունենալ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ: Կապիտան Միշա Արզումանյանի (ծննդով արցախցի) հիմնական խըն-

դիրն էր օգնել սովյալ բնակչությանը, բարելավել նրանց վիճակը և ապահովել կյանքի անվտանգությունը: Խորհրդային իշխանության տարիներին Միշա Արզումանյանը աքսորվել է Միբիբ, որտեղ էլ մահացել է:

- 8 Երբ թուրք բարբարոսները 1918 թ. աշնանը ներխուժում են Արցախ, հայության ընդհանուր դիմադրությունը կազմակերպելու նպատակով անպոսեմբերին տեղի է ունենում հայ գյուղացիության III համագումարը, որի որոշմամբ Արցախի բոլոր շրջաններում ստեղծվում են զորամիավորումներ: Մրանց հրամանատարները ենթարկվում էին Ազգային խորհրդին: Գիզակի հրամանատար է նշանակվում Արտեմ Լալայանը, Վարանդայից՝ Սոկրատ Մելիք-Շահնազարյանը, Խաչնիկից՝ Ալեքսան Գային, Զիվանշիրինը՝ Բագրատ Նազարյանը:
9. 1919 թ. դեկտեմբերին Հայաստանից Արցախ են գալիս մի խումբ արցախցիներ Արտեմ Միքայելյանի ղեկավարությամբ: Նրանք ստեղծում են Արցախի լեռնային մասի հայ բնակչության ինքնապաշտպանության մարմին և սկսում զինել բնակչությանը: Այդ մարմնի շտաբը ալյալ ժամանակ գտնվում էր Գոնավարզ գյուղում (ներկայումս՝ Կարմիր գյուղ):
10. Արտեմ Շահնազյանը Հայաստանի կառավարության կողմից 1919 թ. հունվարին նշանակվում է Զանգեզուր-Ղարաբաղի կոմիտար: Նույն թվականի աշնանը նա վերադառնում է Երևան: Հետագայում, խորհրդային իշխանության օրոք, նա ձերբակալվում և աքսորվում է Միբիբ (Նովո-տուրոխանսկ), ուր և կնքում է իր մահկանացուն:
- 11 Խոսքը վերաբերում է 1919 թ. գարնանը տեղի ունեցած Զանգեզուրի գյուղացիական համագումարի ընդունած որոշմանը, ըստ որի արզելվում է թուրք-Ռաֆայելյան բաշի բարձրանալը Զանգեզուրի արտոսովայրեր: Այս առիթով առենք, որ Արցախի հայության ճակատագիրը կիսակտրոն, իր անկախությունն ու ազատությունը պաշտպանելու վճռակա-նությամբ հետ շինաց նաև Զանգեզուրը: Տակավին 1919 թ. ապրիլի սկզբին հրավիրված երկրամասի աշխատավորության ընդհանուր համագումարը վճռակախորհն մերժել էր մեկ այլ անգլիացու՝ Մակ-Մեյսիկ նման մի առաջարկությունը, որ այդ նպատակով Շուշուց եկել էր Գորիս: Համագումարի որոշումը միասնական էր ու վճռական: Ահա այն. «Հայաստանի Հանրապետության Զանգեզուր երկրամասի դեմ ուղղված ամեն մի ագրեսիվ քայլ կհանդիպի ամենահամառ ու անձնուրաց դիմադրության Զանգեզուրի ազգաբնակչության կողմից»: Նույն պատասխանին արժանացավ անգլիական գնենրալ Շատելվորազ՝ 1919-ի մայիսին Զանգեզուր կատարած երկրորդ ռադիկալությունը:
- 12 Ակնարկում է առաջին աշխարհամարտը:
- 13 Երբ թուրք բարբարոսները 1918 թ. հոկտեմբերի վերջին հեռացան Արցախից, դեկտեմբերի սկզբին այդտեղ եկավ անգլիական միսիսն:
- 14 Գրանից մի քանի օր առաջ Շատելվորազ հայտնել էր Միշա Արզումանյանին, թե իբր Հայաստանի կառավարությունը համաձայնել է Ղարա-

- բաղը զիջել Ադրբեջանին: Արզումանյանն այդ առթիվ հարցում է անում Հայաստանի կառավարությանը:
- 15 Իշխան Հովսեփ Ադրուբյանը առաջին աշխարհամարտի տարիներին կազմակերպված հայ կամավորական զինորդից մեկի հրամանատարն էր: Հետագայում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքական գործիչներից:
 - 16 1918 թ. հոկտեմբերի 18-ին, Վարանդայի Մամա գյուղի մոտ, Արցախի աշխարհազորայինները, Արտեմ Լալայանի կողմից ուղարկված Ասլան Մարութիանյանի գլխավորությամբ, շախախտում են թուրքական առաջատար ուժերին: Թուրքերից խլված երկու թնդանոթներից մեկը տարվում է Գիզակ, մյուսը՝ Հաղորդի գյուղը: Հետագայում՝ 1920-ի մարտին, այդ թնդանոթը տեղափոխվում է Քյաթուկ գյուղի մոտերքը և օգտագործվում Ասկերանի ճակատամարտում:
 - 17 Աշոտ Մելիք-Հովսեփյան — Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի անգամներին:
 - 18 1919 թ. սկզբներին անգլիական հրամանատարությունը Հեղհաստանից Արցախ է բերում զինվորական մի ջոկատ, որի զինվորները մուսուլման սիփահներ էին:
 - 19 Ստեփանակերտի մոտով Վարանդան Խաչենի հետ Կարկառ գետի վրայով կապող կամուրջ:
 - 20 Փյուզին փաշան 1905—1906 թթ. Շուշիում տեղի ունեցած հայկական կոտորածների կազմակերպիչներից էր, 1918-ին՝ թուրքերին Վարանդայի վրայով Կարյազինո (Ֆիզուլի) ուղեկցողներից և 1920-ի մարտին՝ Շուշին ավերողներից: Տակավին 1919-ի հունիսի վերջին սրա կանոնավոր զորքանակը խայտառակ պարտություն կրեց Կապանի մատույցներում՝ հակահարված ստանալով զինված հայ գյուղացիների և աշխարհազորայինների կողմից, երբ փորձում էր Զանգեզուր ներխուժել Կապանի Սղվարդ, Ագարակ, Ուժանիս, Խզրանց գյուղերի կողմից:
 - 21 Հստ հավաստի տեղեկությունների, 1915 թ. հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ էնվեր փաշան, 1919 թ. որոշ ժամանակ Քարնվի է Սուլթանովի կալվածքում:
 - 22 1905—1906 թթ. Շուշիում տեղի ունեցած հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Գեովհար աղայի տան մոտ գրված հայերի անմատչելի դիրքի մասին Արամայիսը գրել է Քիֆլիսում լույս տեսած իր «Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարումներից» գրքում:
 - 23 Ղայբալու շենը գտնվում է Շուշիից հյուսիս-արևելք, մի քանի կմ հեռավորության վրա:
 - 24 Արիսիվային մի փաստաթղթում ասված է, որ 1919 թ. հունիսի 4—5-ին Ղայբալու շենի 700 քնակիչներից կենդանի են մնացել 11 աղամարդ և 67 կին ու երեխա:
 - 25 Թուրքեն Շահնազարյանը Շուշիի քաղաքապետն էր:
 - 26 Ժ Եկատի ունի դաշնակցությանը:
- 27 Գ. Մ. Գրիգոր բեկ Միևտարեկյան — հասարակական գործիչ:
 - 28 Այդ ժամանակ Ղարաբաղում գործող հինգ քաղաքական կուսակցություններից երեքի անունը նշված չէ, չեն նշված սոցիալ-հեղափոխական (եսէներ) և սոցիալ-դեմոկրատական (մենշևիկներ) անունները: Փակագծում գրված երկու տառերը, որոնցից երկրորդը չի կարդացվում, այդ երկու կուսակցություններից որևէ մեկի անվան սկզբնատառերը պետք է լինեն:
 - 29 Տիգրան Բեկզադյանը Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչն էր Ադրբեջանում:
 - 30 Զաֆարով — Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:
 - 31 Դեռևս 1896 թ. Արամայիսը, որպես հայդուկ, Արևմտյան Հայաստան էր մեկնել Բաբու—Քիֆլիս—Երևան ուղիով:

ԲՈՎԵՆԴԵԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան	3
Անգլիական զինվորական միսիայից (պաշտոնական հազարագրություն)	13
Ղարարադի Հայության V համագումարի պատասխանը անգլիական հրամանատար Գ. Շառնիվորտին	14
Համագումարի բոլոր անդամների կողմից միաձայն ընդունված և ստորագրված բանաձևը	17
Հայկական Ղարարադի ներկայացուցիչների VI համագումարի որոշումը	22
Լեռնային Ղարարադի Հայության ժամանակավոր համաձայնությանը Ազրբեջանի կառավարության հետ	26
Առաջին տպագրություններն ազատ Հայաստանում	109
Ծանոթագրություններ	114

Խմբագիր-սրբագրիչ՝ Մ. Մ. Աբշահյան
 Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Գ. Մ. Հովհաննիսյան
 Տիխն. խմբագիր՝ Հ. Ց. Վարդանյան

ИВ 7700

Հանձնված է շարվածքի՝ 30. 08. 92 թ.: Ստորագրված է
տպագրություն՝ 30. 06. 93 թ.: Փորձատ՝ 84×108¹/₃₂:
Քուղթ տպագրական № 2: Տառատեսակ՝ «Գրքի սո-
վորական»: Տպագրություն՝ քարձր, 6,72 տպագր. մամ.:
6,93 պայմ. ներկ. թերթ, 5,29 հրատ. մամ.: Տպա-
քանակ՝ 5 000: Պատվեր՝ 927:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Իսահակ-
յան 28:

2. Մեղապարտի անվան տպագրատուն, Երևան-9,
Տերյան 91: